



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17372

891.99
U-48



ՍԻԼՈՒԱՆ

~~891.99~~

4-48

48

~~200~~

592

22


ՀԵՂԻՆԱԿ

Վ. Մ.

136

ԲԱՂԴԻ ՄԵԿ ԽԱՂԸ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՏԻԳՐԱՆ ՃԻՎԵԼԻՆԻԱՆ



2003

Կ. ՊՈՒՇ

ՏՊԱԳԻՐ. ՃԻՎԵԼԻՆԻԱՆ
1890

(1)

ՍԻԼՈՒԱՆ

ՀԵՂԻՆԱԿ

Վ. Մ.

ԲԱՂԴԻ ՄԵԿ ԽԱՂՃ

ԳԼՈՒԽ Ա.

Գ. Քաղաքի մէջ կը բնակէր մի փարմամընտանիք։ Թուր քաղաքիք խորին ակնածութեամբ կը խօսէին նորա մասին։ Աւետիս պէտքարեան առատաձեռնութեան, աղքատասիրութեան տիպար լինելով գրաւել էր հասարակութեան ուշադրութիւնը։

Հայ, Յոյն, Տաճիկ կը յարդէին նորան իբրեւ գիտնական, կատարեամարդ, մանաւանդ կայսերական կառավարութենէն հետզհետէ շնորհուած չքանչաններու, ամբողսներու շնորհիւ՝ բարձր էր հասարակութենէն։

Գասպարեանի անցեալը մթին էր։

Նա արհեստ, վաճառականութիւն կամ շահու և է շօշափելի, հաստատուն աղբիւր չունէր, սակայն հարուստ էր։

Արծաթը մագնիսական զօրութեամբ առ ինքն կը քարչէ հասարակութեան յարդանքն ու համարումը։ Գրեթէ ամէն երկրի մէջ ակնածելի է ո՛չ միայն խելանի, այլ և յիմա՛ր հարուստը Աւետիս պէտք ունէր։ Կառավարութեան բարձր պաշտօնեաններ, աղքերու ներկայացուցիչներ պէտի սերտ բարեկամներն էին

Նա խելացի, մեծ, սիրելի էր, իսկ խոշոր թերութիւններն անդամ կը ծածկուէին ոսկու շլացուցիչ գէզերու տակ։ Նա կ'իշխէր Ազգ, մարմիններուն՝ թաղական, հոգաբարձու և այլ խորհուրդներու անդամներ իւր խրտուելակներն էին։

Գասպարեան ընտանիքը կը բաղկանար չորս անհատէ, ինքը, կինը գուստը՝ Մարին, փոքրիկ որդին՝ Ստեփանիկ։

1303
39

3788

Դէյը լայն, կունտ, ճաղատ ճակատով, սուր, վառվուուն աչերով, կայտառ, գեղազէմ, հաղիւ 50 տարեկան մի մարդ էր.

Ուսումն առած էր Բարիզի նախ՝ Մուրատեան, ապա՝ Հայկազեան ուսումնարանին մէջ։ Նաեւ Տիկին Գայանէ Գասպարեան ուսեալ էր, գիտէր Հայերէն, Թրանսերէն, Անդլիերէն խիստ լաւ։ Եթէ թուլամորթ չինիր, անշուշտ 8. Տիւսափի պէս պիտի փայլէր գրականութեան մէջ։ Նա ունէր բարձր տաղանդ և արտաքոյ կարդի ձիրք։ Երեկոյթներու մէջ հիւրերը ապուշ կրթած կը հեռանային նորա մօտէն։ Խորամանկ էր, գիտէր ամէն մարդու հետ վարուելու եղանակը։

Այս ընտանիքը կարծես երկրի միակ երջանիկ գերբաստանն էր, չունէին ո՛ւ է թեթեւ վիշա, թեթեւ հոգ։ Օրիորդ Մարի 16 տարեկան կը լինէր, միայն նորա մասին մերթ ընդ մերթ կը խօսէին այր ու կին։ Կը մոտածէին նորա ապագայն միտ բերելով . . .

1874 թուի վերջերն էր։

Դէյը դահլիճի մէջ, անդլիական թիկնաթոռի մէջ օրօրուելով կը կարդար մի աղդային վէպ, երբեմն լողութեան գործարանը ուշադիր լարելով ամենաթեթեւ միմունջն իսկ լսելու համար կը թողուր կարդալը, մէկու մը սպասող մարդու պէս։ Քանի մը ժամ յետոյ ներս մտնելով օրիորդը՝ հօրը հետաքրքրութիւնը գոհացուց։

— Հայրիկ, — ասաց նա, — եկաւ նոր տեսուչը։

— Իրա՞ւ . . . , — գիրքը մի կողմ նետելով. — Կ' ըսպասէի։

— Հիմայ մեր դռնէն անցաւ։

— Դու տեսա՞ր . . .

— Այսո՛, բարձրահասակ, գոռող մազերով, գեղեցկադէմ՝ հաղիւ քը-ան տարեկան երիտասարդ մ' էր . . .

— Լաւ, ինձ ուղարկէ սպասաւորը։

Օրիորդը ժպտելով գուրս թռաւ, իսկ պէյը սկսեց ճեմել։

— Ա՛վ լինելու է, տակաւին չ' ստացայ Սրբազնի նամակը, — կը մենախօսէր պէյը. — Ունի՞ ուսում . . . ո՞ր վարժարանի մէջ է կրթուել, կարո՞ղ է տեղույս երկսեռ վարժարանները կառավարել, այս իշու գլուխ, սրիկայ վարժապետները զսպել . . .

Խորհրդածութիւնը կիսատ մնաց, մի բարձրահասակ, նիհար, գու-նատ երիտասարդ ներս մտաւ և ակնածութեամբ կանդնեցաւ պէյը ձեռները խաչաձեւ կուրծքին տարած, կամ բարեւ բռնած։

— Աւտօ՛, — ասաց պէյը, — վարժարանը գիտես եա՛։

— Գինսամ աղա՛ ջան, — սպատախաննեց Սասնցու բարբառով։

— Գնա՛ ուրեմն վարժարան . . .

— Հըմիս՝ հըյրանիմքի . . .

— Պ. Աստուածատրեանին ասա՛, նոր եկողը առնէ՛, մերը գալ . . .

— Վըր իմ աչաց, աղաջան, — ըսելով կուզէր երթալ։

— Յպասէ՛, աւանա՛կ . . .

— Կեցիրիմ՝ հըյրօ՛, իշկէ՛, հուհու չըմ ժամի . . .

— Տիկինը վարն է։

— Խըն, — կոկորդը հնչեցնելով՝ որ կը նշանակէ այս։

— Վեր, ուզարկէ՛, ըսէ՛ աղաս կուզէ։

Մինչդեռ լեռնականը դուրս կ' ենէր դահլիճէն, 8. Գայանէ զուարթ դէմքով կաճապարէր պէյի մօտ երթալ։

— Տիկին, ասաց Աւետիս պէյ դիմաւորելով նորան, — պատրաստութիւն տես՝ այս երեկոյ հիւր ունինք։

— Գիտեմ . . . բայց՝ Գասպարեան, տեսնելու արժանի հիւր, առաջին անդամ կը տեսնեմ այդպիսի հրաշագեղ երթասարդ։

— Հրաշագեղ . . .

— Աննըման՝ ըսէ՛, — հառաչելով բազմոցին վրայ ինկաւ, — Գասպարեան, ինք քսան տարեկան կայ՝ չկայ, Տիտանի հասակ, հրեշտակի դէմք, սեւ, անուշ աչեր ունի անպիտանը . . .

— Եթէ չճանաչէի քեզ, Գայանէ՛, պիտի կասկածէի։

— Խե՞նթ, — ամսւանուն ճակատը համբուրելով, — ինչե՛ր կանցնին մըտքէդ . . . ես միայն քեզ կը սիրեմ, բայց՝ գիտես որ Պէրպէրեանին պէս շեմ զլանար բարին ու գեղեցիկը գրուատել։

— Այդպէս, հէ՛, գեղեցիկ է, գիտուն է, կամ չէրքիւլէս մ' է։

— Եթէ իսելացի, պարկեշտ և հարուստ լինի . . .

— Շուտիկ, Մարին գլուխը հանես . . . այս՝ գէշ ծրագիր չէ։

— Հաւատա՛, Գասպարեան, շատ լաւ պիտի լինի . . .

— Ուրեմն՝ լաւ պատրաստութիւն տես։

— Երեկոյեան լաւ կ' ուսումնասիրեմ։ Հետք խօսելով կը կշռեմ իսելքը, գիտութիւնը, իսկ հացի ատեն՝ ուշագիր պիտի գիտեմ պատառաքաղ, գանակ գործածելու ձեւերը . . . է՛, ի՞նչ կըսես, չէ՛ կարելի մադակ, գանակ գործածելու պալիսի ընտանեաց զաւակն է, բայց և այնպէս՝ ազնուականի հով ու գրոշմ ունի անպիտանը։

— Ա՛խ սատանա՛, կիներ, որչա՛փ լաւ ծուղակներ կը լարէք։

— Երկաթը տաք կը ծեծեն, սիրելիս։

Տիկին Գայանէ գուրս ելաւ սպատուհուն հրահանդներ տալու։

Երեկոյեան մութը կը սաւառնէր, Անկիւնները ցցուած լամպարները՝ մելամաղձոտ, կիսաշէջ աստղերու պէս կը փալվէլին։ Վարժարանէն Գասպարեանի ապարանը գնացող լայնարձակ փողոցը լցուած էր բազութեամբ։

Աստուածատրեան և անծանօթ երիտասարդը՝ հետաքրքիրներուն նայուածքին ենթակայ՝ լուին կը յառաջնայիին։

8. Գասպարեան ապարանի դուռը դիմաւորեց հիւրերուն, Աստուածատրեան փեղոյրը գաւազանին միացնելով մտաւ գահին, իաչ անծանօթը գարանմամբ աչքը դրան կողմը նետելով կարծես մէկուն կ'սպասէր։ Աւտօն չկար։ Օրիորդ Մարի, ժպիտ ի շուրթ, անմիջապէս մօտեցաւ շըշէլով։

— Ի՞նչ կամենար աղնիւ պարոնը

— Ոչի՞նչ, կուզէի ուուրու մի տեղ կախել

— Ե՞ն, ներողութիւն, կարող էք ինձ տալ.

Պէտք սրտի անձկութեամբ դուռը բացեց ընդունելու ժեւնէ հիւրը՝ որ մրդէն ներս կը մտնէր։

9. Աստուածատրեան Պ. և 8. Գասպարեանները ներկայացուց, և ապա ընկերը։ Տիկինը թիկնաթու ցոյց տալով։

— Սատիք ինդքեմ, — ասաց։

— Երեւի, — դիտեց, պէյր—շատ նեղութիւն կրեցիք ճանապարհին

— Ո՛չ, — անչափ պատասխանեց նորեկը, — կառավարս մի հնաղանդ մարդէր Ուրախ եմ՝ պէյր, որ Զեզ մօտ գալու բաղդն ունեցայ։

— Ե՞ր պարտքն ու սովորութիւնն է միշտ ձեզպէմները հրաւիրել, հրասիրել։ Միթէ անպատճառ տեսնելո՞ւ էիք

— Այո՛

— Եւու ոտքի ենելով, — ինդքեմ ինձ հետեւիլ

Անծանօթը Գասպարեանին հետեւեցաւ, մտան դահլիճի կըշտի սենեակը, ուր Օրիորդ Մարի մազերը կը կոկէր հայելիք առաջ նստած։ անծանօթը մարելուն պէս ամօթխածութեամբ ոտքի ելաւ։

— Դրանիկ դուստրս, — ներկայացուց Գասպարեան, — Օրիորդ Մարի գայուղան, — ապա անծանօթը ցոյց տալով աղջկան, — Օրիորդ, պարոնը կովկասի է, ներսէս Սահառունի

Մարի ժպտելով սեղմեց երիտասարդի ձեռը։

Գասպարեան միջոց չը տուեց խօսելու, ակնարկով հրամայեց դուրս Մարի հնաղանդեցաւ։ Երբ առանձին մնացին, Ներսէս, — ասաց նա, — միայն ենք, խօսեցէք։

Ներսէս, — ասաց նա, — միայն ենք, խօսեցէք։ սելիքս քիչ է, — ծոցէն մի նամակ հանելով, — Ն. Արքալնութիւն եմութեան կը գրէ։

— Ետ լաւ, — մրմռաց պէյր, և պահարանը պատուելով, կարդաց հեր։

— Եւ պէյր

10. Վարչութիւնն ստացաւ այն հանրագութեան, որով կամրա-

տանուէր տեղւոյդ վարժարանաց Տեսուչ, Աստուածատրեան էֆէնտի իբր գինեմոլ, անկրօն և այլն, և իբր անյարմար անձն տեսչական և ուսուցչական նութիրական պաշտօններուն։

«Վարչութիւնն խորին ցաւ զգաց նորա նկատմամբ, որովհետեւ՝ պաշտօնի սրբութիւնը կը պահանջէր այդ թերութեանց հակառակ բարեմասնութեամբ օժտեալ տեսնել զինքն։

«Արդ, Քաղ. ժողովի մէջ այս տիսուր խնդիր քննուելով՝ որոշուեցաւ նորա պաշտօնանկութիւնն ի տեսչութենէ։ Ուստի աղատ էք զայն պահէլ իբր պարզ դասատու կամ թոշակի մնացորդը վճարելով հեռացնել լուելեան՝ որպէս զի իւր կուսակիցները խուզութիւն չյարուցանեն։

«Տեղւոյդ Պատ. Թաղ. խորհրդոյ Ատենապետ և անդամ դատական ատենին կառավարութեան՝ Մեծ Զաքար էֆ. լսելով Քաղ. ժողովի որոշումը, խնդրեց մի ուսումնական անձ ի տեղի Պ. Աստուածատրեանի։

«Խորհեցանք մեր վարժարանի յաջողակ դասատուներէն մին առաքել, բայց նա լսելով Պ. Ներսէս Սահառունի գիտնական երիտասարդի մեծ հոչակը, որ առաջնորդարանս հիւր էր, յատկապէս զայն խնդրեց։

«Արդ, թէպէտ չէր վայլեր Պ. Ն. Սահառունի գիտնականին պէս մէկուն տալ այդ աննշան քաղաքի վարժարանաց տեսչութիւնն, այսու ամենայնիւ առժամանակնեա կերպով որոշեցինք ուղարկել ամսական եօթ Յամ լիրայ թոշակով։

«Պ. Ներսէս ուսումնա առած է թ. Ն. Դ. մէջ, ապա մտեր է Գերմանական Համալսարան, աւարտեր է Պատմական, Մանկավարժական և Հոգեբանական մասնաճիւղերը մի փայլուն զարդ հանդիսանալով Հայոց գրական աշխարհին։ Համալսարանէն անուան ստանալէն յետոյ՝ մի տարի ի վենեատիկ աշակերտել է Հ. Հ. Մխիթարեանց՝ հիմնապէս ուսանելով Հայ լեզուն։

«Այսպիսի ներկուու անհատներ կարող են բարեկարգել վարժարաններ, հիմնական կրթութիւն և դաստիարակութիւն տալ մատաղ մանկանց։

«Վարչութիւնն և Զեր առաջնորդը լիայուս են՝ թէ յոյժ գոհ պիտի լինիք նորա ուղղութենէն և որ ամենամեծ բանն է իւր օքինակելի վարք ու բարքէն։

«Նամակս պաշտօնական չէ, այսու ամենայնիւ ներկայացուցէք Աղո. թաղականութեան։ Խոկ յաջորդ թղթաբերով կ'ստանաք պաշտօնական սամակ Պատ. Վարչութիւնէն խմբագրուած։

«Առ այժմ խնդիրը պահէցէք Աստուածատրեան կուսակցութենէն մինչեւ Զաքար էֆ. ժամանումը և բարեհաճեցէք զներսէս ձեր տան մէջ

Հիւրընկալել մինչեւ ց' առաքումն պաշտօնագրին։
«Այսպէս նկատեցէք՝ թէ ասպնջական կը լինիք
«Չեր բարեկամ Վահան Արքեպիսկոպոսին։
Առաջնորդին Ե ի Վիճակին։»

— Ինչպէս կերեւի, և այս՝ Սահառունի, — ժպտելով դիտեց պէյը գո՞հ դէմքով, — Նորին Սրբազնութեան սիրելագոյն բարեկամներէն, ըստ դաղ-դիական առածին, և իմ բարեկամներէն էք։

— Նորին Սրբազնութիւն թէ գուք, Վասեմաշուք Տէր, — պատասխա-նեց Ներսէս ամօթխած աղջկայ երկշոտութեամբ, — Չեր սիրելի լինելը կապացուցանէք։ Չեր տուած գովեստը կընդունիմ իւր խրախոյս . . .

— Ուրիշ տեղ պաշտօն վարած էք, սիրելի՝ պարոն։

— Ո՛չ . . . տակաւին անդորձ եմ . . .

— Ո՞ր Համալսարանն էիք։

— Նախ՝ Դօրպատի, ապա Լալպցիկի, Բէռլինի . . .

— Ո՛հ, շատ ուրախ եմ, Պ. դիտնական, երջանիկ ևն քաղաքիս մա-նուկները . . . Տաճկաստանի մէջ Չեղ պէս ուսեալներ հազուագիւտ են, ուսման զէկը անվարժ ձեռներու մէջ կը փշրի . . .

Աստուածատրեան կասկածեցաւ : Զայրութէն կ' եռար թիկնաթոռի մէջ, երբեմն աշերը Մարիին սեւեռելով կարծես վագրի պէս կուզէր յօշոտել, հօրը վրէժը անպարտակիր օրիորդէն լուծել, իսկ Տ. Գասպարեան զբա-ղած էր փոքրիկ Ստեփանիկով՝ որ թուչնիկի պէս կը ճլվար մօրն ական-ջին տակ . . .

Մի ժամ յետոյ, պէյը Ներսէս թեւն առած մոտաւ Ներս։

Գլուխ Բ.

— Մարի՛, — ասաց պէյը աղջիկան, — օղի կամ կօնեակ պատրաստէ՝ զա-ւակս, կարելի է մեզ մասնակցի և Պ. Սահառունի։

— Պատրաստ է, — պատասխանեց Օրիորդը շիկնելով, — եթէ կամենաք ես անձամբ մատակարարեմ . . .

— Ո՛չ, — ընդմիջեց պէյը, — պարոնները լուսաւեալ մարդիկ են, կարող են իրենց ժառայել։

Մի ժամու չափ խմել, խօսելէ յետոյ ելան սեղանատուն՝ որ ապարա-նի ներքնայարկն էր, Տ. Գասպարեան Ներսէսը հրաւիրեց իւր և ամուս-նի մէջ տեղը գրուած աթոռը բազմելու, իսկ Աստուածատրեան՝ օրիոր-դի գէմը բազմեցաւ։

Տիկինը գողունի նայուածքով կը քննէր նորեկի ձեւերը, շարժումնե-

այ .

որ

ա-

փ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

բ

ըը՝ ինչպէս կանխաւ պէյին ըսած էր, մերթ ընդ մերթ զարմացական հայեացք նետելով ամուսնին, որ ըսել կամենար՝ այս մարդը իշխանի պէս կուտէ . . .

Դեռ ընթրիքը չաւարտած՝ երկու մարդ ներս մտան։

Որովհետեւ կը խօսէին Տաճկերէն, այդ պատճառաւ հարցուց ներ-սէս . . .

— Այլազգի են, Վսեմաշուք Տէ՛ր . . .

— Ո՛չ, Հայ են, — պատասխանեց պէյը, — թէպէտ հասարակ, բայց եր-կում էլ խիստ խելացի մարդիկ էին, դոքա են այս քաղաքի գլխաւոր խառնակիչները, կը տեսնե՞ս այդ ծերուկը, հասարակ սպիրիչ մ'է, Հայե-րէն կարդալ, գրել, խօսել չիտեէ . չը նայելով իւր արտաքին երեւոյթին և առաջ է բառին ընդարձակ նշանակութեամբ։ Լաւ քննէ՛ նորա ընկերը, երիտասարդը, ծերուկին կը գերազանցէ, գորա հոգին կարծես գաղտ-նեաց հոսեր կ'առնէ, կասքօնի պէս կասկածոտ, շան պէս հոտով գոյնեւ տիրասէր, վրէժինդիր, անվեհեր է։ Մին միւսը կը գերազանցէ, իրաւ-մէ խորամանկ, ճարպիկ լինելով սերտ բարեկամներ են դարձած։

Ներսէս՝ իրը խտրադիմայ, սկսեց քննել նոցա գէմքերը։

Երկում այլ գէր, միջահասակ էին, մին միւսին բեկորն էր։ Բայց ծերը յորենամորթ՝ երիտասարդը կարմրագեղ, ծերը խորշումած, թար-շամած, երիտասարդը առոյդ, ճկուն և ուշագրաւ, առաջնինը՝ լայն պըն-չերով վուօնցելի քիթ, լայն ճակատ, խորամուխ, սուր աշեր, իսկ եկ-րորդը՝ սուր, բարակ քիթ, պայծառ ճակատ, վառվուռն աշեր, ծերը հանճարեղի, երիտասարդը քննադատի գէմք ունէր . . .

Ծեր սափրիչը պէյին ականջէն հարցուց . . . Ո՞ն է . . .

— Ո՞ն, — պատասխանեց Գասպարեան՝ մօի շերտը կլլելով, — բայց Չե-տեսածներէն չէ, թակովք աղա՝, այս քաղաքը գուցէ ունեցած չէ իւ-լէսունու վարժապետ, անանկ չէ մի եա' . . .

— Իրաւ է. Տաճկերէն ալ դիտէ՞ . . .

— Հայ, Պ. Ներսէս, — հարցուց Գասպարեան բարձր ձայնով, — Տաճկ-երէն ալ դիտե՞ս . . .

— Ո՛չ, — պատասխանեց Ներսէս երկար խորհելէ յետոյ — չգիտեմ . . .

— Ուրեմն՝ գործդ դժուարացաւ, Տաճկերէն գիտնալու ես՝ գէթ խօ-սիլ, որովհետեւ մեր աշակերտները Հայերէն չգիտեն . . .

Պ. Աստուածատրեան ցնցուեցաւ։ Գաղտնիքը իմացաւ, Ներսէս ու-սուցի՛ էր, գուցէ ուսուցչապետ էր։ Սիրալ ուժգին բաղխեց, այլալե-ցաւ։ այսու հանդերձ ձայնին դողդողալը զսպելով, մօտեցաւ նորա ա-կանջին, փսփաց . . .

— Հէ՛, հէ՛, պաշտօնակի՞ց էք .

— Այո՛ :
 — Ուսուցի՛չ թէ...
 — Ուսուցիչ .
 — Այստեղ պիտի մնաք ...
 — Կարելի է .
 — Եռտիկ, լաւ տեսուչ մը պիտի ունենաս ... իմ վարժապետներս
 բնձմէ շատ դոհ են ... խօսէ՛ նայինք, ո՞ր տեղ ուսում առար .
 — Հապա ի՞նչպէս ընենք, Պ. Ներսէս, — հարցը կը կնեց պէյը, — դուք՝
 Տաճկերէն, սաները՝ Հայերէն խօսիլ չփիտեն .
 — Կը սովորեցնեմ, դրանից դիւրին ի՞նչ կայ .
 — Այս քաղաքի մէջ կարելի չէ, — մէջ ընկաւ Աստուածատրեան իւր
 ըսելիքէն գոհ դէմքով, — ես այնշափ աշխատեցայ ...
 — Մէ առաջ, — ընդմիջեց երիտասարդը զայրոյթը սիրաը մղելով,
 իւր երկրացուց աղճատուած լեզուաւ, — մենք կը խօսինք ուղածնուս պէս :
 Դու մեր չօճուխներուն անաստուածութիւն կը սովորեցնես տըր, նասը ՞
 կը լայ քի հայճա չեն սորփի ... ապա ներսէսին դառնալով, — մենք իմա-
 ցանք ... աղլոր մը չիյտեմ համմալ. նասը ՞, սըտեղ պիտոր մնան մի .
 — Յայտնի չէ սիրելի՝ բ-բերէն, — ընդմիջեց Գասպարեան, ապա խօսքը
 ներսէսին ուղղելով — այս չուառականին անունը Ստեփան է՝ բ-բերէն կը-
 սենք, վերջը կը պատմեմ՝ թէ ինչո՞ւ այդպէս կ'անուանենք :
 — Պ. Ներսէս տունդ պիտոր պառկի, էլլէ ...
 — Այո՛, բարեկրօնս, պարոնը իմ սիրական հիւրս է :
 — Տեսչարան պիտոր չերթա՞յ մի :
 — Ո՛չ ... այն տեղ գործ չունի ...
 — Ես ալ ո՞չ կը սեմ տըր, — խորամանկ ժպիտով, — մենք իմացած ենք՝
 օր մեզի համար է եկած ... պէտք է դպրոցը մնա՛ս :
 — Լաւ : Վերջը կը խօսինք այդ մասին .
 — Վերջ մերջ եօք՝ ուղարկուած ուղարկուած ...
 Պէյը երկու խառնակիչներն առնելով դահլիճ մտաւ, իսկ Ներսէս և
 Աստուածատրեան մնացին տիկնոջ մօտ .
 — Պարո՛ն, — հարցուց Ներսէս դաշն ձայնով, — ձեր մասին ինչո՞ւ նը-
 պաստառը կարծիք չունին .
 — Ինչո՞ւ մարդիկ նախապաշարուած են, — պօռաց Աստուածատրեան .
 — Մի մարդ չէ կարսող ընդհանուրին սիրելի լինել, — մէջ մտաւ տիկի-
 նը, — Պ. Աստուածատրեան գէշ չէ ... բայց ժողովուրդն ալ լաւ ըրսեր :
 — Կրո՞ղ, լիրբը, — մը մուաց Մարի Ներսէսին նայելով :
 — Ներեցէ՛ք, Տիկին, — ասաց Ներսէս, — թէպէտ Պ. Աստուածատրեանի
 պատմութիւնը լսել եմ, նոյն իսկ իրանից հասկնալու համար հարցրի :
 Անտարակոյս, — մի անհատ չէ կարող ընդհանուրին սիրելի լինել, բայց և

այնպէս ատելի գառնալու համար հարկաւոր են բանաւոր, այլ խօսքով,
 չօշափելի պատճառներ ... Առանց պատճառի ոչինչ չկայ, ասումէ Յոյն
 իմաստասէրը : Հետեւապէս պատճառներ կան .

— Պարո՛ն, պարո՞ն, — ոռնաց Աստուածատրեան, — փորձը պիտի լուծէ
 այդ հարցը . տակաւին նոր էք, սպասեցէք ... տեսա՞ք այն երկու ողոր-
 մելիները, նոքա շա՛տ խաղեր պիտի խաղան և Զեր գլխուն, պիտի զրբ-
 պարտեն՝ ինչպէս .

— Կը մնանչէ՛ք, Պ. Աստուածատրեան, — միջամտեց տիկինը յօնքը
 պաստելով, — զրպարտութիւն չէր, այլ՝ իրականութիւն ... կուրանա՞ք .
 — Բայց և այնպէս ...

— Ներսւմն, պարո՞ն, ինձ չես կարող պատրել :

— Իմ աչքին կատարեալ մարդիկ էին երեւում, — ասաց Ներսէս :

— Վերջը կիմանաք ոչ կատարեալ լինելուրը .
 Սպասաւորը գալով հրաւիրեց ի դահլիճ :

Տիկինը կառաջնորդէր՝ որուն կը հետեւէր Պ. Աստուածատրեան, իսկ
 Ներսէս մտախոն՝ օրիորդի հետ կերթար : Մարի շնորհալի ձեւերով կը
 յայտնէր իւր խոր յարդանաց հաւաստիքը : Կը խօսէին տարրեր խնդեր-
 ներու վրայ : Բարեկրօն գոհ դէմքով կը ծխէր : Սափրիչը կը քննէր ներ-
 սէսը, Մարի վերջինին համար բերեց մի թիկնաթոռ և մի աթոռ էլ ինքն
 առնելով նստեցաւ նորա մօտ :

— Մարի՛, աղջիկս, — հրամայեց Գասպարեան, — մի՛ նստիր, գնա՛ երդա-
 բանդ բեր, կ'երեւի թէ Պ. Ներսէս լաւ ձայն ունի, կարող է մասնակ-
 ցիլ քեզ ...

— Մարի անմիջապէս վեր ելաւ, բերեց երդարանը, պատրաստեց դաշ-
 նակը, Ներսէսը նուագելու հրաւիրելով :

— Անչուշտ կարող էք նուագել ... ես նոր կուսանիմ ...

— Ոչ այնքան լաւ, — պատախանեց պաղաքիւն երիտասարդը դաշ-
 նակի առաջ նուագելով, — ապա՛, օրիո՞րդ, ի՞նչ կամենաք նուագել ...

— Դուք ընտրեցէ՛ք, աղնիւ պարոն, ահաւասիկ երդարանը, այս եր-
 գերէն միոյն եղանակը կարող էք նուագել :

Երդարանը հաւաքածու էր սիրահարական երդ երու, մեծաւ մասամբ
 Ներսէսին անձանօթ :

— Եթէ կամենաք, — կանխեց օրիորդը, — երդենք Դամառ-Քաթիպայի
 Դու տեսել ես երկնքումը ... երդը, որ ի հարկէ ծանօթ է ձեզ .

— Լաւ ուրեմն, սկսեցէք խնդրեմ :

Ներսէս սկսեց նուագել վարժ մատներով և մերթ ձայնակցիլ օրիոր-
 դին : Պէյը սխալուած չէր : Ներսէս հիանալի ձայն ունէր : Տիկ . Գաս-
 պարեան քամակը լամպարին առած, դէմքը ստուերի մէջ՝ կը զննէր
 Ներսէսը ստքէն ցոլուխ :

— Ամենեւին , իմ պարտքս է , — ապա աղջիկան դառնալով՝ Մարի , հրամայե՛ սպասուհուն , ծառային ; թո՛ղ քո ննջարանի կից սեն- շաւակն , հրամայե՛ սպասուհուն , ծառային ; թո՛ղ քո ննջարանի կից սեն- շաւակը տանին պարոնի գոյքը . . . և մահակալի վրայ իւր անկողինը պար- զեն :

Մարի դուրս ելաւ :

Պէյը արդէն կը մրափէր բազմոցի վերայ :

Տիկինը առաջնորդեց ներսէսին :

Դահլիճէն , մի քանի սենեակներէ անցնելէ յետոյ՝ մտան ննջարան , որ մի պարզ , մաքուր , փոքրիկ սենեակ էր :

Մառաներ արկղերը , անկողինը բերին , Մարի իւր իսկ ձեռօք սկսեց շերիտները քակել , անկողինը փռել , ներսէս նկատեց այս :

— Օրիո՛րդ , նեղութիւն մի՛ կրէք . . . թո՛ղ սպասուհիները փռեն :

— Հոդ չէ . Ոչ ոք չէ կարող ինձ պէս պատրաստել . . .

Մայրը օրիորդի ջերմ հիւրասիրութենէն կասկածելով՝ « մաքին մէջ բան մունի . . . ըսաց :

Պ . Ներսէս արկղէն հանեց մի ձեռք ընտիր ճերժակեղէն և մի գորշա- գոյն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ : Տիկին Գասպարեան հպարտու- թիւն , զարդարուն , շքեղ գիշերազգ եստ :

ԳԼՈՒԽ Գ .

Պ . Ներսէս մինչեւ Զաքար էֆ . ի գալուստը դպրոցէն հետի մնաց , Գատ- տոսպարեանի տան մէջ բնակեցաւ : Ժողովուրդը գրդուստած էր , Աստ- ուածուրեանի մասին կը շրջէին զանազան չարաշուք խօսքեր . Խռովու- թիւնը երթալով կը շտանար :

Կարծեմ պէտք է երկու խօսքով ծանօթացնել Գ . Քաղաքը :

Նա կը բաղկանար 7,000 ընտանիքէ , որոյ 4500 Տաճիկ , 2000 Յոյն , 500 էլ Հայ էին . Քաղաքը շնուռած էր Լերանց ստորոտը , լայնածաւալ դաշտի հարաւային անկիւնը մի բարձրաւանդակ տեղ , չորս կողմը լի էին այգիներ , գարնան ամիսներուն նարնջի , փորթուգալի , լիմոնի ծառ եր- կը բանային իրենց ծաղիկները . Հրապուրիչ էր այն պատմական հին եր-

կիրը , կլիմայն առողջարար , ջրերը քաղցրահամ , երկիրն արգասաւոր , ժողովուրդը փարթամ , անդորր : Հաճիկ եղբօր պէս սիրով , իրարու հետ հաշտ , կառավարութիւնը իւր լուծը կը քաղցրացնէր դարեւոր հը- պատակներուն ի դիւրութիւն : Մի խօսքով միակ սիրելի երկիրն էր նա- եւրոպիոյ դրան առաջ ամէն ազդաց :

Ամառ , ձմեռ՝ երեկոյեան ժամը ութին՝ երբեմն դից վեհավայր ահար- կու լերան ստուերը կը ծածկէր Գ . և հինաւուրց բերդի մուայլ , սրա- ւէտ՝ կիսովին կանգուն աշտարակները , մեհեաններու կիսափուլ պատե- րըն կը նկարուէին հմայքով լի պարզ երկնից ճակատը : Քաղաքացին սո- վորաբար , ամէն օր , կը թողնէ իւր գործը , վաճառական , արհեստաւոր , քահանայ , ուսուցիչ , ծեր , մանուկ կը հեռանան իրենց գործատեղերէն , խումբ խումբ կը բազմին այդիներու մէջ պարպելու ժամանելի գաւաթնե- րը , երգելու շատիներ , ունիներ և ողբանուագ ըշեւլը : Կարծես նախախ- նամութիւնն էլ սովորութիւն ըրած լինի , ամէն օր , ժամը ութին թող- նել հիւսիսային անուշակ հովը մրգաւետ այգեաց մէջ կոծելու :

Երկրի ժողովուրդը քաջառողջ , բարեկազմ և գեղանի է ընդհանրա- պէս : Հոգեկան կարողութիւնները սուր , լարուած , զգացումները զար- գացած է նոցա : Գ . Քաղաքացին դիտէ ըստ արժանւոյն լարդել յարդե- լին , արհամարհել արհամարհելին : Ահա այս ժողովուրդի մէջ պիտի ապ- րէր ներսէս :

Աստուածատրեան 450 ընտանիքի ատելի , 50ի միայն սիրելի էր :

Վերջիններս հարուստ , իրենք իրենց լուսաւոր համարելով կուզէին վարչական ղէկը իրենց ձեռաց մէջ ունենալ , ժողովուրդը ճնշել հի- նաւուրց միապետական մեռեալ օրէնքով , եղծանել Սահմանադրու- թիւնն միմիայն իրենց եռը փառաւորելու համար . Ուստի Աստուածատրե- րեան չէր իրենց սիրածը , այլ իրենց ուզածը ընելու գործիք դառնա- լու դժբաղդն էր իսեղճ տղան :

Ամէն ժողովուրդ իւր մենտօրէն կը պահանջէ կատարելութիւն՝ որչափ էլ ինք այլանդակ լինի : Կը պահանջէ միստիքական զսպեալ առաքինու- թիւն , որչափ էլ ինք լինի վատշուէր : Վարժապետա , առաջնորդ , քահա- նայ պէտք է շա՞տ զգոյշ լինին այսպիսի փոքրիկ քաղաքներու մէջ ուր ա- մեն անհատ կը ճանաչէ իւր բոլոր քաղաքացին : Մի դոյզն յանցանք կորո- չէ տապալել , բարոյապէս ջնջել հեղինակութիւնը , սպաննել նոցա պա- տիւն ու վարկը ամենայն դիւրութեամբ : Այսպիսի բարոյական անկմամբ ինքնասպան էր եղած Պ . Աստուածատրեան :

Այս իղծալի տղան խոռվարար , քսու , անբարոյական , գինեմուլ , ան- կրօնութիւն քարողող մի տեսակ տխմար էր : Ժողովուրդը նկատեց : Հաս- տատուեցան վերադրուած ամբաստանութիւնք , բայց ինք հպարտ , վէս

լինելով աղմամարհեց բարեկամներու խորհուրդը, անուղղայ մնաց իւր ցաւալի ընթացքին մէջ։

Դիւրագրդիռ ժողովուրդը ցնցուեցաւ, զայրոյթը եռաց նորա զանա-
զան խաւերուն մէջ, ոտքի ելաւ հալածելու, ժողովրդի թշնամին գրկեց
հալածեալները, պառակտում, կուսակցութիւն առաջ եկան։

Ահա՛ այս ժողովրդի մէջ ընկաւ և Ներսէս անգիտակցաբար յանձն
առնելով ծեսչութիւն։ Աստուածատրեան զգալուն պէս սկսեց դաւա-
ճանել, անուանարկել ի զուր։

Պ. Աստուածատրեանի անցեալն անմիտթար էր։ Մի անգամ տեմնող
փորձառու մարդը կարող էր մակաբերել մեր ստորեւ ըսածները։

Միջահասակ, հիւանդուս, աչերը կարճատես, ցաւոտ, գունտ, ծայրը
տպեցօրէն վեր ցցուած՝ ի նշան յիմարութեան՝ մի այլանդակ քիթ ու-
նէր, լանեզր բերան, սեւ, ոլորուած, տգեղ մօրուք Պ. Աստուածատրը-
եանի դէմքը կը ծրագրէին։

Նորա աղքատ, անխնամ մնալուն համար՝ իւր հայրենակիցները ու-
ղարկել էին ազգային մի բարձրագոյն ուսումնարան։ Տակաւին լսարան
չի մտած, մերկացաւ իւր դիմակը՝ անյիշելի պատճառներով, առանց վր-
կալագրի ծեսչութիւնը յանձնեց ոստիկանութեան, կառավարութեան
հրամանով արտաքսուեցաւ իւր հայրենիքն թ։ Մի քանի ամիս խեղճ,
աղքատ մնաց, ապա չնորհիւ վահան արքեպիսկոպոսի, որմէն խնդրել
էր իւր ազգական քահանան, ուղարկուեցաւ Գ. քաղաք իբրեւ ծնօրէն-
Դասատու Ս.զգ. վարժարանին։

Վերջապէս՝ Աստուածատրեանի էութիւնը լսւ հասկցուեցաւ։

Եթէ հարցնելու լինի մէկը նորա մասին, այսպէս կը ներկայէ ժողո-
վուրդը, «ինքնագով, արձենքոտ, ստախօս, խուզաբար, քսու, ապե-
րախտ, մի խօսքով մարմնացած չարութիւնն է Պ. Աստուածատրեան, և
որ աւելին է, գող է, նա գողացաւ մեր սուրբ տաճարին դարեւոր բուր-
ուտառ՝ որ ականակուռ, արձաթեայ էր, ...»

Բայց ըստ իս՝ յոռեատես, զրաբան լինելուն համար՝ տալու էր նաեւ
Չոյիկ անունը . . .

Զաքար էֆ. գալուն պէս՝ ժողով կազմեց, թաղականութիւնը հետեւ-

Քարի գրեց ուսումնահոգաբարձութեան։

«Ժողովրդի հանրագրութիւնը յարգուելով Ազգ. վարչութեան կող-
մէ վճռուած է Պ. Աստուածատրեանի պաշտօնանկութիւնը։

«Ազգ. թաղականութիւնս սոյն երկտողով կազմաբարէ Պատ. Հոգա-
բարձութեան այսօր եւեթ պաշտօնանկել զԱստուածատրեան ծնօրէնու-
թենէ և հրաւիրել զՊ. Ներսէս Սահառունի յիշեալ փափուկ պաշտօնները
վարելու . . .»

«Ի դիմաց Թաղ. խորհրդոյ
Ասենագալպիր Ասենագետ
Զաքար . . .»

Նիստէն անմիջապէս յետոյ՝ Զաքար էֆ. պէի մօտ գնաց, Ներսէս և
Գասպարեան թէյ կը խմէին երբ նա ժպտելով ներս մտաւ։

—Հա՛, բարով, —մրմնաց պէյը էֆէնտիփ ձեռը սեղմելով, —ե՞րբ ե.
կար, ինչո՞ւ իմաց չը տուիր՝ որ ընդառաջ դայի։

—Այս գիշեր եկայ, —ըսաւ նստելով։

—Ե՛, ինչպէ՞ս, ողջ առո՞ջ ես . . .

—Նատ լաւ, քէֆդ կը հարցնեմ, —Ներսէսի ձեռը սեղմելով, —դուք
ինչպէ՞ս, լաւ է՞ք, Ներսէս էֆէնտի . . .

—Լաւ եմ. Շնորհաւորում եմ Ձեր անվտանգ ժամանումը.

—Գոհութիւնն Աստուծոյ, եկայ և կարգադրեցի Աստուածատրեանի
խնդիրը. Պաշտօնանկ եղաւ. Վաղը եւեթ հաճեցէք հաստատուիլ ծեսչա-
րանը, որպէս զի՝ չը նշմարուի ձեր բացակայութիւնը . . .

—Պաշտօնական հրաւիրագիր գրեցէ՞ք, —ըսաց պէյը, —Պ. Ներսէս ա-
ռաջնակարգ ուսուցիչ է. կը յուսամ թէ ազգային մանկտին ընդ հովան-
եաւ բարեխնամ կառավարութեան, ձեռամբ Պ. Սահառունիի լաւ պիտի
դաստիարակուի. Երէկ Վսեմ. կուսակալ շատ դոհ եղաւ վարժարանները
Պ. Ներսէսին յանձնուելուն, Ներսէս ներկայացաւ ն. Վսեմութեան և
լաւ ընդունուեցաւ։

—Անշուշտ պաշտօնագրով պիտի հրաւիրուի. Եթէ գիտնաս, պէյ, թէ
որչա՞փ նեղութիւն կրեցի. Է՛, ըսէ՛, զոհ պիտի չլինի՞ս. Տասն անդամ
առաջնորդարան գնացի, միջնորդներ գտայ, հազիւ յաջողեցալ համոզել
Սրբազնը Ներսէսը (մեղ տալու, —Ներսէսին դառնալով, —էֆէնտի,
Սրբազնը շատ կը սիրէ Զեզ, քանի՛ անդամ յանձնարարեց ինձ ձեզ լաւ
նայելու համար, ձեզ հսկելու համար։

—Գիտեմ, երախտապարտ եմն. Սրբազնութեան .

Ներսէս դուշակելով՝ որ առանձին խօսիլ կուզեն, դուրս ելաւ. Երբ
առանձին մնացին՝ ասաց Զաքար էֆէնտին.

—Գասպարեան, շատ բաղդաւոր ենք, լսեցի՞ր, համալսարանական է
մեր Պ. Սահառունին։

—Այս, թող համալսարանական լինելով՝ խիստ ազնիւ, պարկեշտ, հե-
զահոդի, խոնարհ երիտասարդ է, քսան օր է՝ տանս մէջ կը բնակի, Տի-
կինը զարմացած է, հազար անդամ ըսաւ, ապէյ, այսպիսի ուսուցիչ տե-
սած չեմ. . . Է՛, դու այս ասա, ինչպէ՞ս յաջողեցար եօթ ոսկով բերել.
—Պատմութիւնը երկար է, յետոյ. . . Թաղաքի մէջ խոռվութիւն չը
ժագի՞. կ'երեւի մի բան կայ՝ որ Աստուածատրեան պաշտօնագիրը ըն-
գունելէ վերջ ըսել է, առեսնե՞նք։

—Անտարակոյս պիտի ծագի։

—Ուրեմն . . .

— Եթէ ինձ լսէք, էֆէնտի՛, կարելի է խոռվութիւնը մարել.

— Լաւ, ի՞նչ ընելու է:

— Կարսղէք սափրիչը, բարեկրօնը համոզել՝ որ երկուսը միասին պահանձման համար պահանձման առաջման միջնորդ է Աստուածատրեանը: Ըստ իս՝ պէտք է Աստուածատրեանը պահանձման համար առաջման միջնորդ է Սուտուածատրեանը պահանձման պահանձման առաջման միջնորդ է Համոդուեցէք, Աստուածատրեանը պահանձման առաջման միջնորդ է Համոդուեցէք:

— Բայց Ներսէս խեղճ կերեւի:

— Այս, ճշմարիտ է, խեղճ կերեւի. Մեծ ձիբքի, հանճարի տիպար՝ Ներ միշտ այդպէս կը լինին, ամօթխած, վարանոտ, բայց՝ երկաթի կամք, անհուն հանճար այդպիսին երու մէջ որոնելու է: Զլինի թէ խարուիս շնէ, պերճ, ակնոցաւոր գոռոզներէ, ինծի պէս դատարկ է նոցա գլուխը: Արդարեւ՝ պատղատու ծառը միշտ գլուխը խոնարհ կը պահէ... . Ներսէս խոնարհ է:

— Վա՛յ թէ չյաջողինք:

— Գոնէ երեք ամիս պահուելու է այս վատը խոռվութեան առաջքն գուռակու համար է: Ես քանի մ'անդամ խօսեցայ բարեկրօնին, դժուար չէ համոզել:

— Եթէ համոզուի կը վերջանալ լինդիբը:

— Անտարակոյս:

— Ուրեմն՝ պէջ, դու կանչէ Աստուածատրեանը քովդ, խրատէ, յոր գորէ, եթէ կը խոստանայ խաղաղութեամբ մնալ, թող մնալ, ապա թէ ոչ հաշիւը մաքրենք, երթա՛քարով:

Զաքար էֆէնտի պէջի ձեռքը սեղմելով հեռացաւ:

Եֆէնտի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր: Այս մի կը այսպիսի հեռացած ատեն՝ Ներսէս գաւաճի մէջ կը ճեմէր:

— Կասպարեան նշմարել էր այս միջադէպը:

Մի ժամ յետոյ Ներսէս՝ պէջի թեւը մոած կերթար դէպի շուկան, Գասպարեան բացեց իւր անցեալը նորան:

Պատմեց թէ ինք բնիկ թէոտոփիացի է, հպատակութիւնը փախել էր 25 տարի առաջ, թէ ինք միշտ սիրուած էր հասարակութենէն. ինչպէս կը տեսնես, — շարունակեց նա, —ո՛չ հարուստ և ոչ աղքատ մէկն եմ, հազիւ 30-40,000 լիրայի տէր եմ. այս ամէնը մնացած է լուսահոգի եղբօրմէս՝ որ ուստական զօրապետ էր և մեռաւ 1853 թւանին ի Սեւաստարօլ: Թէպէտ հարուստ չեմ համարուիր կ. Պօլսայ, Զմիւռնիոյ հարուստներուն մօտ, բայց՝ գաւառացիք զիս մեծ հարուստ կանուանեն: Հարուստը կը տիրէ ժողովրդին: Սոքա բոլորը իմ հրամանիս կը հնազանդին: Լաւ կուտեմ, լաւ կապրիմ, բայց՝ երջանկութիւնս կատարեալ չէ. զաւակներըս կը մեծնան, դաստիարակուած չեն, աղջիկս, Մարին հասակս առաւ. պէտք է լաւ երիտասարդի մը հետ ամուսնացնել, նոցա ապադայն բարւոքել... . Այս քաղաքին մէջ արժանի երիտասարդ չկայ... . ահա՛ ոոքա են իմ մտածման առարկաները: Նատ դոհեմ եմ որ դու եկար, որ բարեկամ մ'ես, քեզի պիտի յանձնեմ նորա կրթութեան հոգը և ինդրեմ որ ամեն երեկոյ, գէթ մի ժամ՝ գաւախօսէք տան մէջ:

— Գոքա երկրորդական հարցեր են, զսեմաշուք ցէր... .

— Պ. Ներսէս, չեմ ամաշեր ընտանեկան գաղտնիքներս իսկ ձեզ պատմել: Եթէ կայ աչխարհի մէջ չորս երջանիկ յարդ, մին ես եմ, այո՛, երջանիկ եմ: Կը տեսնես կինս, Գայիհանէն ինձ համար երջանկութեան անբանիկ եմ: Կը տեսնես կինս, Գայիհանէն ինձ համար երջանկութեան անբանիկ եմ: Այս պատարա եղաւ: Նոր գպրոցէն ելած ատենս՝ աղքատ էի, կ. Պոլիս Ա. պէջի գրադիրն էի: Մի օր հանդիպեցայ մի սիրուն, չորրհալի աղջիկայ, միեւնոյն նաւի մէջ նստած իւսկիւտար կերթայինք: Ես զարնուեցայ, ի՞նչ մեղքս պահեմ, սիրահարեցայ: Հարցի, վնառեցի իմացայ՝ որ նա Ս. Ամիրայի աղջիկն է: Բուհ, սէր, երազ, —ըսի ինքնիրեն, —մնաք բարով, ամիրան ինձի պէջ եւուզն երբ աղջիկ կուտայ: Թէպէտ յուսահատ, բայց և այնպէս միշտ հետամուտ էի սիրելիս տեսնելու... . Զերկարցնեմ, վեց տարի իրար հետ տեսնուանք, նամակ գրեցի, պատախան առայ, վերջապէս օր մ'ալ փախուցի, եկայ այս տեղ հաստատուեցայ... . Սզբատ է. Փարայ չունէի: տեսար այս բարեկրօնը, սափրիչը, նոքա ինձ ձեռք տուին, օդնեցին մինչեւ նո կարողացայ իմ ընտանեաց հացը ճարել, Մարի այս ժամանակ աշխարհ եկաւ: Ինչզ օրերուս մէջ ծնաւ, հարուստ օրերուս մէջ մեծացաւ: Արդ, ես ու կինս միակամ, միախորհուրդ ենք, սիրած՝ կը սիրէ, տատածո՛ կատէ: Նա քու վրադ մեծ համարում ունի... . զաւակին պէս կը սիրէ քեզ...

— Շնորհակալ եմ, զսեմ: Ցէր, և երախտապարտ ձեզ... . Շնորհակալութիւն ընդունելու համար չխօսեցայ ձեզ... . Մարի ըրէք: Հինձնիկալութիւնը սիրահար պատառը մասանը չէին գրաւած նուշը:

մայ թարեկենդան է, մի շաբաթ յետոյ պահք, ես կ. Պոլիս պիտի երթամ փոքրիկ հաջիւ մը կարգադրելու : Իմ բացակալութեանս ատեն՝ աղատաբար, իբր տան տէր բնակեցէք տանս մէջ, դասախոսեցէք Մարիին մինչեւ իմ վերադարձը. Բան է. ո՞վ գիտէ, եթէ չուզեն քեզ պահել, մինչեւ իմ վերադարձը. Բան է. ո՞վ գիտէ, եթէ չուզեն քեզ պահել, կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ. վարժարանաց մէջ պաշտօն վարել, չհեռանանա՞ս կամ դու չուզես Ազգ.

— Որովհետեւ ես էլ ձեզ եմ սիրում, սիրելի՛ իշխան, ես չեմ կարող բարեկամիս ծառայելով դրամ կորզել . . .

— Ամենեւ ին, պէտք է ընդունիս :

— Երբէ՛ք.

— Լաւ, այդպէս ենթադրենք. թարեկամը փոխանակ վարձքի կարծեմ չպիտի մերժէ մի թանկադին նուէր . . . Զեզ կը նուիրեմ ձեր զտած ու կին, իմ կենաց հատորը, հոգւոյս բեկորը :

Ներսէս պէյի միտքը ըմբռնելով կարմրեցաւ, իսկ պէյը շարունակեց. — Ինչպէս ըսի՝ հարսաւութիւնս եղօրէս մաց, աւելի մեծ հարսաւութեան տէր եղայ մօտ ժամանակներս. Ծերունի աներս մեռաւ անժառանգ, ունեցածը Մարիին կտակելով. Եօթ, ութ աղարակ, քանի մը չքեզ աղարաներ, 150,000 լիրայ թողեց աղջկան, ահա՛ այդ պատճառի մի կերթամ կ. Պոլիս հարսաւութեան տէր լինելու : Այս ամէնը Մարիին է, Մարիին էլ քուկդ է, սիրելիս . . .

Ներսէսի տիսուր այտերէն քրտանց կայլակներ հոսեցին : Այս օրը շատ տիսուր էր ներսէս, կը մտածէր պէյի ըսածներուն վըրայ, կը մտածէր իւր վըրայ . . .

Միեւնոյն օրը ստացաւ պաշտօնական նամակը և գնաց վարժարան պէյին հետ. Ուսուցչական խումբը, ընդ որս և Պ. Աստուածատրեան, խորին ակնածութեամբ ողջոյնեցին նոր Տեսուչը, Ոչ մի խոռվութիւն չժագեցաւ. Պ. Աստուածատրեան բոլորովին լուռ մաց և հնազանդեցաւ Տեսչի հրամաններուն :

— Թարեկրօն, — կը հարցնէր երբեմն ներսէս, — ի՞նչո՞ւ ուրեմն լաւ է այժմ Պ. Աստուածատրեան :

— Քէօքիւնէ քիրքիթ սույու, — կը պատախանէր նա, — ի՞նչ կընայ կոր ընել . . . դու քուկին գործիդ նայէ :

Ներսէսի պաշտօնը անփուշ էր, բայց սիրտը փշալի. Մարիին իւր հետ կարգել կուզելին նորա ծնողքը, իսկ ինքը սիրտը նուիրած էր մի ուրեմն շի . . .

ԳԼՈՒԽ Պ. .

Մի գիշեր Պ. Պ. Աստուածատրեան, Սահառունի, մինչեւ ժամ երեք, նստած էին պէյի տունը, մի մարդ ներս մտաւ՝ ակնածանօք ողջունելէ յետոյ, ասաց :

— Պ. Աստուածատրեան, աղաս ձեզ կու դէ :

— Զէ կարող դալ, — դէմքը ծամածուելով՝ պատախանեց պէյը, — այս տեղ գործ ունի, եթէ տէրդ անպատճառ պէտք ունի պարոնին՝ թո՛ղ աււաւուն տեսնէ :

— Մի գուցէ կարեւոր բան մ'ունենայ, — դիտեց Աստուածատրեան Գաղղիերէն լեզուաւ, — եթէ կարելի է, թոյլատրեցէք՝ պէյ, երթալու և անմիջապէս վերադառնալու համար :

— Լաւ ուրեմն, ձեզ կէս ժամ միջոց :

Աստուածատրեան լուելեայն սպասաւորին հետ դուրս ելաւ :

— Ո՞վ է Պ. Աստուածատրեանին կանչողը, — հարցուց ներսէս :

— Կանչողը, — ժամելով դատասխանեց Գասպարեան, — երբեմն այս քաղաքի միակ բռնապետ, աղջողութեամբ է, իսկ այժմ ամենաանպատճէ աղան է. Եթէ չէք ձանձրանար պատմեմ ձեզ նորա անցեալլ՝ որով պիտի կարողանաք գաղափարը մ'ունենալ մի քառորդ դար առաջ ապրող թրքահայուն վրայ և ճանչեք նորա անցեալլ :

— Ուրախութեամբ պիտի լսեմ ձեզ՝ վսեմաշուք Տէ՛ր . . .

— Լաւ ուրեմն : 25-30 տարի առաջ Սահմանադրութիւն չունէինք, կայս. կառավարութեան կողմանէ կը նշանակուէր մի աղգապետ բաւական ընդարձակ իշխանութեամբ. Ազգապետը կը տեսնէր մանր ու խոչոր դատեր, նա ունէր՝ յանցաւորները գանակուծելու, բանտարկելու իշխանութիւն : Մի խօսքով՝ իրեն յանձնուած ժողովրդի տէրն էր :

Այդ կանչողը, — շարունակեց պէյը ուղեւորուելով, — թումաս էֆէնտի կ'ըսուի, բռնասէր, ինքնահաճ, ստորին մէկն է. Ինչպէս պատմել եմ քեզ, երբ ես փախստական եկայ այստեղ, գորա հայրը՝ Փէորդ աղան, կենդանի էր, այս քաղաքի աղջողութեամբ էր : Նորա խօսքը՝ պատգամ, հրամանը չգիտեմ ինչ էր . . . մեծ ու փոքր կը դողային նորա դէմ . . . նորա անցած փողոցին չէր կարող ուրիշ հասարակ մահկանացու անցնել, կամ դէմքը ժամանակ աղան գանձնուել, անմիջապէս գանձնուել, բանտ, տուգանք կը տային պատժեցն յանցաւորը, Տեսա՞ր այն երկու մարդիկը, Սափիիշը և Ստեփանը, նոքա եղան միակ պատճառ բռնաւորի տապալման ու մահուան :

«Ստեփան փոքր եղած ատեն մի օր գլուխը կարմիր ֆէ՛ դրած՝ բըռնաւորի դունէն կանցնի, ո՞ր նա էլ նստած է եղել:

— Հա՛ տղա՛, պուրիէ կէլ.—կըսէ Հաճի աղան բարկութեամբ, —ի՞նչ է գլուխունդ:

— Թէս.—կը պատասխանէ պատանին դողալով մօռք երթալով:

— Իմ որդիս կը դնէ՞ ֆէս, որ դու դնես, — պօռալով կառնէ ֆէսը՝ կտոր կտոր կընէ, պատանիին էլ ապտակելով. կը հեռացնէ. Ստեփան լալով կերթայ և նոյն օրէն կուխտէ վրէժը լուծել:

Այս գէպքէն քանի մը տարի յետոյ ես եկայ. Ստեփան 20 տարեկան էր. Ծանօթացայ նորա հետ և շա՞տ օգուտ տեսայ. ինչպէս պատմել եմ, աղքատ էի, այդ աղնիւ երիտասարդը վեց ամիս իրենց տնէն ալիւր, իւդ, բրինձ, և այլն բերելով պահեց ինձ. Սափրիչն էլ դրացի էր, ծըմրան դիշերներ միասին ժամանակ կանցնէինք, Նա իմ տանս մէջ կը հանդիպէր Ստեփանին. ծերունի արջը հասկցաւ թէ պատանին օր մը ահեղ կամքի տէր մարդ պիտի լինէր, ուստի բարեկամացաւ. . . . Այդ տարին աշխարհ եկաւ Մարին, ուզեցի մանկուհին մկրտել, բռնաւոր Գէորդը աշխարհ եկաւ Մարին, ուզեցի մանկուհին մկրտել, բռնաւոր Գէորդը արգելք դարձաւ, որովհետեւ՝ իւր ազգական քահանայն չէր իս ծխարդելք դարձաւ, որովհետեւ՝ իւր ազգական քահանայն չէր. Ես՝ ճատէս: Եկեղեցւոյ գրան բանալին մի շաբաթ իւր մօռք պահեց: Ես՝ ճատէս: Եկեղեցւոյ գրան բանալին մկրտել տալ: Երբ երկու բարեկամրահատեալ, ուզեցի Յոյն քահանայի մկրտել տալ:

Կապ, քարաշէն տաճարն ու վարժարանը նոյն տարին շինեցին 3500 Օսմ. ոսկի ծախսելով ի զարմանս շրջակայ գաւառաց, որոց նմանը կ. Պոլս անդամ քիչ կը տեսնուի: Ժողովուրդը, կամ Ստեփան յաղթանակեց, ուզեցին այլ եւս թօթափել բռնաւորի լուծը և Սահմանադրութեան դըրաշի տակ մտնել, մինչեւ Պատրիարքարան գրեցին թէ պէտք էր հաշիւ պահանջել Հաճի աղայէն. Պատրիարքարան կոնդակով հրամայեց Հաջտուիլ, մեր Էռեւէրն Ստեփանին յատկապէս ողջունելով: Հաճի աղա զիջաւ ժողովուրդի հետ հայտուելու ձեռնարկել: Զմեռ էր եղանակը. Ժողով կազմուեցաւ: Ստեփան՝ 50-60 կտոր լաւ, ամուր լախտի տեղ գործածելի փայտեր գարսել տուեց վառարաններու տակ ի հարկին գործածելու պայմանով: Վիճարանութեան տաքցած ատեն՝ աչք ըրաւ երիտասարդութեան: Փայտերը յափշտակեցին, յարձակուեցան հակառակ կուսակցութեան վրայ . . . սարսափելի ծեծ մը տուին. Հաճի աղային գլուխը ճեղքեցին: Ստեփան աղատեց նորան ըսելով.— «Ֆէսը տե՛ս, Հաճի աղայ, գլուխու ինչեր բերեց . . . »:

Այն օրէն իշխանութիւնը անցաւ հասարակութեան: Բուռեւէն նոցա պետն է: Նա երբէք պաշտօն վարեց և վարելու չէ. Բայց ինքն է թաղական և այլն ընտրող, ինքն է ազդի շահերը խղճի մոտք պաշտպանող: Զաքար էֆ. նորա չնորհիւ էֆէնտիի աստիճան ստացաւ: Այժմու Հաճի աղան Գէորդ աղայի որդին է, կուզէ վերստանալ հայրենի իշխանութիւնը: Ուստի զանազան պատրուակներով, կը ջանայ ժողովուրդը յուզել ընդդէմ Պատ. թաղականութեան: Նա՝ Աստուածատրեանը չի սիրեր, չի պաշտպաներ, բայց այժմ պիտի աշխատի վարժական խնդրի քօղով իւր նպատակը ծածկելու յաջողիւ. . . մենք քաջ գիտենալով նորա դիտառութիւն՝ ամէն ինչ նախատեսելով՝ պարտ և պաշաճը անօրինել ենք:

— Ռւրեմն, — ասաց Ներսէս, — բարեկրօն Ստեփանը պիտի մաքառի ի հարկին:

— Եւ ես: Նա պիտի չստանայ իւր դիրքը Սահմանադրութիւնն եղծաննելով: Տեմնեմ ժամը քանի է . . . 0', հօ՛, 11, կէս գիշերուան մի ժամ կուզէ: Աստուածատրեան չվերադարձաւ: — Մարիին դառնալով. — Աղիի: կըս, բե՛ր նուագարան, երգարան, մի քիչ զուարձացուը մեղ:

— Ժամանակ չունիմ, հայրիկ ջան, — պատասխանեց Մարի տրտմապէս գլուխը օրելով, — պիրտու տիսուր է . . . երբէք չեմ ուզեց բերան բանալ:

— Ինչո՞ւ, սիրելի՛ զաւակս, ի՞նչ է եղել. . . :

— Զգիտեմ, հալրիկ, սիրտս խորին տիսութեամբ լցուած է:

— Տիսութիւնը երգով են փարատում, օրիո՞րդ, — գիտեց Ներսէս ժպատելով, — երբ ձեռ սիրտը լցվում է տիսութեամբ, վեր առեք նուագարան. . . :

«Գոքա աշնան արեւի տակ
Ծըլան, ծաղկան ծաղկոցում,
Քեզ յիշելով շաղ եմ տուել
Նոյա վերայ գիշերում
Իմ արտասուք

Եւ սրտի սուգ · · ·

«Երթունըս սեղմեր սրտիդ բայց ած
Վերայ կարմիր վարդերին,
Յիշի՛ր դու ինձ, յիշի՛ր անցեալը,
Պաղատում հմ արտմադին · · ·

Այն է իմ փառք,
Սիրուն հոգեակ :

«Անագորոյն ճակատագիր՝
Ո՞չ, ծանրացաւ իմ բաղդին,
Մնա՛ր բարեաւ, գուցէ ընդ միշտ
Հեռացաւ քո սիրելին · · ·

Երբ ինձ յիշես

Ո՞չ, չարտասուես · · ·

— Միթէ անգութ է՝ որ չարտասուէ, — խորհրդաւոր ժպիտով ասաց
ախինը՝ երգը աւարտելէ յետոյ, — միթէ քա՞ր է, որ աղիքը չը գալարին
գուցէ անզուգական սիրականին վրայ. Պ. Ներսէս, եթէ Եւալի աղիկն
է, իւր մօր հաւատարիս տիպարն է, միշտ պիտի յիշէ, յիշէ՛ու լայ · · ·
Ներսէս հառաջելով դէմքը չուռ տուեց արտասուքը ծածկելու. Իսկ
Մարի խորին թախածութեամբ հարցուց.

— Ո՞վ է այդ Վարդուհին, Պ. Ներսէս · · ·

Ներսէս չը կոսրեց սիրուն օրիորդի սիրուր, զիշաւ ասել՝ թէ, Վար-
դուհի մի սիրադրուած օրիորդ է, թէ իւր բարեկամը երխտասարդական
բուռն սիրով սիրած էր նորան և այդ երգը, մի ծաղիկէ փունջի հետ
նուիրած նորան, թէ օրիորդը արհամարհել էր երբեմն իւր պաշտածը և
ուրիշ մը գտել :

Պէյը՝ իւր սովորութեան հաւատարիմ, իը խուկար թիկնաթուսի մէջ ·
ո՛չ երգն ել լսած և ո՛չ պատմութիւնը. Զարթելուն պէս հրամայեց
պատկիլ և քաշուեցաւ իւր ննջարանը.

— Մարի՛, — հրամայեց տիկինը, — պարսնին առաջնորդէ՛, անկողինը
մաքրէ՛, եթէ կամիս՝ սաւանները փոխէ՛.

Մարի լամպարը առնելով առաջնորդեց. Երբ մտան ննջարան,

— Պ. Ներսէս, — հարցուց նա, — գուշ չէ՞ք Վարդուհու սիրականը;

— Ո՞չ · · · օրիորդ, ես չեմ, Կանայք լաւ նախազգացութիւն ունին · · ·

Թմրած օրիորդը կարծես սթափեցաւ. Աչերը շողացին, դէմքը զուար-
թացաւ, մօտեցաւ նուագարանը պատրաստելու, երգարան բերելու,
— Ա՛հ · · · իւրովի ասաց Ներսէս, — իւր' զն աղջիկ · · · որքա՛ն
դժբաղդ ես դու.

Մարի նուագարանը Ներսէսի առաջ հրեց, ձեռը նորա ուսին, շունչը
դրեթէ շնչին, դէմքը դէմքին հպած, փսփսաց :

— Մի լաւ երդ · · · սիրելի՛ Ներսէս, իմ ուղածներէն · · ·

— Դուք ընտրեցէք, — պատասխանեց Ներսէս յետ հրելով :

— Լաւ ուրեմն, հրամայէ քո երգարանը բերեմ · · ·

Ներսէս շառագունեցաւ վարանելով :

— Գնա՛ր բեր · · · աղջիկս, — հրամայեց մայրը մոլորագին նայուածքով :

Մարի միջոց չը տուեց խօսելու, դուրս գնաց և անմիջապէս վերա-
դարձաւ մի ձեռագիր ձեռքը :

— Այդ ո՞ր տեղ էր, — կակաղեց Ներսէս :

— Դուրսն էք թողած, — պատասխանեց Մարի, — կը ներէք, այնպէս

չէ եթէ ճշմարիտը խօստովնիմ · · · «Մայրէ ի ծայր կարդացի · · ·

Ներսէս ճակտի քրտինքը որբեց :

— Խիստ ընտիր երգեր են, — աւելցաւ օրիորդը, — որչա՛փ պիտի սիրէի

դոցա հեղինակը · · · եթէ ճանաչէի · · ·

— Մարի՛, — միմուաց մայրը հաղիւ լսելի ձայնով, — Մարի՛ · · ·

— Լաւ ուրեմն, — ասաց Ներսէս, — ընտրեցէք մի երգ · · ·

— Արդէն ընտրել եմ · · · «Ո՞ռ Վարդուհի» երգը :

— Բայց · · · եղանակի · · ·

— Դիւրին է . օրինակի համոր «Մի՛ մոռանար · · ·» երգի եղանակը :

— Լաւ. երգենք :

Ներսէս սկսեց եռանդով սահեցնել մօտները և աշխուժիւ երգել Մա-

րիի հետ նուրբ, անուշ ձայնով :

Ահաւասիկ երգը :

«Ո՞ռ Վարդուհի՛, մի փունջ ծաղիկ,

Բուրաստանից եմ քաղել · · ·

Հոտոտելիս քո անունը

Տիսուր ձայնով նուագիլ,

Ո՞ռ քեզ նուէր,

Հոգւույս իմ սէր · · ·

Եթէ ժպտի կարմիր մեխակը

Բուրէ անուշ իւր հոտեր,

Նա տիպարն է ալրած սրտիս,

Նա է ստոյդ քեզ նուէր,

Ա՞ռ, հոտոտի՛ր

Եւ ինձ յիշի՛ր · · ·

բայց դուք սխալուեցաք . . . Այլ սակայն, ինչո՞ւ հարցուցիք . . .
— Այսինքն, — շառագունելով մըմնջեց Մարի դողտրիկ ձահնով, — կու-
զեմ ըսելթէ . . . զո՞վ կը սիրէք:

— Ոչ ոքին . . .

Մարի՝ գունատ, տիսուր, առանց բարի դիշեր ասելու դուրս ելաւ:
Հետեւեալները կը քաղենք ներսէսի յիշատակարանէն՝ որք առնչու-
թիւն ունին ուղղակի մեր պատմութեան հետ:

25 մարտի 1874թ. ի գ.

«Այսօր պէյը գնաց իւր դստեր ժառանգութեան տէր լինելու. ես
միայն եմնուա տան մէջ, միայն իմ սրտիս և յիշատակարանիս սեւ էջե-
միայն եմնուա տան մէջ, միայն իմ սրտիս և յիշատակարանիս սեւ էջե-
միայն եմնուա տան մէջ, միայն իմ սրտիս և յիշատակարանիս սեւ էջե-
միայն եմնուա տան մէջ, միայն իմ սրտիս և յիշատակարանիս սեւ էջե-
միայն եմնուա տան մէջ, միայն իմ սրտիս և յիշատակարանիս սեւ էջե-

27 մարտի . . .

«Մարիի տարօրինակ շարժումները, ձեւերը, դէմքի փոփոխութիւնը՝
ինձ սարսափ են աղդում . . . նա ինձ սիրում է, նա ինձ պաշտում է . . .
ո՞հ, անիծեա'լ, անիծեա'լ լինիս՝ Վարդուհի', ինչո՞ւ սիրեցիր, ինչո՞ւ ա-
տեցիր ինձ . . . ինչո՞ւ իւրացուցիր սրտիս սուրբք զգացումները . . . զգայ-
ութեան մէջ լոկ, աւա՛զ, տիսուր վշտերը ճակատու են սքօղում . . . կա-
զութեան մէջ լոկ, աւա՛զ, տիսուր վշտերը ճակատու են սքօղում . . . կա-
զութեան մէջ լոկ, աւա՛զ, տիսուր վշտերը ճակատու են սքօղում . . . կա-
զութեան մէջ լոկ, աւա՛զ, տիսուր վշտերը ճակատու են սքօղում . . . կա-

տարբեր, կարծես քոյրս լինէիր, դու իմ մէջ չես հրահրում զգայութեան
բոցեր, չես հանում մտատիպահների անհուն շտեմարանից պատկերներ՝
որոնք դոնէ յիշեցնէին ինձ սիրական էակներ . . . » չէ՛, չէ՛, դու մաս չու-
նիս սրտէս, միթէ պիտի ապրի՞ս առանց նորան . . . Տակաւին աշքիս ա-
ռաջն ես, անբաղդ աղջիկ, տակաւին տեսնում եմ քեզ թիկնաթուում օ-
րորուելիս . . . այո՛, հոգեպիշնայում ես վենետիկեան հայելու մէջ, նայում
ես ինձ, ուր տեսնում ես ձեռս ի ծնօտ . . . զգոյշ ես, չես ուզում ներկայ
եղողների կասկածը գրդուել . . . ահա՛, անցան ժամեր, դու չես յագե-
նում հայելից . . .

«Փոքրիկ Ստեփանիկը ննջած է գրկիս մէջ, տիկինը ինդրում է նորան
իւր մահիծը դնել . . . աներկիւղ մանում եմ կուսական ննջարանը . . . զար-
մա՛նք . . . Մարի ննջում է մուշ միեւնոյն անկողնում . . . ի՞նչ արած,
երկիւղածութեամբ վեր եմ առնում վերմակի մի ծայրը, մանուկը տեղա-
ւորում եմ այն տեղ . . . պատահմամբ, սատանայակա՞ն իսալ, ձեռս
վում է նորա մազերին, զարթում է, ժպտելով հոգեպիշ ինձ է նա-
յում . . . զարհուրած փախչում եմ ես»

«30 մարտ . . .

«Ել տարակոյս չունիս . . . Մարի սիրահարուած է ինձ վերայ . . . ան-
հանգիստ եմ, Աստուած իմ, ի՞նչ անեմ . . . ես նորան չե՛մ սիրում . . .

Գլուխ ե.

Արդ, կարծեմ անհրաժեշտ է ներսէսի ժողովրդականութիւնն ու շաբ-
ժառիթները մամնաւ որապէս շօշափելով շարունակել պատմութիւնը.

«Ներսէս ուրախութիւն եղաւ աղքատ, կարօտ պանդուխտների, որ-
բերի, ալրիների և ընտանեաց հալրերի . . . ինչպէս կը գրէ ինձ բարեկա-
մբս. — Ծածկաբար կողորմէր իրեն դիմողներուն, ոչ միայն իւր ամսականը
չէր բաւել, այլ և կրկին այսպէս կը ծախսէր յօդուտ նոցա: Ուսումնա-
կան անձինք «Հայր է» կըսէին, վեհանձն, ո՛չ միայն կրթուած՝
այլ և գաստիարակուած մարդ է: Տեղոյն կուսակալը քանի մ'ան-
գամ այցելեց նորա բնակարանը և բարեկամութեամբ կապուեցաւ,
թունաց Մերքառուէու, որ երբեմն Պատրիարք էր եղած, շաբաթը մի ան-
գամ գոնէ տեսնելու էր «Իւր որդին», (այսպէս կանուանէր ներսէ-
սին) խօսելու էր հետը, իոկ Հայք, (մեծ փոքր) խորին ակնածութեամբ
կը վերաբերուէին դէպի նա: Այսպիսով բարձրացաւ ժողովրդական սի-
րոյ զէնիթը կամ գաղաթնակէտը, Հայոց միակ ներկայացուցիչ նա էր

այնուհետեւ ծւրոպայի ճանապարհորդներու մօտ : Փահանայ, թաղական, հոգաբարձու այնուհետեւ առանց ներսէսի բան չէին ըներ . նորան խորհուրդն հարցնել անհրաժեշտ էր :

Աստուածատրեան բոլորպին փոխուեցաւ կարձես, ո՛չ կը նախանձէր և ո՛չ կը տրտնջար ներսէսի փառացն համար : Այս իրազութիւնները կը առաջարկած ներսէսի փառացն համար : Այս իրազութիւնները կը թուշէր կը տեսլէր Գասպարեան ի կ . Պոլիս, ուրախութենէն կը թուշէր կը տեսլէր Գասպարեան ի կ . Պոլիս, ուրախութենէն կը թուշէր կը տեսլէր Գասպարեան ի կ . Պոլիս, ուրախութենէն կը թուշէր կը տեսլէր բարեկրօն, կը բերկրէր, անձնուեր բարեկամութիւն կուլստէր նունէր :

Ամեն կին կը համար ներսէսի վրայ, ամէն օրիորդ կուզէր պաշտել այն երիտասարդ՝ որ իրենց հայրեն ու եղբարքը դրաւել էր ազնուու-թեամբ, Ուրեմն չպաշտէ՞ր Մարի այս սիրուն, ազնիւ, բարձր երիտա-թեամբ՝ որ ամենի ուշագրաւ առարկայն էր, չսիրէ՞ր նորան որուն ինք ի սարդը՝ որ ամենի ուշագրաւ առարկայն էր, չսիրէ՞ր նորան որուն ինք ի մօտոյ կը ճանաչէր, կը կշռէր ազնիւ զդացումները : Եւ ո՞վ լիներ Մարի ու չը սիրահարեր : Ուրեմն իրաւունք ունէր նա սիրելու : Բատ երեւոյթին՝ չը սիրահարեր : Ուրեմն իրաւունք ունէր նա սիրելու, Դար յարեւոյթին՝ ուրիշ ո՞ւ ե մտածութեան առարկայ չունէր, Դարլոց—Ե-ներսէս ուրիշ ո՞ւ ե մտածութեան առարկայ չունէր, Դարլոց—Ե-կեղեցի, Երկուորեակ անբաժան քոյթերն էին իւր պաշտածները, Դարլոցի յառաջադիմութեան, բարեկարդութեան, Եկեղեցւոյ յարատե-ւութեան, պայծառութեան մէջ կը կայանար նորա փառքն ու պարծան-քը, Նա ինք անձամբ կ'իրագործէր իւր յառաջադրած ամէն մի գաղա-քը, բարի օրինակ հանդիսանալով հասարակութեան :

Գասպարեանի մեկնելէն մի ամիս յետոյ, վարժարանի արձակմանէն վերջ, Ներսէս տուն գնաց, տիկինը այն տեղ չէր, Մարի միայն նստած կարծեմ կարտասուէր, տակաւին թաց էին գեղանւոյն խոնաւարտեւա-նունքը, Երբ Ներսէս հարցուց անմեղ ժամանուուով :

— Վայ, արտասում էք, օրիորդ, և ինչո՞ւ . . .

— Ո՛չ, չեմ լար, — պատասխանեց Մարի դահլիճը մտնելով :

Ներսէս կարեւորութիւն չտուեց տեսածին, չոքեցաւ իւր կաշեպատ

արկղի առաջ, Նա թղթերը աչքէ կ'անցնէր : Երկու առարկաներու վրայ փոփոխակի սեւեւեցան աչերը յուզմակր : Մին մի հասակաւոր, ճոխ հագ- ուած Տիկնոջ, միւսը մի մանկամարդ օրիորդի լուսանկար էր, Ներսէս յետ շրջելով վերջին պատկերը՝ կարդաց հետեւեալը :

« Սիրելիդ իմ Ներսէս,

« Քո լուսանկարը արդէն իմ սրտումն է կախուած . . . իմն էլ թղթի վրայ նկարուած քեզ կ'ուզարկեմ, բարեհաճի՞ր գոնէ աչքիդ առաջ ու-

նենալ . . . վշտացեալ վարդուհիդ . . . »

— Անառակ կին, չարագործ կին, — մրմռաց Ներսէս լուսանկարը մի կողմ նետելով, — « թէ սրտիդ մէջ, ալլ չը գիտեմ ուր կախեցիր հէք Ներսէսի հոգին . . .

Ներսէս սկսեց միւսը քննել :

— Պարոն, — ասաց Մարի, լուսանկարը ձեռին, մեռելատիպ դէմքով յանկարծ նորա առաջ ցցուելով . . . այժմ հասկացայ . . .

— Ի՞նչ հասկացաք, — պատասխանեց ներսէս :

— Այս չէ՞ վարդուհին, — լուսանկարը ցոյց տալով, — միթէ ինձմէ գեղցիկ է նա, հիանալի՞ է նա . . . քեզ պաշտելի՞ է նա . . .

— Ե՞ն օրիորդ, — վշտացնում էք ինձ, ինձ տուեք այդ լուսանկարը, Կորչի ինքն էլ, իւր լուսանկարն էլ . . . նա այցմ չինչ է ինձ համար . . .

— Զպիտի տամ, — յետ յետ գնալով :

— Պատճառ, ինչո՞ւ չպիտի տաք :

— Եթէ միւսը ինձ տաք, այս ձեզ կը յանձնեմ :

— Ո՞րը կամենում էք ասել :

— Մերակի մէջինը, Պ. Ներսէս :

Ներսէս ըմբռնեց սիրոյ հրդեհի անշիշանելի լինելը :

— Կը տաք, — հարցուց Մարի տրտմապէս ժպտելով :

— Ո՞ւր է որ տամ, Մարի՛, ինչը տամ :

— Ահաւասի՛կ, — մի ականակրուռ գոյցն հանելով գորոցէն, — միտալեօնը թո՞լ ձեր սիրած օրիորդին լինի, միայն պատկերը, միայն պատկերը, Ներսէս, չնորհեցէք ինձ իբր ողորմութիւն : — Չը կարողացաւ չարունակել, գէմքը գոյցեց ձեռներուն մէջ, արտասուաց կորպիկ, փայլուն կաթիները սրածալը սիրուն մատներու արանքէն սկսեցին թափմիլ : Ներսէս մի քանի րոպէ վարանելով գիտեց, ապա մօտեցաւ տրտմագեղ օրիորդին ասելով :

— Մարի՛ . . . այդ զարդը ո՛չ թէ սիրուհու, այլ հանգուցեալ Տէկն մօրս պարանոցի զարդն էր, նա մեռած ատեն ինձ տուեց . . . Սիրուհի չունիմ . . . հարսնացու չունիմ, գուցէ սահմանուած էլ չէ ունենալ, պատկերը իմ պատկերս է : Թող ձեզ լինի բոլորը . . .

— Գիտեմ, — արտասուաքը սրբելով սիրտ առաւ գեղանին, — գիտեմ՝ և այդ պատճառաւ կուզեմ . . . ինձ միայն պատկերն է պէտք, իսկ Գոյց էնու ձեզ կը գարծնեմ . . . պահեցէք, գուցէ պէտք գայ . . .

— Ո՛չ, մետալեօնը ինձ պէտք չէ, այն էլ ձեզ լինի, միայն թէ մայրդ չը տեսնէ :

— Ապահով եղիք, նա չպիտի տեսնէ, ինձ հետ պիտի տանիմ գերեզման . . .

— Մարի, ինչո՞ւ այդպէս կը խօսիս, ինչո՞ւ կարտասուես, պատմի՞ր ինձ . . . ինչո՞ւ կեանքը զառնացել է քեզ :

— Կը հարցնէք, պարոն, չդիտէք, գուցէ . . . բայց իրաւ . . . չըմբռ-նեցիք միտքս՝ Ներսէս . . . Ե՞ն, վերջապէս պիտի ըսեմ . . . կը սիրեմ . . . կը սիրեմ ձեզ . . .

— Բայց . . . Մարի . . .

— Ո՞հ , այո՛ , գիտեմ . . . դուք ինձի չեք սիրել , մի սիրեք , բայց ես
վարդուհի չեմ , Պ . Ներսէս . . . իմ անունս Մարի է , Մարին իւր վարու-
ժանով կապրի , առանց նորան կեանք չունի սիրահար թուշունը : Ես քեզ
մով կապրիմ . . . կը յուսան թէ առանց քեզի կարողանամ ապրիլ :

Մարի նկարագրեց իւր սրտի սէրը պաղատելով : Խոստովանեցաւ ամէն
ինչ , պատմեց իւր յուսոյ երազները : Ներսէս լսեց սառն արեամբ :

— Ո՞ւր է ձեր երդարանը , — ի վերջոյ հարցուց Մարի :

— Զգիտեմ . . .

— Ահաւասիկ ծոցիս մէջ է նա , — ցոյց տուեց ձեռագիր երդարանը , — Պիտե՛մ , քո մատներով ես գրել . . . այդ պատճառաւ կը պահեմ . . . Է՞ն ,
Պիտե՛մ , քո մատներով ես գրել . . . այդ պատճառաւ կը պահեմ . . . Է՞ն ,
ո՞չափ նուիրական ես գու ինձ համար , ո՞րչափ սիրելի ես ինձ համար ,
գուցէ չես ըմբռներ սիրոյս ուժգնութիւնը . . . չես ուզեր տիրել սրտիս
գանձերուն , ծաղիկներուն , ո՞ր աւազ դեռ կոկոն պիտի թառամին :
Ներսէս , այս երգարանը թող լինի ինձ այն մահարեր խորշակը և թա-
ռամեցնէ վարդն ու կոկոնն ի մայիսին , պիտի կարդամ զայն , պիտի կար-
դամ ամեն օր , պիտի կարդամ և գերեզմանի մէջ . . . « Կարմիր վարդ էիր
դեռաբաց , ինչո՞ւ թառամած մնացիր , կենաց դարունն չի տեսած ինչո՞ւ
փակուած մնացիր . . . » :

Ներսէս մտախո՞չ մերթ կը գունատէր , մերթ արիւնը գլուխը իսու-
ժելով կը շառագունէր այտերը . . .

— Բայց , օրիո՛րդ , ասաց Ներսէս ծանր , հանդիսաւոր ձայնով , — օրի-
ո՞րդ , ինչո՞ւ ինձ սիրելու գժբաղդութիւնն ունեցաք : Ե՞րբ նայեցի ձեզ ,
ո՞րդ , ինչո՞ւ սիրելու գժբաղդութիւնն ունեցաք : Ե՞րբ կարդացիք զգացմանցու քար-
ե՞րբ նշմարեցիք սէրը աշերիս մէջ . . . Ե՞րբ կարդացիք զգացմանցու քար-
տէսը ամենադոյն սիրոյ նշոյ տեսնելով : Ե՞րբ գտաք ինձ սիրելու և սիր-
ելու տրամադէր : Ո՞հ , օրիո՛րդ , դուք սիրելու չեք մի մարդ , սիրե-
լու չեք ինձ՝ որ անտարբեր էի ձեզ համար : Սիրելու չեք ինձ , քանի
որ շիշած էր աշերիս սիրարծարծ փայլակը գժբաղդութեան սեւ ամպե-
րում . . . կամ անարժան մի սրտի մէջ . . . սիրելու չեք ինձ՝ քանի որ , ա-
շազ , չեք կարող ձեր սիրուն պատասխանել օրտի գահավէժ թուիչներով .
ասացէք , Մարի , մեղաւո՞ր եմ ես , յանցաւո՞ր եմ ես :

— Ներսէս , սիրելին Ներսէս , այո՛ , ճշմարիտ է , դուք երբէք չունե-
ցաք սիրելու տրամադբութիւն , բայց ես կենթագրէի : Ես՝ որ սրտով կը
ոլաշտէի ձեզ , կենթագրէի թէ դուք եւս պիտի սիրելիք ինձ . . . Ես ի՞նչ
գիտեմ , սիրոս ինձ կը խարէր , սէրը ոոկեղէն յոլութիւնը կը ժապէր : Զեր
անտարբեր աշաց մէջ՝ ոչ թէ սիրոյ ծաւալ , այլ սրտարեկութեան հետքեր
կային : Զեր մէլամազնոտ նայուածքը գիւթեց ինձ . . . միշտ անմեղ էր
կային : Զեր մէլամազնոտ նայուածքը , խոռըլ , բայց սէրը անձնապատան է ,
ձեր հայացքը , յարաբերութիւնը , խոռըլ , բայց սէրը անձնապատան է ,

նա գինով զինւոր է , ծխի , մխի , արեան մէջ կորոնէ իւր վախճանը . . .
ես սիրեցի ձեզ , այո՛ , բայց ինչո՞ւ , չգիտեմ . . . ներ-
սէս ես պարզ աղջիկ եմ , սէրը ինձ ծանօթ չէր , դուք անտարբերու-
թեամբ առիթ ներշնչեցիք ինձ : Անտարբերութեամբ գրգռեցիք կանա-
ցի հպարտութիւնս , ես ինքնին ծնրագրեցի ձեր առաջ : Եթէ նայէիք
ինձ , եթէ սիրել ուզեիք ինձ , այսչափ թշուառ չպիտի լինէի , այսչափ
չպիտի սիրէի և ձեր սիրով արտասուելով խնդրէի : Դուք՝ այնչափ ազնիւ ,
այնչափ շնորհալի էք , որ , Ներսէս , վատահօրէն կուսական ճակատու դըի
ոտքիդ տակ : Յոյար իմ զօրաւեկն էր . . .

— Բայց , օրիո՛րդ , ես չգիտէիք , ես զգոյլ էի . . .

— Այո՛ , չը գիտէիք , զգոյլ էիք , բայց ես կը հաւատայի , ափսո՞ս ,
տղայի պէս խոստովանեցայ . . . Ներսէս , չը գիտեմ ինչ խօսելս , չը գի-
տեմ ուր լինելս , կարծեմ երազի մէջ եմ . . . լեզուիս արտայալտածը լոկ
մարմնացած գաղափար է գիտակցութեան մէջ . . . կը թափառիմ այժմ
անյուսութեան ովկիանի խորքը , վէեր կ'անջատեն ինձ քեզնէ , կզդամ թէ
մի բան ընկած է ոտքիդ տակ՝ կը տրոփէ անօգուտ . . . այն իմ սիրոս է
հողամած և ճակատս , որ կը շփուի գարշապարիդ փոշիներով : Ներսէս ,
վարդուհին լքած է քեզ , վարդուհին չը սիրեր քեզ , Մարին ոտներդ կը
դրկէ , կերկրապատէ քեզ . . . միթէ կուզե՞ս սիրել սիրագրուժը , ջախջա-
խելսվ , գերեզման գլորելքեզ պաշտողը . . . սիրել՝ ատելին , ատել՝ սիրե-
լին կարո՞ղ ես , Ներսէս . . .

— Ա՞հ , խեղճ տղայ , սխալ կը տրամարանես :

— Ներսէս , պատասխանէ՝ հարցիս . . .

— Ի՞նչ պատասխանեմ : Բունի սէր կը լինի՞ : Միանդամ սիրել եմ այն
վատը . . . այո՛ , թէ պէտ վատ , սիրագրուժ . . . բայց և այնպէս . . .

— Լաւ , չեմ ուզեր լսել եզրակացութիւնը . . . Ներսէս , ինձ թող յի-
շատակդ սուրբ պահելու իրաւունքը , ինձ չնորհէ այս նուերներդ գերեզ-
ման տանելու իրաւունքը , ուր չի մերձենար վարդուհու ձեռքը , ուր կը
մարի նորա նախանձը . . .

— Մարի , ինձ ըսի՞ր , մի՛ սնուցանել քո մէջ տխուր գաղափարներ :
Այդ սէրը գոյացել է փոքր առ փոքր , կարող է ոչնչանալ նոյն եղանա-
կաւ : Պիտի ապրիս դու , ապրիս և երջանիկ լինիս : Դու գեռ մանկուհի
ես , չը գիտես ի՞նչ որոշելլ , զգացումներդ գեռ չեն մարմնացած : Մո-
ռացի՞ր ինձ , պիտի դանես քեզ պաշտող մինը :

— Է՞ն , ո՞չ , ո՞չ , ել չկայ ինձ ապրելու յայս : Աշխարհ՝ աւեր , երկինք՝
խաւար է ինձ համար : Ես ինձ ըսի , ա՞հ երջանկութիւնը ինձ կը կանչէ ,
թշուառութիւնը գրկեցի , կենաց գարունն է , ըսի , անգութ ձմեռն հա-
սաւ արագ , սիրոս անքիծ սիրով լցաւ , գաման վշտեր պաշարեցին , ման-

կութեան տարիքն անցան, գերեզմանի շիրմը տեսայ, ուրախութեան օրերն՝ ահա՛ խոր տիրութեան տիպար գարձան. դեռ հեռի է՝ կըսէի յահը. այս սիրոյ գուռն ինձ կը համի. . . անուշ խոհեր, վառ երազներ, զգայնութեանց տենչն ու կարոտ իրենց տեղի կընտրեն շիրիմ. . .

Ներսէսի աչերը, լցուեցան արտասուքով, Մարի՛ գունատ, դալկահար, քթունքը գողդողալով շասաց.

—Մի՛ լար, Ներսէ՛ս, մի՛ լար, սիրելի՛ս, այո՛, տիսուր էին խօսքս, բայց քեղչեն վերաբերիր . . . ես իմ բարեւ եւուշ կը նկարագրէի. ես իմ բայց քեղչեն վերաբերիր . . . ես անարժան եմ քեզ, թշուառութեանց եղայ առաջին ողբերգու . . . ես անարժան եմ քեզ, անարժան եմ տիրելու այն սիրտ՝ որուն միայն պէտք է երկնային էակ, սիրատարփիկ զգայնութեանց մի երկիւղած քահանայուհի. . . Մարի սիրատարփիկ զգայնութեանց մի երկիւղած քահանայուհի. . . Մարի կարծես յափշտակուած էր, յանկարծ լոեց, աչերու արցունք սրբեց, գէպի գուրս երթալով՝ մրմնջեց վշտաբեկ ծռելով, —Քալէ՛, քալէ լինջ աղջիկ, միթէ սառ գերեզմանը չպիտի սիրէ քեզ, քալէ՛, հեռացիր, հեռացիր նորա մօտէն. . . թո՛ղ նա չը տեսնէ արտասուքդ. . .

Ներսէս մի ժամու չափ յուզուած, տիսուր կերթեւեկէր սենեակի մէջ, ապա յանկարծ՝ վեղյուր խլեց, շտապով գուրս ելաւ. Որագ անցաւ փողոցներէն, լայնածաւալ դաշտի մէջ ճեմեց մտածելով. Երեկոյեան եկաւ տուն, խիստ տիսուր էր նա, տիկինն էլ չհարցափորձեց. Մարի չկար. Երկուոր միասն ընթրեցին, առանձնացան իրենց նընջարանները. . .

Այսպէս անցան երեք օրեր. Ներսէս Մարիին չտեսաւ, նա դպրոց էլ շիտէք, օրորդ օրը օրիորդաց բաժինը գնացած ատեն նշարեց Օր. Գագապարեանի բացակայութիւնը.

—Տիկին, ո՞ւր է Օր. Մարին, —հարցուց մեծ վարժուհուն. . .
—Զը դիտէք, —պատասխանեց ժպտելով:
—Ոչ, —մրմուաց Ներսէս զարմացմաք:
—Իրօք, չգիտէք. Պ. Տեսուչ, զարմանալի էք. . .
—Ոչ, —բոլոր մարմնով գերեթէ դողալով:
—Հիւանդ է խեղճ աղջիկը երեք օրէ ի վեր, այսօր տեսութեան գնացի, Պ. Տեսուչ, խեղճ տղուն Աստուած հասնի, ոչչի տրամադրութիւնունի. . . Մայրը ձեզ ոչինչ չըսաց. . .

—Ոչ. . . ես չգիտէի, այժմ կիմանամ. . .
—Լաւ ուրեմն: Ծառան բժշկի ուղարկեց, միանգամ դուք էլ գնացէք տեսնելու, Մարին շա՛տ հիւանդ է.
Ներսէս շուարած գնաց տղայոց բաժինը մտածելով:
—Ոչ. . . ցաւալի է այս, թշուառական դու, խեղճ օրիորդին մահուան առիթ պիտի լինիս. . . նորա անէծքն ու արտասուքը պիտի ծան-

բանան սրափդ վերայ, խղճիդ վերայ. . . ո՛հ, անիծեալ լինիս, Վարդուհի. . .
—Փեղութս ինձ բեր, —հրամայեց տնտեսին, առնելով հապճեպ հեռացաւ. Տիկին Գասպարեան տիրուր, սրտաբեկ խոհատան մէջ նստած կը հրամայէր այս ու այն կերակուրը պատրաստել, երբ ներսէս ներս մըտնելով ողջունեց և հարցուց.

—Մարին հիւանդ է, Տիկին. . .
—Ոյ, —պատասխանեց ցրտութեամբ.

—Հազար ներողութիւն՝ Տիկին, որ չկարողացար պարտքս լաւ կապել. . . Հիմայ լսեցի օրիորդի հիւանդութեան դառն համբաւը.

—Թէպէտ երեք օրէն աւելի է հիւանդանալը, բայց . . . այսօր, Պ. Ներսէ՛ս, այսօր շատ տկար է, իւր ննջարանը գիտէք, եթէ կամենաք գնացէք միանդ ամ. . .

—Լաւ. բայց մարդ կայ հիւանդի մօտ. . .
—Ոչ. . . սակայն՝ դուք գնացէք. . .

—Եթէ կարելի է. . . միասին գնանք:

—Գնացէք. —թոթովեց մայրը՝ արտասուքը սրբելով, —կը հաւատամ ձեզ նորա ոսկրակազմը. . . Բոլորովին մաշուած է, Պ. Ներսէս, դժբաղդ է Մարին. . . բժիշկը լաւ շասաց. . . «Պէտք է հեռագրել պէյին. . . այս է նորա մրակ պահանջը. . . Անհունապէս վիրաւորուած է սիրոս. . .

Ներսէս արագ արագ վեր ելաւ աստիճաններէն, առանց վեղյու, թիկնոց մերկանալու մտաւ օրիորդի ննջարանը:

Արեւի ճառագայթները կը բեկբեկէին վարագոյրներու ծալքերուն մէջ, մերթ անուշ հով, մերթ տապ բերելով. ամեն ինչ տակն ու վրա էր սենեկի մէջ, այս տեղ հանդերձ, այս տեղ գեղերու շիշեր. մի տեղ կանացի զարդեր, մի տեղ թաղարներու ծաղիկներ անխնամ թափուած. Մանկուհին երբեմն խուլ հառաջներ կարձակէ, կը նիրհէ կիսովին վերմակը բացած, դէմքը գունատ, աչաց աղբերակունքը կապուտցած, դեղնած, նիհար ձեռները կուրծքին վրայ խաչածեւ ծալլած՝ կարծես կոպասէ մահուան խոժոռագէմ հրեշտակին իւր վշտահար հոգին նմա աւանդելու:

Ներսէս յուզուեցաւ, արտասուքը հսուեց նորա աչերէն, գողդողալով. զղջացող մեզաւորի պէս, մօտեցաւ նուիրական մահճին, օրիորդի ձեռը խոր ձեռները մեջ առնելով մրմնջեց յուշիկ.

—Մարի՛. . . Մարի՛. . . աչերդ բաց. . . ես եմ. . . Ներսէսը, ես եմ, Մարի՛. . . ինձ էիր ուզում, ինձ կանչում. . . ահա եկայ, զարթի՛ր, տեսնեմ ի՞նչ կուզես.

Անզգայ օրիորդը չէր լսած, կը նիրհէր խառն ընդ մահուան:

—Սորա դառն մահուան պատճառ դու ես՝ ապիթա՛տ, —կըսէր մի ձայն

Ներսէսին, —պիտի մեռնի նա, իւր ծաղիկ հասակը իջնէ մահու փոս . . . նա սէր չունէր, երազներու ովկիանի մէջ նաւարեկ չէր, վիշտ չունէր, կոկիծ չունէր, այդ ամենը նորա համար դու քու հետ բերիր . . . անխոհ հեմ մայրն ու հայրը քեզ արժանիքէր աւելի յարգեցին, սիրեցին, անմեղ օրիորդի քով դովեցին . . . հրապուրուեցան.

Նա մեռնում է . . . դու ի՞նչ ես. հրե՛շ, քեզ ատողը կը պաշտես, իսկ պաշտողը մահուան կը դատապարտես: Տե՛ս, տե՛ս այս խաչածեւ ծալլուած փոքրիկ, սիրուն դալկահար ձեռները, տե՛ս, լսի՛ր սրտին կոկծալի ելեւէջը և տե՛ս մանիշակագոյն կոպէրն ու խառնուած թերթերանքը. նոքա քեզ համար այդպէս եղան, դուցէ սիրտը մինչեւ ի վերջ քեզի համար պիտի բարախէ: Դեռ պիտի յամառի՞ս մի վատ լիշատակի ստուերին տակ, դեռ պիտի պաշտե՞ն նորան . . . մի վայրկեան եւս. ահա՛ կը մեռնի նա: Օ՞ն . . . շտապիր, զարթեցուր, չոքի՛ր նորա առաջ ամբարտաւան սրտիդ ծկները խոնահեցնելու, վերցուր քեզ համար տրոփող, տղմի մէջ թաւալուած վիրաւոր սիրտը և դիր սիրու սեղանի վերայ . . .

Ներսէս շուրջ նայեց, նկատեց՝ որ մարդ չկայ, նորա ձեռը համբութելով.

—Մարի՛, Մարի՛, —թոթովեց, —Մարի՛, զարթիր քեզ հետ եմ, ա՞հ . . . իւեղն տղայ . . . մի ահեղ վիշտ էլ դու ինձ տալու էիր սահմանուած:

Մարի չէր լսեր, Ներսէս կասկածելով շապկի և ֆանէլայի կոճակները արձակեց, ուզեց ձեռը սրտին դնել կենդանութիւնն ստուգելու համար, երգարան և մետալիօն միասին ամփոփուած էին, ձեռները դողդացին, չկարողացաւ յառաջադրածը իրագործել, ձեռք տալ անարատ էակի կը ծքին՝ որի պահապանն կարծնու Աստուած ինքն էր: Ներսէս կը սարսէր բոլոր մարմնով, հոգին սարսափի մէջ էր, ի՞նչ ընէր . . . Ահ ու դողօվ մակուսացաւ:

—Ա՞հ, գո՛ւ, գու եզար պատճառ . . . ի՞նչ ունէր այս հէտ մանկուհին, աղաւնու պէս անմեղ, տատրակի պէս զուարթ էր նա . . . դու նորա հոգին խոռովեցիր, սիրտը սիրով ալեկոծեցիր . . . ահաւասիկ մեռնում է նա, զոհուում է նա իւր սիրած տղամարդից զրկուելուն համար: Վարդուհի փառասէր էր, Ներսէս խաբեց, թշուառութեանդ մէջ ուրացաւ քեզ . . . դաւաճանեց սիրոյդ դէմ, այս հէտ մանկուհին ընկած վիճակիդ մէջ սիրեց քեզ, սիրեց, չը սիրուեցաւ . . . սիրելը ապացուցանելու համար մեռնում է նա: Տակաւին՝ Ներսէս, սիրում ե՞ս վարդուհուն, պաշտելին առում և մահուան ծոցը գլորում քո երգարանն ու ժողովնու իրը սիրոյն վոխարէն նուիրելով . . . Քննի՛ր սիրտդ . . . այս՛, չես կարող սիրել, բայց վոխարէն նուիրելով . . . Քննի՛ր սիրտդ . . . այս՛, չես կարող սիրել, բայց վոխարէն նուիրելով . . . անապարէ՛, խէ նորան գերեզմանից այժմ . . . յեկարո՞ղ ես սպաննել . . . անապարէ՛, խէ նորան գերեզմանից այժմ . . . յե-

տոյ որոշիր ընելիքդ: Քանի որ չես կարող քո սիրած դրուժանուհու հետ պակուիլ, գէթ կարեկցաւթեան գորովով գրկիր նորան, սնունդ տուր նորան, ազատիր նորան, վարդուհու լոյս չունիս, չես կարող ճակատդ նորա ճակտին միացնել, սիրախառն ատելութիւն սնուցանում ես քո մէջ, մին նուազում միւսն երթալով աճում է քո մէջ, մի օր սիրտդ թափուր պիտի մնայ, կարող պիտի լինիս տալ Մարիին . . . այդ դեղնած լրթունքէն ստացիր յոյս, այդ գոցուած աշերէն ստացիր լոյս . . . սէր առ սիրոյ զոհից: Ծտապի՛ր. ընելիքդ որոշեցիր, Մարին պիտի փորձես սիրել ակամայ կեղծելով մինչեւ ի վերջ և ի հարկին անունդ տաս նորան, ուրեմն փորձիր զարթեցնել, քանի որ չէ մեռած, փրկի՛ր քեզ սիրողի կեանքը՝ քոնը նորան տեղ տալով . . . —Ներսէսի խղճին մէջ այսպիսի բիւրաւոր խորհուրդներ կը խուժէին, վերջապէս՝ պիտի փորձէր ակամայ սիրել, մինչեւ իսկ ամուսնանար նորան փրկելու համար: Ուստի ներքին ձայնէն յաղթուած՝ բերանը մօտեցուց օրիորդի ականջին, մինչդեռ իւր թռնավէժ արցունքը Մարիի այտերը կը թրէին, մրմռաց:

—Մարի՛, Մարի՛ . . . ես եմ . . . ուզածդ քեզ տալու եմ եկած . . .

Ներսէս կարծեց մի տխուր ժպիտ նկատել նորա դեղնօրակ այտերին վրայ:

—Օ՞հ, —ասաց ինքնին, —երկիւղ չկայ . . . կարծում է թէ երազ է, շարունակենք, —ապա բարձր ձայնով, —Մարի ջան, ես ներսէսն եմ . . . քեզ համար եկայ . . . կը սիրեմ քեզ:

Մարիի գէմքը կծկուեցաւ, ինքն բոլոր մարմնովը ցնցուեցաւ, աչքը կիսովին բացեց, Ներսէս իւր մօտն էր . . . նուաղեցաւ . . .

ԳԼՈՒԽ Զ.

Բագուի նաւթահանքերէն միոյն մէջ՝ գործաւորաց վերատեսուչ էր Կ. Պոլսեցի Մարութ էֆ. Քաւալեան անուն երիտասարդը:

Նա ամիսը 150 րուագ կստանար և բոլոր ծախքը տիրոջը կը վերաբէրէին, ուստի՝ գրեթէ 150 րուագին նոյնութեամբ օգուտ էր էֆէնտիին:

Նա բարձրահասակ, կայտառ, բաւականին գեղադէմ, մրայօն մի երիտասարդ էր: Գիտէր Հայերէն, Թրանսերէն, Ռուսերէն, Տաճկերէն խիստ լաւ խօսիլ և գրել. Ունէր և գրելու տաղանդ՝ մանաւանդ բանաստեղծական ճիւղի մէջ, սիրոյ կոկիկ քառեակներ, բոնազրօսիկ յանգերով ոտանաւորներ կարող էր գրել. բայց պարբերական գինեմոլութիւնը զինք խլած էր ասպարիզէն, զրկել էր գրադէտի փառքէն:

«Այսօր Բարեկենդան է, չեմ կարող առանձնանալ սրտիս կարօտն ու
ու սէրը գծելու, չեմ կարող երկար գրել, պէջը գուցէ կասկածի, թո՛ղ
թաղուի նա իւր կոյր վատահութեան մէջ...»

«Սիրով և կարօտիւ»
«Մնամք քոյդ»

«Տ. Գ. Գասպարեան»

«Պաշտելիդ ի՞մ.
«Նամակդ բոլորովին ապահովեց ինձ, Այս՝ պէտք է Մարին ուրիշի մը
տալ, Սահառունիէն լաւը չկայ. Այդ պարոնը զգայուն, անուշ երիտա-
սարդ մ'է, կարծես մի միայն սիրելու և սիրուելու համար ծնուած...»
«Գիտե՞ս, տիկին, ո՞վ է այդ Սահառունին, անշուշտ՝ ոչ, նա չըսէր
իր ով լինելը, բայց ես նորան լաւ կը ճանաչեմ, ուստի ներկայացնեմ
ձեզ զայն.»

«Պ. Ներսէս Բագուի բարձր ընտանիքներէն միոյն կը պատկանի :
«Ուսման շըջանը աւարտելէ յետոյ մտաւ զինուորական ծառայութեան,
մի քաջ սպայ եղաւ, օր աւուր աստիճանը կը բարձրանար :
«Երիտասարդ սպայն կը սիրահարի Վարդուհի անուն աղջկայ մը հետ.
քիչ ժամանակէն աղջիկը ուրիշ սիրահար մը ճարելով զինք կը լքանէ : Նա-
խանձու Սահառունին հակառակորդին հետ կը մենամարտի առանց կան.
խաւ հրաման ստանալու և կսպաննէ :

«Երեք ամիս առաջ կառավարութիւնը զինք պիտի բանտարկէր, լսե-
լուն պէս փախաւ եկաւ Տաճկաստան, Ներսէսի յանցանքը թէպէտ մեծ
է, բայց, ի պատիւ նորա ծերունի հօրը, որ հետու է, զինք անպարտ
է չուշակցին, որովհետեւ մենամարտել էր, ոչ թէ վատաբար սպաննել.»

«Արդ, Ներսէս իւր հօր միակ ժառանգն է որու հարստութիւնը կը
հասնի մէկ, կամ մէկ ու կէս միեկօն ըուպլու. Բագուի մէջ ունին ճոխ
կալուածներ, գործարաններ, իսկ գաւառները 40-50 մեծ ու փոքր գիւ-
կալուածներ... Հայրը նորա ուր լինելը չդիտէ, ես ալ չեմ ըսեր մինչեւ գու-
գեր... Հայրը լաւ մ'ամբացնես ուղածիդ պէս:

«Մրագիրս քանի մ'օրէն պիտի գործադրեմ...»
«Կը յուսամ շուտով գալ և փարել քեզ լի կարօտով»

«Քոյդ»
«Մ. Փաւալեան»

1873 թ., 4 ն Մարտի, ի Բագու

Մարտի վերջերը, մի տխուր գիշեր էր

Ամպերու ահագին սեւ բեկորներ կը գլորէին իրար ետեւէ և հետըզ-
հետէ կը գոցէին երկնից գմբեթը. Հիւսիսային սաստիկ քամին կը մը-
ռնչէր փողոցներու մէջ, մարդ չէր համարձակէր գուրս ելնելու. Տակա-
ւին կէս գիշեր չեղած՝ մի որոտում սարսափեցուց Բագուն, յակամայս
շատեր գուրս ելան. Թէպէտ երկինք ամպամած, գիշերը մթին, ցուրտ-
բայց և այսպէս քաղաքը լուսաւորուած էր. Նաւթի գործարաններու
կողմէն կը գար մի սաստիկ լոյս...»

— Հրդեհ... հրդեհ, — աղաղակը զարթեցուց. Բագուի հասարակու-
թիւնը, խուժանը դոոյթ տալով խուճապեց գէպի եղերավայրը.

Ահուելի տեսարան :

Կարծես գժոխք մարմացել էր ի թագու. մի հրեղէն լիճ երթալով կը
ծաւալէր աջ և ահեակ: Ո՛չ միայն մի, այլ քանի մը գործարաններ հրոյ
ճարակ են եղել... Կրակի բոցը սանձարձակ վիշապի պէս, մերի մինչեւ
երկնից արտեւանը բարձրանալ կը նկրտի, մերթ զայրացած ալիքը ծայ-
րատելով կոհակ, կոհակ կ'սողոսկայ փլատակներու վերայ թագաւորելու. Սեւ միի խոր հեղեղներ դարիւ դարիւ կը թուշին վեր բոցին հետ, յան-
կարծ գարչ հոտով կը մթագնին մարդոց աչքը, կը խեղդեն կոկորդը,
ապա կը միանան սեւ ամպերուն:

Մի գալրւկ, տխուր լոյս կը պատկերացնէ տեսարանը :

Շէնքերու ճարճատիւն, դղրդոց, հրդեհի, հողմի մռնիւն, խուժա-
նի գուռում, գոչում, լաց, աղաղակ մի տեսակ ողբ կը յօրինէին տեսա-
նելի գժոխքին շուրջ. Մարդիկ սեւ խօլականներու պէս կ'երեւէին բոցե-
րու առաջ, յանկարծ կը թաղուէին թանձը միի հոսանքին մէջ... հե-
ռուսս դիտողը ճիչ կարձակէր...»

Հրդեհը երթալով կը գալարի, ամբոխը կը թողուէիւր գրաւած տեղը,
կը փախչի հեռու լավլիջող հնոցէն:

Մի տեղ կը քակուին կը կործանին հոյակապ շէնքեր, ուրիշ տեղ մ'ալ
նոր կը բռնկի, մի տեղ սոսկմամբ կը դիտեն հանդիսականք կրակի առատ
աւերը, մի ուրիշ տեղ փլատակաց տակ կը թաղուին, բոցերու մէջ կը
ճենճերին Մշեցի չուառ մշակներ...»

Քաւալեան է ֆէնտի այլայլած, գլխիբաց, մազերը խառնուած, սրտա-
ճալիկ ձայնով կաղաղակէ,

— Ազատեցէ՛ք... ազատեցէ՛ք, Էռա ազատեցէ՛ք. մէկ միլիոն մանէթ
կոչնչանալ նորա մէջ...»

Ոչ ոք չչարժեցաւ տեղէն, ձայնին մէջ կերեւէր կարծես սուր հեղնու-
թիւնը, կամ ահուելի ոճիրը անդիմակ: Ամեն մարդ կաշխատէր մի սեւ
կեանք ազատել, մի կիսամեռ, խորոված մշակ կորզել մարմացած մահ-

ւան ծախիչ ատամներէն, փոխանակ ենթադրական միլիօն պարունակող արկղին, կը ջանալին կորստեան մատնուած ողորմելիներ ազատել գաւալեանի ձայնը մարաւ առանց արձագանդի,

Ժամեր անցան, անցաւ և գիշերը.

Առաւօտուն դադարեցաւ եղերանաց դաշնադիր քամին, չքաշան Աստուծոյ տեսքը ոճրէն հեռացնող ամպերը, արշալուսի կարմրած ցոլքերը հոկայական թռչունի փետուրներու պէս սաւառնեցան հօրիղոնի անծայրէն սպիտակաթուր ծխի կոհակներ միայն կենէին,

Ծի և նոյն օրը իշխան թիլթան և Քաւալեանէն հետեւեալ հեռագիրը ընդունեց,

Այս գիշեր հրդեհ ծագելով մեր գործարանը ոչնչացաւ՝ ընդ որս և դրամարկղը որու մէջ դրուած էր ձեր ուզած մի միլիօն բուպին . . . Մը շակներէն շատեր հրոյ ճարակ եղան, ոմանք աղատեցան՝ ոչ առանց վաշակներէն աղատեցաւ աղնուասիրո իշխանը.

Երկու օր յետոյ Քաւալեան կստանար հետեւեալ հեռագիրը

«Վասի քանակութիւնը ծանուցէք կայսերական կառավարութեան և ապահովիչ ընկերութեան, — ես այսօր ճանապարհ ելայ Բագու գնալու համար . . .»

Քաւալեան իւր տիրոջ հրամանին համաձայն վասի մասին գրեց ուր անկ էր. Մանրակրկիտ քննութեամբ այս եղանակացութեան հանդան է հրդեհը պատահամամբ է ծագած ոչ թէ մասնաւորի մը կողմէն ու է դիտումով . . .»

Քաւալեան էփ. աղատութիւն ինդրեց իւր տիրոջմէն և հետեւեալը գրեց տիկին Գ. Քասպարեանին.

«8ն ապրիլի 74 թ. Բագու»

«Պաշտելիդ իմ.

Այսօր ճանապարհ կենեմ քեղ գալու, վերջապէս՝ յաջողեցայ ծրուտունը երագործել, ընդ երկար տառապելէ յետոյ վերստանալ երջանկութիւն . . .»

«Մ. Քաւուլեան»

ԶԼՈՒԽ Է.

Քաւալեանի նամակը հասնելուն պէս Տ. Քասպարեան հեռագրեց առումուն և լուկեայն պատրաստութիւն տեսաւ.

Քաւալեան պէյի ուղղամտութիւնը չարաչար գործածելէ յետոյ, պատիւը արատուորելով հանդերձ արժանացած էր նորա անձնուէր բարեկամութեան իւր տարփուհուն չորդիւ.

Գասպարեան այնչափ անկեղծ, բարի, պարկեշտ, առաքինի և բարեկամութեան սահմաններուն քաջածանօթ մարդ էր՝ որ չէր կարող հաւատալ թէ կարող է իւր հինաւուրց բարեկամը երկդիմի, վատ և բարեկամութեան սրբազնութեան դէմ մեղանչող լինել.

Մանաւանդ տիկինը՝ ո՞ր սիրով էր հետեւած պէյին, որ պաշտել էր մի ժամանակ և տակաւին կը կեղծէր՝ ապահովել էր նորան.

Գասպարեանի հաւատքով՝ իւր կինը պարկեշտութեան միակ տիպարն էր, միմիայն զինք սիրող ամօւսին. զաւակաց ապագայն խորհող, բարեկարգող, գորովագութ մայր էր.

Անհաւատարմութեան գաղափարը մտքէն անդամ անցնել ոճիր էր.

Ուստի՝ Քաւալեան հաստատուելով ի Գ. իբր հին բարեկամ ազատ մուտք ունէր պէյի տունը.

Մարի առողջացած էր Ներսէսի յոյս տալվը, իւր խելքն ու միտքը միայն զայն պաշտելն էր. Ներսէս եւս քիչ քիչ Վարդուհին մոռանալով կը յարէր Մարիին, կզդար այլ եւս սրտի բուռն սիրով սիրելը, վասնորոյ կը խորհէր նորա ձեռքը խնդրել . . .»

Քաւալեան մի քանի անգամ հանդիպեցաւ Ներսէսին պէյի տանը մէջ, երբէք ծանօթութիւն չը առեց. Ներսէս չէր կարող ճանաչել նորան և չը գիտեր թէ նա Բագուէն է եկած. Մանաւանդ Քաւալեան ներկայացած ժամանակ լաւ տպաւորութիւն չէր ըրած Ներսէսի վրայ. Նա մի տեսակ նախապաշարուած փիլիսոփայ էր. Երբ մէկը իրեն ներկայացնէին՝ անմիջապէս կը գրէր թողած տպաւորութիւնը և ըստ այսմ կը շարունակէր յարաբերութեան. Մարիին իմացաւ Քաւալեանի ինչ լինելը, հասկացաւ՝ որ նա պէյի և տիկինոջ հուկ բուեկան է և նորա խորհրդով կը կարգադրէին իրենց գործերը. Ուստի՝ տարօրինակ չէր երբեմն Քաւալեանը Տիկինը հետ առանձնացած տեսնելը, կամ միասին օղի խմելը գաւաթի շոնկացնելով.

Վատ կասկածներու առաջ ազնիւ հոգիներու ուկեղէն բերանները գոյց միշտ, Աղնիւ մարդը վատութեան մէջ իսկ լաւութիւն կորոնէ. ինչպէս բլբուլը փշալից թփերու մէջ Քափուր Վարդ . . . Ներսէս բոլորովին անկամակած էր, չէր կարող ենթադրել՝ թէ առանձնութիւնը կարող է վատ նպատակաւ լինել.

Այսպէս անցան երեք ամիսներ, Պէլը կ. Պոլսէն վերադարձած չէր։ Ներսէս անվթար կը շարունակէր խղճի մոօք ազգային բուրաստանը մը շակել և յոգնած ժամուն Մարիով զբաղել։

Քաւալեան՝ որովհետեւ անդործ էր, իբր անդործ մարդ գիշեր ցերեկ պէյլ տունն էր։ Միշտ տիկնոջ հետ, միշտ օղու շիշը, աւանսա մօտերը կը խմէին գաւաթ գաւաթի բաղիսելով . . .

Ոչ ոք չէր կարող կասկածիլ Տիկնոջ և Քաւալեանի յարաբերութեան մասին, Գ. քաղաքացին մեծ համարում ունէր Տ. Գասպարեանին վրայ և գիտէին որ նոքա մտերիմ բարեկամներ, հայրենակիցներ էին։

Ներսէս օդոստոս ամօի մէջ միայն զգաց Մարիի խոռլ առելութիւնը գոյց կուտար իւր խորին զղուանքը։

Ներսէս շատ հետաքրքիր եղաւ պատճառը իմանալու, և չը կարողացաւ իսկապէս վերահասու լինել։

Մարի՝ ուրախ, զուարթ աղջիկը, բոլոր վին փոխուեցաւ, տխուր, մը տախոն էր միշտ, երբեմն՝ Ներսէսի մօտ նուտած ժամանակ յանկարծ որտի ուագ փոքրիկ կայլակները։

—Երեւի, —կըսէր Ներսէս մոռվի, —կը ցաւի օրիորդը շուտով ձեռքը չը ինդրելուս, չամուսնանալուս համար . . . Երեւի վախնումէ՝ թէ մի գուցէ կըուի ինձանից։

Այսպէս անցաւ և օդոստոսը։

Մի երեկոյ Ներսէս հրաւիրուած էր պէյխն դրացի արհեստաւորներէն միոյն տունը ընթրելու. Մարի շարունակ կ'երթար, կը դար, «մայրս ձեզ կուզէ, Պ. Ներսէս . . .» կ'ըսէր դրան արանքէն։ Այնչափ կը կնուեցաւ աւս ըամը՝ ո՛ր վերջապէս Ներսէս կիսատ թողուց ընթրեքը և Մարին թեւն առնելով դուրս ելաւ։

Գիշերը մութ էր և ամպամած։

Մարի կը դողար բոլոր մարմնով։
—Ի՞նչ ունիս, Մարի, —հարցուց Ներսէս, —ինչո՞ւ կը դողաս, ի՞նչ բանի համար տիկինը կանչում է ինձ . . .
—Ներեցէք, —կակազեց օրիորդը սրտաշարժ ձայնով, —ներեցէք խաբելուս. մայրս չէ կանչողը, այլ ես . . .

—Լաւ . . . Բայց ք. բացակայութիւնը չէ՞ նշմարւում . . .

—Ո՛չ, Մայրս կը կարծէ թէ միասին այն տեղ ենք. Ես իմացուցի քո հրաւիրուած լինելու և ընկերուհիս պատճառ բոնելով ըսի՝ թէ ես էլ կերթամ սափրիչին, կը նթրենք և միասին կը վերադառնանք . . .

—Լաւ ուրեմն, ինչո՞ւ ընթրեցիր և ինձ ընթրելու շժողիր։

—Այժմ կիմանաս, Դէպի այդիները երթանք, ճեմենք ու խօսինք . . .
—Թայց, Մարի, մութ գիշեր է, . . . ամառ, ամառ, ամառ . . .
—Ես մժութիւն կուզեմ։
—Երթանք ուր որ կուզես . . .

Յառաջացան դէպի այդիները։
Ներսէս կզգար Մարիի սրտին դահավէժ բարախումը։
Գաղափարներու շեղեր կը պաշարէին միտքը . . . ուժդին սիրոյ ցնորքը կեռար մայուերուն մէջ, այսու ամենայնիւ կը զսպէր ինք զինք։

Քաղաքէն դուրս ելած ատենները Ներսէս զգաց ձեռքին վերա մի քանի տաք կաթիլներսւ ընկնելը։ Խորհեցաւ, Մարիի արտասուքն էր։
—Մարի, արտասում ես դու, —մրմզից երիտասարդը դողդոջուն ձայնով, —ի՞նչ ունիս, սիրելին, ահա ելանք քաղաքից, առանձին ինք ես ու դու, խօսի՛ր, պատմի՛ր ինձ, ի՞նչն է վշտացնում քեզ. Է՞ր կարտառես . . .

—Այսո՛, եկանք այստեղ՝ որ վշտերս քեզ բանամ, պաշտելի՛ Ներսէս, լոէ՛ ինծի, Ըսելիքս ծանրակշիռ է . . . բայց՝ դու խելացի ես, գիտուն ես, կարող ես անմիջապէս դարմանել վշտերս . . . միջոցներ գտնել։

—Յառաջաբանդ խիստ է. վերջաբանը տեսնենք, Մարի՛ջան, ահաւասիկ՝ ուշադիր քեզ եմ լսում . . .

—Ներսէս ջան . . . մի ամիս է հանգստութիւն չունիմ . . .

—Ես արդէն նշմարել էի այդ . . .

—Այսո՛, նշմարեր էիր բայց՝ պատճառը չը գիտես . . . Ներսէս, անտառելի է դարձած ինձ հայրենի տունը . . . կուզեմ հեռանալ քեզ հետ . . .

—Անշուշտ պակուելներիս պէս պիտի հեռանանք։

—Ես այժմ իսկ կուզեմ . . .

—Անտարակոյս պէտք է պատճառը բացատրես։

—Պատճառը մի հարցներ . . . Հայրենի յարկի տակ խիստ կը նեղուիմ, Պ. Գաւալեանի ներկայութիւնը անտանելի է ինձ . . . չարագուշակ դէմք ունի, կատեմ զինքը բնազդմամբ, չեմ ուզեր երեսը տեսնել . . .

—Բայց . . . Մարի՛ . . .

—Լոէ՛, Ներսէս ջան, Երբ նորան տեսնեմ՝ սիրտս կը բարախէ, աչերս կը մթագնին, միտքս կը մոլորի, բոլոր մարմնով կը սարսուամ, կը դողամ և չգիտեմ ինչո՞ւ լալ կուզեմ . . . Այդ մարդը հրեշ մ'է, Ներսէ՛ս, ճիւազ է անիծեալը. Հազարաւոր տիսուր զգացումներ կը պղտորեն սիրտը, կուզեմ խեղդել զինքը։

—Սակայն, Մարի՛, չէ՞ որ նա ձեր ընտանեաց լաւ բարեկամն է . . .

—Այսո՛ . . . բարեկամ է, մանաւանդ հոր լաւ բարեկամ . . . կուզե պատիւն ու հարստութիւնը երկինք բարձրացնել . . . կուզե ամէն բան ընել հոր բարօրութեան, երջանկութեան համար։

— Ուրեմն ի՞նչ բանից ծնվում է հակակրութիւնը քո մէջ . . .
 — Թողնե՞նք, սիրելի՛ս, անպէտք խօսքը, բուն խնդրոյն դառնանք . . .
 Մի հարց միայն ունիմ քեզ ուղղելու . . . Ներսէ՛ս, կը սիրե՞ս ինձ . . .
 — Տակաւին կասկածում ես .
 — Լաւ ուրեմն. եթէ կը սիրես ինձ՝ պէտք է մենք, ես ու դու, հեռանանք այս երկրէն . . . այո՛, հեռանանք . . . կը զգուիմ . . . Ներսէ՛ս, ես կուգամ քեզի հետ. տա՛ր ուր որ կուզես, տա՛ր հօրդ տունը . . . Բագու երթա՞նք, մեղք է ծերունի հայրդ, նա ամէն օր քեզի համար կուլայ .
 — Դու ի՞նչ գիտես հայր ունենալս, — հարցուց Ներսէս հետաքրքրութեամբ .
 — Գիտեմ, Ներսէս ջան, ամէն ինչ գիտեմ. Որուս կառավարութիւնը ներել է յանցանքդ, այսուհետեւ ազատ ես վերադառնալի Բագու, ազատ ես շարունակել սպայական ժառայութիւնդ . . .
 — Մարի ջա՞ն, դու ումի՞ց իմացար այդ բաները . . .
 — Քաւալեանէն: Նա քեզ շատ լաւ կը ճանաչէ: Գլահէդ անցածները մի առ մի մօրս պատմեց լուսավորութեան ներկայ լինելով լսեցի ամեն բան . . . Վարդուհին զղացած է . . .
 — Նշանակութիւն չունի զղալը . . . Ուրեմն ինչո՞ւ ինձ հետ չէ ծանօթանում այդ հետեւ Քաւալեանը:
 — Նա գիտցածը պահելու, չծանօթանալու մէջ շահ ունի.
 — Ի՞նչ շահ կարող է ունենալ . . .
 — Օրինակի համար մեր ամուսնութիւնը, որովհետեւ՝ նա կը կարծէ թէ՛ եթէ դու գիտենաս կառավարութեան ներելը, Վարդուհու զղալը, կը լքանես ինձ . . .
 — Ուրեմն ցանկանում է նա տեսնել մեր ամուսնութիւնը.
 — Պայմանաւ, կը ցանկայ՝ եթէ իւր մի կեղտուտ ծրագիրը գործադրէ, այսինքն՝ եթէ յաջողին հայրու սպանեւ, չի ցանկար՝ եթէ չը յաջողին, այն ատեն ինձ կնութեան պիտի ուզէ . . .
 — Մարի, ի՞նչ կըսես, երբ այդպիսի վատ խորհուրդներ լսել ես, ինչո՞ւ մօրդ չես իմացնում . . . թոյլ կուտա՞ս պէյին գրել . . .
 — Ո՞չ. Ես առաջը կառնեմ այդ ոճրին: Բայց պէտք է մենք հեռանք, որպէս զի օդակար լինինք: Պէտք է դու բոլորովին լուս մնաս, երբէք ակնարկութիւն չընես, որովհետեւ չպիտի յաջողին . . .
 — Խօսք կուտամ:
 — Շատ լաւ, կը հաւատամ խօսքիդ . . .
 — Ուրեմն մօրդ իմացնեմ լուելեայն մեր չուելը և այնպէս երթանք . . .
 — Ամենեւին իմաց մի՛ տար և մի՛ խօսիր ո՛ և է բան, ի՞նչ, միթէ պէտք ունի՞ս օժիտի, կ'ակնկալե՞ս ո՛ և է բան . . .

— Ո՞չ բնաւ . . . ի՞նչ օժիտ . . .
 — Իմ օժիտ բերելս անհրաժե՞շտ է . . .
 — Երբէ՞ք. Ե՞ս օժիտի համար ամուսնացող չեմ. Ես գլխովին հակառակ լինելով այդ վատ սովորութեան ցածութիւն եմ համարում օժիտ պահանջելը. դրամի հե՞տ պէտք է պասկուիլ.
 — Ուրեմն, պէտք չէ մօրս իմացնել. պատրաստ երկու ձիեր կան, այս գիշեր եւեթ կարող ենք ենել Մէրսինի նաւահանդիստը և առաւտուն մտնել շոգենաւ, ուղղակի Փօթի կամ Օտէսսա երթալու պայմանով, ի՞նչ, չի՞ լինիր . . .
 — Սակայն՝ Մարի՛, ինչո՞ւ այդպէս անել. լաւ չէ՞ օրինաւորապէս ամուսնանալից յետոյ գնալ, բոլոր եւրոպան շրջելից յետոյ հասնել Բագու . . .
 — Լաւ է՝ այո՛, բայց մեր դիրքը ունեցողներու համար չէ. Ներսէս', կանխաղգացմամբ կը գուշակեմ՝ թէ ապերջանիկ պիտի լինիմ այստեղ մնալով և հօրս մահուան պատճառ:
 — Մարի՛, կցկառուր խօսքից ոչինչ չեմ կարող հասկանալ և մակաբերել այն՝ ինչ որ չես ուզում ասել. ինչո՞ւ նա պէտք է դաւադրէ պէյի կեանքի դէմ . . . ի՞նչ շահ ունի:
 — Չեմ կարել ասել, — պատասխանեց Մարի:
 — Ինձանից ծածկում ես բուն պատճառը . . .
 Մարի փղձկեցաւ, արցունքը սրբեց, ապա չունչ առնելով՝ ըսաց.
 — Ներսէս ջա՞ն, ինձ մի՛ հարցեր այն՝ ինչ որ չեմ կարող ըսել . . . Կը սոսկամ, չեմ ուզեր մեր այս տեղ մնալը . . . այս երկիրն անտանելի է ինձ համար . . . օր աւուր կը հալիմ, կը մաշուիմ երբ կզգամ տակաւին այս տեղ լինելներս . . . կատեմ այս երկիրը և պիտի ատեմ մինչեւ ի մահ. Ներսէս', փախո՞ւր, հեռացո՞ւր, ազատէ՛ ինձ, տա՛ր, ուր որ կուզես, կամ սպաննէ՛ ինձ այս ամայի ծառաստանին մէջ՝ ուր միան տերեւներու կոծը կը լսուի. այո՛, ուրախութեամբ պիտի մեռնիմ քո ձեռօք, որովհետեւ սիրած մարդուս բազուկն է այն, բայց . . . մնա՞լ այս տեղ, մնա՞լ սարսափ ազդող տան մէջ՝ կարելի չէ . . . Ներսէս', եթէ չը սիրէի քեզ, անծանօթ լինէի քեզ՝ ես ինքնին կը հեռանայի, կը փախչէի անծանօթ երկիրներ . . .
 — Մարի՛ ջան, — միջամտեց Ներսէս, — նպատակդ տխուր ոճով՝ նըկարագրում ես ինձ . . . բայց՝ լսի՛ր, ես չեմ կարող առեւանդել քեզ, ըսպասի՛ր, թո՞ղ պէյլ գա, նորանից ձեռքդ ինդրեմ. պսակուինք և այն պէս հեռանանք, քանի որ բուն պատճառը ծածկում ես:
 — Ես սարսափի մէջ եմ . . .
 — Ընդհակառակը քո կասկածները անտրամբանական, սին, բոլորովին տղայական են, որովհետեւ Քաւալեան չէ կարող ո՛ և է վաս հասու

ցանել պէիին, քանի որ այժմ մենք իմանում ենք՝ թէ գուցէ մի օր ուզէ այդպիսի մի բան սարքել.

— Ուրեմն կը մերժե՞ս

— Բոլորովին.

Մարի լոեց. Ներսէս դարձաւ դէպի քաղաք.

— Գու ինքնին խորհի՛ր, Մարի, — Երկար լոռոթենէ վերջ ասաց ներսէս, — Քաւալեան ի՞նչպէս պիտի յանդգնի սիրող ամուսնի, սիրող դքսեր և սիրող փեսայացուի գրիերում սպանել պէյը. Ե՛թէ յանդգնի իսկ գործել, ես ինքս և նորա բաժինը կը տամ

— Ես կը հնազանդիմ քեզ առանց համոզուելու, առանց ապագային պատասխանառու լինելու

— Համոզուի՛ր, Մարի՛ ջան, համոզուի՛ր, պէյը չպիտի զլանայ մեղ ամուսնացնել, որովհետեւ՝ ինքն արդէն խոստացած է ինձ. Քաւալեանի թրշնամութիւնը ոչինչ պիտի լինի, որովհետեւ՝ մենք թափանցած ենք նորա գաղտնիքի խորերում. Ո՞ր պատուաւոր մարդը կարող է իւր խօսքը գլուխել, ո՞ր չարագործը յանդգնում է յայտնի համարձակ ձեռնամուխ լինել ոճը: Մի՛ յուսալ: Մենք պիտի պսակուինք, կրկնում եմ, մենք պիտի վայելենք մեր սէրը նոյն իսկ նորա առաջ և ապրեցնենք սիրելի պէյը մեր գրկերում. . . .

— Ինչպէս ըսի, չեմ համոզուիր, մեղքը վիզդ:

— Շատ լաւ.

Վերադարձան տուն առանց խօսելու.

Մարիի սիրաը ցաւած էր Ներսէսին, դժբաղդ սիրուհին չէր կարողացած համոզել նորան. Իսկ Ներսէս կորոնէր խորդի բուն պատճառը. Նոյն երեկոյ երկումն էլ տիսուր էին, իրար չէին ժամանակ:

Միւսն Քաւալեան և Յ. Քասպարեան կը պարզէին օղու լի դաւաթ- ներ բուռն ոգեւորութեամբ առանց մտածելու օրիորդի և Ներսէսի վենայ: Վերջինը մտազբազ նպատած էր մի անկիւն, կորոնէր գաղտնեաց հանդույշները

Ընթրիքէն յետոյ դուրս ելաւ պարտէղ ճեմելու:

Ընթեցողը կը յիշէ թէ գիշերը մութ էր, ոչինչ չէր երեւեր.

Ներսէս անցաւ մի քանի ժառուղիներու միջով, մեքենապէս դիմեց խոհատան կողմը, լուսամուտի առաջ կանդ առաւ յանկարծ, որոշապէս հետեւեալ խօսքը լսելուն համար.

— Հըյալ հէ՛, — կըսէր վայրենի սպասաւորի առոյդ ձայնը, — Դու չը-

քու զի ծիկիկ էղնիլ, մալը միրաթ, կըսիս դու քուրտիս, հայտուտիս

— Ի հարկէ, — պատասխանեց մի կանացի ձայն, — կուզենիս ինծի ձեր լեռները տանիլ, ոջլի, աղտի մէջ փլեցնել, խե՞նթ, ես կուգա՞մ

— Լո՛, հըյրա՞ն, աշէ ի՞նչ տի մնլեմ, վիշուր մի ժղինք, չասկենանք զիրար միտք . . . Էսա աղի տուն ծիւլ, քի լը դժոխաց աւալի: Էսա տան մէջ ասու կրակ տի թափի, զիլիկ, ծիլիկ իրիցու, զըմեննըլ մոխիր դառցու . . . Էսա տան միջ տիւն ջուր բուննի դրուկ, դու հըմկայ ը՛ զի՞նչ կէսիս . . . Միր յուդայ մնալն գէշի, հըյրա՞ն

— Աւտօ՛, Աւտօ՛, խենդ ու խելառ հերիք դուս տաս, ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր, սիրելը մեղք է . . . ըշտա օրիորդն ալ ներսէսին կը սիրէ: ան օրիորդը՝ Աւտօ՛, օր դու կըսես թէ հւակի (հրեշտակ) սիրելը մեղք է նէ, ինչի՞ դուն ալ ինծի կը սիրես . . . ամեն օր կըսես էրբոնդ շուշ:

— Սպետկերիս սըրպ-Աղբերիկ, դու ժխօ քղիք հուհու խելք չունիք, ըծօ՛, աղջիկ, դու զիմ թափիաթ գիննաս, կի ճանշնաս ըղ խինդ Աւտօն, իս սուտ բան ըսիլ, զրուցիլ չը գինանք, միր ըսած կէնինք . . . վալլա՛, բիլլա՛, թա՛լլա՛, թըհ բազշինք զուր չաղիգալ, իս դուրծը ուրիշ աւատինինք

— Զունը խենթուկ գլխուդ, լիզուդ ալչեմ հակնայ

— Զիմ սիրտ ժխօ կի հասկնաս

Այս միջոցին լսուեցաւ համբոյրի ձայնը

Ներսէս անձախ կսպասէր, գաղտնեաց հոտը առնել կարծեց:

— Դու՛, Շուշօ՛, ըզ մըր սիր ու զընունց սիր միկ կիսպիս, հըյրան, աշ է՛, իսըլ, դու ըլ աղատինք, խիտրաց մըջիք տի՛ պսակի էրէց, հըմազի՞նչ կէսիս մըր խանումին, յօրի՞ն ջուր հալալ, պառու աւամմարդ թորկուկ գիշուկէն կէ՛նի. յօրի՞ն զպէյ կղտոտի, ըզ Մօրութ աֆանտի սիր

— Ամա՞ն Աւտօ՛, հերիք խենթու խելառ դուս տաս: Ծառաները շատ բան կը լսին, կը տեսնեն, ոչինչ խօսնելու, պատելու չեն: Դու ալ լուռ էղիր, մի խօսիր . . . Հաղար անդամ ըսիր թէ զըպէյ կիսիրիմ, շատ լաւ, անոր թէ օրիորդին խաթեր համար լուռ կինալու ես: Գիտե՞ս, Աւտօն, յայտնէլէտ սոսկալի հետեւութիւն կունենայ: Այս տեղ քաղաք է, ձեր գաւառը, Սասնէր չէ, այդպէս բան մը իմացուելուն պէս օրիորդին ալ, պէյին ալ պատիւը կը մեռնի

— Ուր քիֆնի, ըզի՞նչ կեղնի՝ թըհ էղնի, ծի ի՞նչ, քի ի՞նչ . . . Գիննաս, Շուշօ՛, ըզ մըր շինըկիր իմը ին: Տի՛ պատմիս: Մեր գաւրացիք հըմլա բան չընդինաս, թըհ կիկմիզուր մարդ թօրկուկ զուրիշ սիրի, իրիկ զէն կիսպանի, զարնուտ հուր ու մուր կիտանի զընուր պապուն՝ կիսի, վաւլե՛ր, պապօ, էտարզքո աղջկայ արնուտ շապիկնի, մալըմիրաթը, զիմ տան շիմին մուր քիսից, մկայ՝ զըինք ըսպանի, ջուր հուր ու մուր քիբերի, ա՛ռ ըզքո կնկայ լաշակ գլուխդ ի պատի:

« Ըսպիտկերիս Սըբ-աղբերէն, Սըբ-մըհնակ, Սըբ իսւնէին ըզքո թուր

կտրուկ էնին, շաօ', —կասի պապը, —քու ըլ, իմը շիմաց կղտիր մաքրե՛ցիր :

«Պապ կառնի ըզ հուր ու մուր, զարուն հալալ կենի, —ես ըսի՝ թէ այստեղ կելիկիա է, Սասուն չէ՝ Աւտո ջան, —Մենք հրմաղ բան չըսիրինք . . . զուր աղի գալ հու հու մարդու չըմ ըսի. աղէն ուր իկաւ, կի պատմիմ զիմ լսած ու տեսած ինք գիննա զուր բան :

—Լաւ, մինչեւ գալը մի՛ խօսիր . . . Ներսէս այլ եւս չը ժուժեց. բոլոր մարմով կը դողար, ահռելի յայտնութիւնը սարսափով համակեց ոգին. Քիչ քիչ մօտեցաւ խոհատան լուսամուտէն դիտելու :

Սպասաւոր Աւտոն և Շուշան սպասուհին էին խօսողները : Զորս կողմը նայեց լրտեսի աչքով, ապա ներս մտաւ : Շուշան երկիւղով վեր ցածքեց, բայց՝ անվախ Սասնցին ժպտելով ընդունեց, նորա համար ոչինչ անբնական չէր :

Ներսէսի խնդրանաց համաձայն՝ պատմեց թէ ինք, օրիորդ Մարի և Ներսէսի խնդրանաց համաձայն՝ պատմեց թէ ինք, օրիորդ Մարի և Շուշան քանիցս ուշադիր դիտած, տեսած էին տիկնոջ արարքը Քաւալեանի հետ :

Ներսէս շանթահարեցաւ ցաւալի ճշմարտութենէն : Մարիի կցկտուր խօսքին իմաստները հասկցաւ և նորա սրտի տագումատուր, հեռանալ ուղելուն բուն շարժառիթը :

ԳԼՈՒԽ Բ.

Միջօրէի տապախառն խորշակը թուլացուցած էր գործարանաւոր և անդործարան մարմինները . . . Թուչուններ չեն երեւեր : Մարդիկ հով կիզիչ արեւու ուղղահայեաց ճառագոյթներուն ենթակայ էին :

Գ. Քաղաքի, —վարժարանի ընդարձակ դաւիթը՝ թէպէտ ծառազարդ, պատարկ էր կարծես : Սաներէն ոմանք ճաշեր էին իրենց տներուն մէջ և գատարկ էր կարծես : Սաներէն ոմանք ճաշեր էին իրենց տներուն մէջ :

Տեսչարանի լուսամուտները ծածկել էին ծիրանի վարագոյրներ, որք վերադարձէր կը խաղախին հաստաբուն կաղնիներու հովերուն մէջ :

Օրիորդաց կողմը նայող լուսամուտներէն միոյն մի փեղկը բաց էր մի-այն : Ուշադիր անցորդը կը նշամարէր մի պատկեր ապակու մէջ, մի զոյգ

աշեր անթարթ սեւեռուած, կարծես կենդանի պատկեր էր . . . Ներսէս ինքն էր մահճակալի վերայ տարածուած :

Նա հիւանդ էր :

Բաց թողած լուսամուտի ապակուն մէջ կը տեսնէր որոշապէս գաւթի ամեն մի անկիւնը խաղացող մանուկները, եկող գնացողները :

Բայց նա կապասէր, կը նայէր միայն մինը տեսնելու համար : Իւր սիրական Մարին կուշանար . . .

Ներսէս գունատ, տխուր, ընկճուած էր բոլորովին :

Նորա հիւանդութիւնը ֆիղիքական չէր, այլ հոգեկան :

Երբ Աւտո պատմեց իւր տեսածները, լսածները, ինք լսեց Մարիի գուշակած գաղտնին, մտքին մէջ ծնաւ մի սարսափելի կարծիք :

Ինք լաւ նկատած էր Մարիի ֆիղիքապէս և հոգեպէս մօրը նմանիլը :

Գիտէր օր մի և նոյն խացականութիւն, զգացողութիւն, կամսկան զօրութիւն ընդհանրապէս կը լինին նմաններու մէջ առաւել կամ նուազ տարբերութեամբ : Հետեւապէ՛ եղրակացուց թէ մի օր Մարի եւս պիտի մեղանչէ իւր դէմ, մի օր Մարի եւս անառակութեան մէջ գլորուելով ու մուր պիտի քսէ ամռանի, զաւակներու և ամբողջ ցեղի ճակտին : Այս այսպէս ենթադրելի յետոյ՝ իւր մէջ սկսուեցաւ ներքին պատերազմը :

Երկրորդ օրն եւեթ փոխադրուեցաւ ի տեսչարան :

Բուռն յուղումը քունը խանգարեց : Տկարացաւ և ֆիղիգապէս, ինք զինք անկարող համարելով անկողնէ ելնելու՝ մի քանի օր պառկեցաւ իւր հիւանդ :

Խեղճ երիտասարդը կը տանջուէր :

Ներսէս իւր գիտուն, գաստիարակուած մարդ՝ արդարեւ մէծ տեղունէր, յաշս ո՛չ միայն հասարակութեան այլ և զարգացած գիտուններու, որովհետեւ՝ գրական ասպարէզի մէջ յայտնի էր իւր բաւաստեղծ, պատմարան և յօդուածադիր : Սակայն մեծ զարգացման հետ ունէր նաև մեծ թերութիւններ օր ի մանկութենէ ունականալով մասնաւոր հանգամանքներ էին գարձած :

Ո՞վ կարող է ուրանալ այս յայտնի իրողութիւնը՝ թէ ժառանգական ախտի պէս և հոգեկան յատկութիւններ ցեղէ ցեղ կը փոխադրուին : Ընտանեկան լաւ կամ յոտի սովորութիւններ կը մնան յորդւոց որդի : Անմեղ մանկան հասողութեան, զարգացման, գաստիարակութեան տարերաց նախնական աղդեցութիւնները ընտանեկան յարկի տակ կը պարունակուին : Ներսէսի գիտութիւնը այլափոխած չէր նորա հոգին, օրօրանէն առած սկզբանց հաւատարիմ գերի, ընտանեկան սրբութեան երիւղածքահանայ էր նա, ինք քաջ հոգերան՝ մատաղ մանուկներու զուարթ հոգիններուն դեկավար, չէր կարող եղերել իւր կիրքերը, չէր կարող խորա-

մանկ լինել, աղաւնու անմեղութեամբ կը վերաբերէր դէպի թշնամին ու բարեկամք: Այդ իսկ պատճառաւ դժբաղդ էր նա, ահա այս բանի մէջ կը ծածկուին մէ ներ-նէ-աւեւ:

ինչպէս Քաւալեան գրել էր, «զգայնիկի պէս օիրտ ունի...» Ներսէս միմիայն սիրելու սիրուելու համար է ծնուած, ինչպէս փոքրիկ ճըմի մը ջղայնիկի ստին ելած ատեն կը գոցուին նորա տերեւները, այնպէս մի թեթեւ վիշտ կը փակէր ներսէսի սրտին բացուած վարդերը կոկոններու վերածելով:

Թէպէտ շատ էր կարդացած պատմութիւններ, ինք աշխարհի կրօնական, պատմական կենդանի յիշատակարանն էր, շատ էր կարդացած հական, պատմական պատմութիւն, վէպ փոխած չէին նորան, նա իւր պարզ այնու ամենայնիւ պատմութիւն, վէպ փոխած չէին նորան, նա իւր պարզ առաքինի, երկիւղած մօրը կենդանի պատկերը, արդարակորով, խղճի մոտ գործող հօրը կենաց շարունակութիւնն էր միշտ: Համալսարանի բարձրագոյն կրթութիւնը հօրենական տան սկզբանց ծառայէր միայն:

—Դիմիտրի, —ըսաց ծաւային, —գնա՛ հեռագրատունը, անմիջապէս հեռագրէ իմ անսասան որոշում...:

—Բայց... տէր ի՛մ, ես գրել եմ երկու շաբաթ առաջ... գուցէ Ն. Վսեմութիւն այժմ ճանապարհին է.

—Ստորիդ...

—Այո՛, տէր իմ:

Հակառին Դիմիտրի աւարտած չէր իւր խօսքը՝ երբ բերին մի հեռագիր. Սպասաւորը բացեց, ներսէսէն էր:

—Ի՞նչ է այդ...

—Ն. Վսեմութեան հեռագիրը, տէր ի՛մ:

—Ապա՛, կարդա՛ տեսնեմ...

«Այսօր Օտէսսայի նաւահանգիստը ելայ, շուտով կը գամ ձեզ, ալօթեցէք ձեր որդի ներսէսին համար...»

—Ուրեմն, հեռագրելու հարկ չկայ... —գոհունակ դէմքով ըսաց իշ-

խանը, որդին՝ ինքն անձամբ պիտի լսէ որոշումներս, հրամաններս, պիտի ստուգեմկեզծ նամակի պարունակութիւնները ու դուցէ զրայարտութիւն է:

Որդւոյն գալստեան աւետիքը կենդանացուց հիւանդ հայրը և այս քոյնա օրերը կը թուէր, վերջապէս հասաւ իւր բաղձանքին:

Ներսէս մի երեկոյ եկաւ Բագու, սիրական հօր գիրկն ընկաւ լի կարուզ: Նոյն երեկոյեան խօսքը Վաշտունիի և մենամարտի մէջ սպաննուածի վերայ էր: Ծերունին զգուշացաւ Մարիի անունը տալիքն, երկրորդ օրը ծեր-հիւանդը զգալապէս տկարացաւ: Մահը կերեւէր նորան:

Յոյսը մի քանի օք միայն ոգեւորել էր, ոչ թէ բժշկիւնորացաւերը: Իւր զաւակը տեսնելէ յետոյ՝ պատրաստուեցաւ մահուան:

Մի առաւօտ ներսէսը իւր մօտ կանչելով՝ ըստ,

— Միակ և սիրասուն զաւա'կս, կը տեսնեմ՝ ո՞ր ես օր աւուր դէպի գերեզման յառաջանալով՝ պիտի իջնեմ շուտով նորա մէջ . . . այսու, ուէտք է մեռնիմ . . . ես իմ ընթացքը կատարեցի շատ լաւ, իմ տոհմը՝ գրեթէ մի դար է, ծառայում է վեհ. Կայսեր ամենայն հաւատարմութեամբ . . . ես էլ հաւատարիմ եղայ . . . եւ դու պէտք է ինձ, հօրս և պապիս նմանիս: Միշտ ակնածութեամբ վերաբերում է դէպի քեզ տիրող վնհապեամը, հաւատարման թիւնը ունեցիր քո քաղաքական կեանքին սահման: Միշտ յարդէ քո ազգը, համակուէ՛ նօրա ճակատագրին, աշխատիր ընդհանրութեան օգտակար լինելու, պաշտէ այն կրօնը, որ դարերու մկանունքին փարած կանդուն է մնացել . . . Սիրէ՛ քո Մայր եկեղեցին, աւանդապահ որդի եղիր այն ալեւոր մօրդ: Ըստանեկան կեանքդ՝ աշխատիր անդորր, պարզ և ոչ աղմկալի վարել . . . թունիկներուս սովորեցուր ամէն բանէ առաջ չայ լեզուն, թո՞ղ նախ՝ այնու խօսին, գրեն, ապապետական լեզուն ուսումնասիրեն, աշխատի՛ր զաւակներդ լաւ դաստիարակել, լաւ կրթել: Տէրութեան և աղդիդ լաւ մարդիկ տալ . . . Մայսքի չափաւորէ, խորչէ՛ շոալութենէ, արհամարհէ կծծութիւնը, այն ժամանակ կը յաջողիս այս ահագին հարստութիւնը անկորուստ ժառանդներուդ թողուլ, ինչպէս որ ես քեզի համար թողուցի . . .

— Եատ բարի, սիրելի հայր իմ, պատասխանեց ներսէս յուզուածնայնով, արդէն այդ ամէնը ինձի սովորեցուցի ես գործնական դասերով:

— Այսո՛, զաւա'կս, սովորեցուցի քեզ, բայց . . . մի բանի մէջ մեղանչեցի: Քեզ սրտի աղատութիւն տալով, դժբաղդաբար սիրտդ վիրաւորելու անուղղակի պատճառ եղայ:

— Ներողութիւն, հայր իմ, ես մոռացած եմ այն վատը . . . բայց, մի օր ուրիշ վատի կը հանդիպիս, որդեակ իմ:

— Աչ, հայր իմ, ընտրել եմ մի պարկեցու, աշխատական օրիորդ: Այսունը, հարցուց անտարբեր ձայնով: Այսունը . . . իրաւունք ունիս: Մարի Գասպարեան: Այսունը . . . կարծեմ դորա վատչուէր մարլը, մօտ օրերս իւր ամուսնին ձեռօք պահնասեցաւ:

Ներսէս կարմրեցաւ:

— Կարծեմ, որդեակ իմ, դու ինքդ, զաւա'կս, ծածկեցիր այդ ոճի:

— Ժամանակ իրողութիւնը:

— Բայց . . . հայր իմ, ովկ իմացուց ձեզ այդ իրողութիւնը:

— Մի անստորագիր նամակ:

— Գիտեմ, գիտեմ թէ ո՞վ է զրովը:

— Ով որ գրել, զրել է . . . միթէ սուտ է:

— Ոչ, հայր իմ, սուտ չէ . . . բայց մի քանի մարդիկ միայն գիտեն:

— Լաւ ուրեմն, Մարիի հետ պիտի պատկուիմ . . .

— Զեր հաւանութիւնը պիտի ինդրէի:

— Եթէ լսածներս ստոյդ են, որդեակ իմ, չը պիտի հաճիմ . . .

— Վատաղգին չափագանցելով գրած է ձեզ:

— Ենթադրենք թէ չափագանցել է, բայց իրողութիւնը անուրանալի է. «պոռնկորդին պոռնիկ է»:

— Այդ մասին վիճել քեզ հետ, հայր իմ, անհունապէս հեռու է իմ նպատակէն: Եթէ հայրս չը լինէր ըսողը՝ թէ պոռնկորդին պոռնիկ է, պիտի ապացուցանէի սիւալ արամարանելը հաւաքաբանութեան դիմելով, աւագ կրտսեր եղերաց անհամեմատ տարբերութիւնը ցոյց տալիվ: Արովհետեւ՝ կարելի չէ պոռնկորդինը մի ամբողջ դասի վերայ ստորոտ իլ, կատեւ՝ կարելի չէ պատկութիւնը մի ամբողջ դասի վատ ծնողէ լաւ զաւակ ծնուիլ: Հետերելի չէ նաեւ ժիւտել: Կարող է վատ ծնողէ լաւ զաւակ ծնուիլ:

— Հետեւապէս՝ չէ կարելի ենթադրել՝ թէ անշուշտ Մարի պիտի հետեւի մօրը օրինակին:

— Բայց, որդեակ իմ, ինչ որ գարերու մէջ նուիրագործուած է՝ կարելի է արհամարհել . . .

— Ուրեմն՝ ընդունելու է ամէն նախապաշարում, հայր իմ, եթէ նուիրագործել են դարերը . . .

— Ի հարկէ՝ ոչ, բայց ցեղը, արիւնը որո՞նելը նախապաշարում չէ, այլ օրէնք: Դա մի այնպիսի բնական օրէնք է եղած՝ որդեակ իմ, որուն հիօրէնք: Վա մի այնպիսի բնական օրէնք է եղած՝ որդեակ իմ, որուն հիօրէնք: Փորձերն են նուիրագործել և դարերը փորձերով մեղ աւանդել . . . Նախապաշարում փորձը ընդունելն է, ներսէս՝ ոչ թէ անով մարդն ուսումնափելը:

— Վերջապէս, հայր իմ, թողնէնք վիճաբանութիւնը: Ի՞նչ է քո վերջնական կամքը, պարտաւոր եմ հնաղանդիլ . . .

—Հայրական իրաւունքս , իշխանութիւնս , բռնութեան , բռնապետութեան սահմաններէն անհունապէս հեռի են , զաւակս , իմ իրաւունքս , հրամանս քաղցր են և յօրդոր , իմ իշխանութիւնս հայրական է և սիրելի իմ պարտքս է քեզ փորձառական իրաւութիւնը զգուշացնել անարժան գործերէ , ո'չ թէ բռնաբարել սիրտ Մարին շատ լաւ է կը . սես , բայց կը մոռնա՞ն նորա ֆիզիքապէս , հոգեպէս , մի խօսքով , ամէն հայեցակէտով անպատիւ մօրը նմանելը .

Ներսէս շառադունեցաւ :

—Ի՞նչ որ է , սիրելի զաւակս , հայրդ գերեզմանի մէջ անհանդիստ ընել , նորա կամաց , բարի խորհուրդներուն Ծհակառակ գործել , եթէ քաղցր են քեզ , եթէ հաճոյ են քեզ , իրագործէ , ի՞նչ որ անխոհեմաբար յառաջադրել են :

Ծերունին խիստ յուզուած էր : Յուզման յաջորդեց ուժապառութիւն . . . Լոեց նա , աչերը անթարթ որդւոյն սեւեռած , կոպասէր պատասխանի : Կէս ժամ տեւեց լուսութիւնը :

Նա զգալապէս կը տկարանար , աչերը յետ կը չըջէին , բոլորովին ան . փայլ ու շիջած :

—Ներսէս . . . —Արմեջեց հալոը թեւերը կարկառել փորձելով , —Ներսէս . . . սիրելի՝ ներսէս , մեռնում եմ . . . ա'հ . . . զգուժ եմ մահուան թըրմբիրը , —աղաղակեց մայրենի լեզուաւ , ինձ , ի՞նձ յօտեցի՞ր , որդեակ ի'մ , թող . . . օրհնէ՝ քեզ Աստուած , ժող նա կատարէ իմ հայրենի պաշտոնը . . . իրագործէ՝ իմ յաւաջադրութիւններս . . . փոխարինէ՝ ծնողասիրութիւնդ՝ քեզ արժանի լժակից ամուսին տալով . . .

Ներսէս ծնրադրած էր մահճին առաջ . գլուխը ծերունուն դողահար , ստոն թեւերուն տակ կքած , նա սրտի զեղուժով օրհնեց որդին , որուն արժանի էր ներսէս հայրը թէպէտ աւարտեց խօսքը , բայց ներսէս կոպասէր տակաւին :

Յանկարծ բնադրմամբ վեր ցալիկեց : Խշանի կիսախուփ աչերը կարծես իրեն կը նայէին . . .

—Հայր ի'մ , հայր ի'մ . . .

Ոչ եւս է իւր հայրը : Մեռած է նա :

Դիմիտրի առաջ կը դայ անկիւնէն , կը ծնրադրէ մահուան առաջ :

Թաղումը փառաւոր շրով կատարուեցաւ :

Մի քանի օր յետոյ , սպասաւորը ներսէսին կը յանձնէ հայրական հըտակէ . որով ծերունին կը թողուր իւր մեծաքանակ հարստութիւնը միակ ժառանդին 10,000 ըուպ . Դիմիտրի ժառային 40,000 ըուպ . Ս . . . դաւառին մէջ վարժարան կառուցանելու .

Ներսէս սդոյ օրերուն մէջ կը սդ ար և իւր սիրոյ երազը , Մարին , իրենց մէջ կանգնած էր հանգնած էր հանգուցեալ իշխանին ուրուականը :

Բայց , վատաբար քանելչէր կարող : Առանց հաստատ որոշման՝ ճանապարհ ընկաւ դէպի Գ . քաղաք :

Դան նմայի ոչ մացանական կյա , խուս մուր բութիւնը գլուի միքամանի ամառան ոչ ծառաւ կյա Ս ոչ Ե բարսէսի հեռանալէն յետոյ , պէյի ապարանը կարծես աւերակ գարձաւ :

Լքուած էր մանկիկն Ստեփանիկ .

—Մայի՛ , ո՞ւ է մաման . —տարաբաղդիկ մանկան ամենօրիկար հագնեթը թըրմը էր այս : Սպասուհին թէպէտ կը չանար իւր կարողացածին չափ : իր նամելով փոքրին մօրն յիշատակը նսեմացնել , բայց ի զուր :

—Մայի՛ , ո՞ւ է մաման . եշ մամային կէյթամ , —կը թօթովիէր լալով : Մարի արդէն հիւանդ էր :

Ներսէսի ներկայութիւնը կափոփէր նորա սիրութը . երբ հեռացաւ սեւ ամպ ծածկեց օրիորդի հոգւոյն խաւար հորիզնը . . . վհիր բացուան ուներուն տակ : Ոիկ-վիտալի հայիչ արարչագործական նկարին պէս , առուն ծով դարձաւ , երանաւէտ դրախտը աչքէն ի բաց խուսափեցաւ : Սակայն , կապրէր տակաւին Ադամային յուսով , կապրէր՝ սիրահարի յուսով , —անշուշտ պիտի գար ներսէս զինքը գտնելու . Պիտի գար կարդուելու . . .

Այն պէյը , որ աղնուութեան մշտագուարթ տիպար էր , խիստ կասկածու , մելամողձու մի մենամոլ դարձաւ :

Նա այլ եւս չէր հեռանալ ապարանէն , շարունակ իւր ննջարանի մէջ , թէմքը խոժոռ , ձեռը ծնօտին յենած , կը նստէր մահճակալի վերայ :

Ցեղեկութիւնը չունէր անցած դարձածէն : Նատ քիչ անդամ կը մըտնէր օրիորդի ննջարանը , մի քանի անորոշ խօսք թոթովիւլով կը հեռանար . թողած էր՝ պարտականները ազատ . մուրհակ փոխել , դրամ պահանջել մտքէն անդամ չէր անցնել .

Այս ու այն բարեկամներէն եկած նամակները՝ կը մնային սեղանի վըրայ չը խղուած կնիքներով :

Աղէտների , վշտերի մէջ ի՞նչ է մարդը , սիրոյ , մահուան , ամօթահարութեան սարսուներու , պժգալի անպատուութեան առաջ ի՞նչ է մահկանացուն , եթէ չէ նա թշուառներու գերադոյնը : Մահը , զոր կարհամարհէ ոչ միայն տկար արարածը , այլ և ամենափոքր միջոցն իսկ , անձնասիրաբար կզգուշանայ մահառիթ էակներէ , կան ժամեր , ըոպէներ որ նորան կորոնէ մահկանացուն :

Պէյի սրտին խորը սառահատութիւն , ցաւեր որջացած լինելով՝ գերեզմանի խոնաւութիւնը ցանկալի ցոյց կը տային :

Այսպէս , անցան օրեր , շաբաթներ , ներսէս չերեւաց : Նամակ անդամը գրեց : Յոյսը երազի պէս սկսեց չքանալ : Սրտին մէջ կը տեսնէր դատարկութիւն : Դատարկութեան լայնածաւալ անապատը կը պարզուի

Հոգւոյն առաջ, որի սահմանաքարն էր դժխեմ մահը :

Մի օր Մարի նստած էր մահճի մէջ, Հիւծուած էր գեղանին, փայ լակնացայտ աչերը կարծես կորել էին սեւ թերթերունքի մէջ, նախկին կայտառ, կարմիր ու ծերմակ կը թիկ թշառամել, փակել էին իսպառ այտոսկրներու վերայ:

Մարի ակնապիշ կը դիմաէր ինքինք վէճէտկեան ուշու հայելու մէջ: Որչափ տգեղ, նիւար էր ինք, որչափ այլակերպած էր ինք, ինքիրմէ կը սոսկար: Մի դիմակ էր նա... աւելի ոչինչ...

Ստեփանիկ ալս միջոցին՝ իւր սովորական հարցը կրկնելով, մերթ կուլար յատակի վերայ տարածուած, մերթ՝ ամէն բան մոռանալով, կը խաղար իւր կապարեայ զինուորներուն հետ:

Սպասուհին օրիորդին մօտ կանդնած՝ կօդնէր թէյ խմելուն՝ երբ պէջը ներս մտաւ:

— Հայր ի՞մ, — ըսաց օրիորդը ակնապիշ, յուսահատ հօրը նայելով, — հայր ի՞մ, հիւանդութիւնս ոչինչ է ինձ համար... կեանքս չեղեւիր աչքիս, բայց քո այդ անտանելի տրտմութիւնդ՝ կահարեկէ ինձ... Ահ, մոռանալ, մոռանալ պէտք է, հայր ի՞մ, Այս հէգ մանուկը պէտք ունի քեզ: Պէտք է ինքինը ինամես, պէտք է սորան համար ապրիս: Ինչո՞ւ քո անձը թողել ես անինամ, ինչո՞ւ հոգ չես տանի՛ր քո առօզդութեան մասին:

— Ե՞ն, Մարի՛... ի՞նչ ունիմ ես, ինչո՞ւ ինծի կը նախատես, թո՞ղ նախախնամութիւնը իւր նախապէս սահմանած աղէտիցը ինք վերջ տաւ...:

— Աւա՛, հայր ի՞մ, դու քեզի համար չը պիտի ապրիս, այլ քո հուսուկնին...:

— Գուցէ... անհարազատ զաւակին...

— Անիբաւ ես, հայր ի՞մ... զաւակդ չես կարող լքանելու, ուրանալ նա՛, այո՛, նա՛ քո արիւնդ է... տակաւին երեք տարեկան է նա:

— Պապա՛, — մէջ մտաւ մանուկը անմեղ ժպիտով, հօրը հանդերձի դըրօշակէն կախուելով, — պապա՛, ինծի պիտի պաքնէշ...

Պէյը յուզմամբ վեր առաւ մանուկը, սրտին սեղմելով համբուրեց:

— Ինծի շատ կը սիրե՞ս, Ստեփանի՛կ, — հարցուց պէյը:

— Հապա, — մատը լուսամուտի կողմը տնկելով, — այն մեծ ամպին ցափ կը սիրեմ քեզի, պապա՛ ցան...

Մարի ակնայեռ կը դիմէր այս սրտաշարժ պատկերը:

— Պապա՛, — ճռուղեց մանուկը. — ինծի չայուուն տալ...

— Երթանք, — պատաճախնց հայրը, — երթանք, սիրականս, — մանուկը սրտին սեղմած մեքենապէս դուրս ելնելով:

Մարի մասամբ գոհ եղաւ: Հօրը մի սեւ կասկածը փարատած էր: Ստեփանիկ չը պիտի լքուէր:

Նա գոհ դէմքով տարածուեցաւ անկողնի մէջ... մէջ նոր անհաղթագումը մարդուս հոգւոյն օդաչափն է: Երբ մենք կուզենք մէկը տեսնել, կամ կը փափագինք նորա վրայ լուր առնել, նոյն անձը յանկարծ մեր մօսը կը գալ և կամ տեղեկութիւններ կստանանք անմիջապէս: Ներսէսի հեռանալը 35 օր էր: Մարի տակաւին լուր չէր առած: թէպէտ ամէն րոպէ սիրտը ներսէսի հետ էր, բայց պէյի հեռանալէն յետոյ՝ սրտատրով ներսէսի մասէն կը խորհէր: Նամակի կսպասէր:

Քիչ յետոյ՝ ներս մտաւ Սամացի սպասաւորը մի նամակ ձեռքն:

— Կզգալի՛, — բայցագանչեց օրիորդը:

Բուռն յուղմամբ բացեց նամակը, սկսեց կարդալ:

Աւտո դիմագէտ կամ խտրադիմայ չէր որ հասկնար օրիորդի դիմաց փոփոխութեան շարժառիթը: Մարի ուրախ էր՝ երբ սկսեց կարդալ: Քիչ ուրախութիւնը տեղի տուեց ապշութեան՝ զարմացման, սոսկման, և ապա, ուժաթափութեան... Ընթերցումը հաղիւ թէ աւարտած էր, երբ խելակորոյս, ցաւալի հառաջումով ընկաւ անկողնի մէջ:

— Շուշօ՛, Շուշօ՛, — գոչեց սպասաւորը, — վազի՛, իշէ ը զինչ կեղսի Մարին:

— Վա՛ս... հառաջեց Մարի սրտին խորերէն:

Շուշան պահապան հրեշտակի պէս հասաւ: Աղի շիշը հոտոտել տուեց: Մարի նուղած աչերը բանալով,

— Նորա գիրն է՛... մրմռաց:

Անիծած նամակը խորապէս ներդործեց ջղային, զգայուն օրիորդին սրտին: Նա ներսէսի ձեռովնին էր գրուած:

Ահաւասիկ պատճէնը:

«Օրիորդ,

«Ողջ առողջ հասայ թագու:

«Հօրս կամքը յարդել իմ սրբազն պարտքն է: Նա գլխովին հակառակում է մեր ամուսնութեան: Առաջ է բերում այն ցաւալի դէպքը՝ որ արդէն խախտած էր և իս սիրտը:

«Օրիորդ, պէտք է հրաժեշտ տալ սիրոյ երազներին, պէտք է մոռանի մէկ մէկի, քանի որ՝ անկարելիութիւնը ցցուած է մեր մէջ. քանի որ խորախոր վիեր անջրպետում են մեզ:

«Միշտ սիրելի էիք ինձ, քանի որ կարծում էի՝ թէ զրկուած եմ իմ պաշտելի վարդուհիից: Ատելի եղաք ձեր համերուսնի մօր խայտառակուելով, ատելի եղաք և սիրսոյ վերադարձովը: Վարդուհին ինձ մօտ է այժմ... հօրս հրամանով կամուսնամայս օրերը:

«Արդ, դուք բոլորովին ազատ էք, օրիորդ, կարող էք ձեր սիրած անձին հետ պահպանի, կարող էք իմ թողած մանր մունը երերը, զար-

գերը ձեր ուզածին պէս վատնել, որովհետեւ՝ խիղճս հրամայում է ինձ՝
այնքան սիրաբանութիւնների, համբոյրների. դգուանքի փոխարէն ձեզ
շնորհել այդ ամէնը. Այլ եւս ի Գ... չը պիտի դամ. չը պիտի վրդովնմ
ձեր փափուկ սիրուը, որ վազում է ջրի պէս իւր ուզած կողմը.

«Մնամ յարդանօք բարեկամ ձեր ներու. Սահանանչ».

Մարի նամակի ընթերցումէն յետոյ՝ տառապեցաւ մի ժամ մերթ ընդ
մերթ ուշակորոյս լինելով, Ապա յանկարծ ոգեւորեցաւ. մոռացաւ բո-
լոր ցաւերը, վէրքը, առողջ մարդու նման անկողնէն վար ցատկեց.

Աչերը վրէժխնդրութեան բոցով կը փողփողէին, այտերը կապտախա-
ռըն կարմրութեամբ կը վառէին: Արձակ մաղերը ազատ ձգուած թիկուն-
քը գիշերազգեստի հետ վայելչապէս կը յարմարէին.

Նա մի զարացած հրեշտակ էր:

— Շուշա՞ն, — ըսաց խրոխտ ձախով, — ինձ բե՛ր Պ. Ներսէսի թողածնե-
րը.

— Օրիո՛րդ, կաղաչեմ, հանդարտեցէ՛ք, մի յուղուի՛ք... ինչո՞ւ յան-
կարծ վար ցատկեցիք, — թոթովեց սպասուհին... .

— Ի՞նչ որ քեզ կը հրամայուի, օրիո՛րդ, — պատասխանեց Մարի զար-
բացած, — միայն այն կատարէ՛, լսեցի՞ր....

— Լա՛ւ, կը բերեմ ձեր ուզածը, տիրուհի՛ս, միայն՝ կաղաչեմ, հան-
դարտեցէ՛ք: Նստեցէ՛ք ձեր անկողնի մէջ: Կը բերեմ....

— Այս ըոպէիս պիտի բերես նորա արկղը... հանգստութիւն... Է՛հ,
ի՞նչ հանգստութիւն... մահն է իմ հանգիստը....

— Լա՛ւ, տիրուհի՛, բերեմ... հանգիստ եղի՞ք....

— Է՛հ, վերստին հանգստութիւն... այլ եւս պէտք չէ նա....

Սպասուհին կատարեց նորա հրամանը: Մարի դողդոջուն ձեռօք բա-
ցեց արկղի խուփը: Մի փոքրիկ տուփ առնելով լոգեց, դարձեալ սպա-
սուհուն յանձնեց ասելով.

— Այս արկղը և թէ միւս իրերը, Շուշա՞ն, քեզ կը պատկանին: Ա-
մուսնացիր Աւտօյին հետ և վայելէ՛ այս ամէնը: Քո օժիտն է այս:

Շուշան չը պատասխանեց: Մարի տուփը ձեռօքը, ընկաւ անկողնի մէջ: Վերմակը գլխուն քաշեց իրը թէ նայելու:

Անցան տասն օրեր: Մարի եւս քան զեւս տկարացաւ: Ախորժակ չու-
նէր ո՛ւ և է բան ուտելու:

Աչերն արտասուալից էին անբաղդ մանկուհուն:

Վերջին գիշերը հաւաքուած էին տանը անդամները և ծառաները նո-
րա մահճին շուրջ:

Օրիորդի լեզուն ծանրացած, ինքը բոլորովին ֆիզիքական և բարոյա-
կան ցաւերու ծանր բերին տակ ընկճուած, ծանր շունչ կտունէր:

Գէյր կզգար՝ թէ ի՞նչ պիտի լինէր. Ուստի թեւը օրիորդի դլիմն առկ-
դրած, արտասուալից աշերը անթարթ նորա ճակտին սեւեռած կը փոր-
ձէր խօսիլ:

— Մարի ջա՞ն... կամենա՞ս մի քիչ նստիլ....

— Ոչ... կարողութիւն... չունիմ... հայրիկ ջան....

— Նոր բերուած դեղէն դգալ մը եւս կը խմե՞ս, աղջիկա:

— Ո՛չ... չէ... չէ... կարողու... թիւն... չունիմ....

Ստեփանիկ հօրը ծնկին կրթնած, տրտմապէս կը դիտէր միրելի քրոջ
հոգեվարքը առանց հասկնալու: Ուստի պէյր՝ նորա նայելը տեսնելով,
առիթ գտաւ խօսելու:

— Մարի՛... տե՛ս, Ստեփանիկը քեզ կը նայէ, աչքդ չե՞ս բանալ:

Օրիորդը՝ կիսովին շիշած աշերը բացեց, մրմիջելով.

— Ինձ... մօտեցուր... նորա թշերը... հայր ի՞մ....

Գէյր մանկան թշերը նորա ըրթներուն մօտեցուց, հիւանդը փորձեց
համբուրել: Սակայն՝ սաււած շրթունքը միայն սարսուռ ազդեցին, ահա-
բեկ մանուկը առանց ճիչ հանելու յետ ընկրկեցաւ:

— Մնաս բարեա՞... Ստեփանիկ... թոթովեց հեծկլտալով, — ես...
կերթամ... քեզ ա՛լ կը տանիմ....

— Ույ, ույ, Մայիս....

— Մամային... սիրելին... մա... մային կերթամ....

Գէյր սիրտը փղձկեցաւ, չկարողացաւ լացը զսպել: Լացեց նա, լացին
ծառաները և լացեց Ստեփանիկ:

— Է՛հ... նոր կեանք, գերեզմանի՛ կեանք... քաղցը է... հայր ի՞մ...
ես այն տեղ, սեւ հոգերու մէջ, վիշտ պիտի չունենամ... այն տեղ պիտի
մարի սրտիս կրակն ու բոցը... այն տե՛զ... պիտի չքանան սեւ ցաւե-
րը... ո՞հ... այն տեղ պիտի գաղարի բարախիլէ ցաւալի... վիրաւոր...
սիրտս: Պիտի թառամին սիրոյս վարդերը... Ո՞վ գիտէ... դուցէ այ-
սօր... եմ մեռած... կը սոսկամ... Աստուած ի՞մ... իմ մեռած... պա-
հուս, և կը փարի վարդուհուն... ե՞ս... պիտի թազուիմ... սե՛ւ գե-
րեզմանի մէջ... նա՛ պիտի ապրի հարսնարանի մէջ....

Այս միջոցին լսուեցաւ դրան ձայնը, պէյր՝ կարծես ուշաբերելով, հը-
րամայեց Աւտօյին:

— Գնա՛, Աւտօ՛, գնա՛, դուռը բաց, — ապա Մարիի ճակատը համբու-
րելով ըսաց, — սիրելի՛ զաւակս, արդէն վիրաւոր է հէտ հօրդ սիրտը: Ա-
ւելի մի վիրաւորէր ինձ... ո՞հ... խելքս գլխէս կերթայ, կը կարծեմ
թէ երազի մէջ եմ....

— Ո՛խ, հայրիկ ջան, ես... աւելի... քեզ կը խորհիմ... ի՞նչ...
ի՞նչ... պիտի լինիս... դու... ի՞նչ պիտի լինի... այս... որբիկը...
Ստեփանիկը....

— Ներսէ՛ս, — լուսթիւնը խղեց Մարի, — եթէ մի ժամ եւս յապաղէիր, զիս մեռած պիտի գանէիր :
 — Ե՛հ, սիրելի՛ս, գու սովոր ես միշտ մահը մտածելու, ինչո՞ւ պիտի մեռնիս, քեզ ի՞նչ եղաւ
 — Նամակդ ինձ մահուան դատապարտեց, պաշտելի՛ Ներսէս
 — Ի՞նչ ես ասում, ո՞ւմ նամակը, ի՞նչ նամակ :
 — Քո նամակը, Ներսէ՛ս, քո նամակը
 — Տէ՛ր Աստուած օրիորդ, ես նամակ չեմ գըել
 — Ե՛հ, պարո՞ն, կարելի է ուրանալ
 — Պնդում եմ՝ թէ ես նամակ չեմ գրած
 — Ուրեմն . . . առէ՛ք, բարձիս տակն է :
 Ներսէս գտաւ մեղ ծանօթ նամակը : Կարդաց ծայրէ ի ծայր լի զարմանքով և բարկութեամբ :

— Այս նամակը, Մարի՛, կեղծ է, — ըսաց մեղմիւ, — նորա պարունակութիւնը սուտ է, գլխովին : Ես վարդուհու, այն վատին, երեսը տեսած չեմ, ես քեզ լքանելու միտք չունիմ
 — Ի՞նչ օգուտ, ժամանակն անցաւ . . . ո՞ւմ որ կամիս՝ ազատ ես սիրել, ամուսնակալ . . . այլ եւս . . . չկամ ես . . . չկա՛ անբաղդ Մարին . . . անպատիւ Մարին
 — Բայց . . . Մարի՛, ես չեմ գրած
 — Կը հաւատամ, . . . կը ներեմ :

— Դա Քաւալեամի վատութիւնն է :

— Ա՛հ, այն վատը . . . եթէ ողջ մնայի՛ . . . ուխտել էի սպաննել :

— Ես պիտի սպաննեմ, անհոգ եղի՛ր, Մարի ջա՞ն :

Ներսէս հիւանդի գլուխը բազկին առաւ : Մարիի նախկին կորովը տակաւ տակաւ շիշաւ : Լեզուն վերստին սկսեց ծանրանալ :

— Ներսէ՛ս . . . — մրմթնեց նա խուլ ձայնով, — Ներսէ՛ս . . . ես . . . պիտի մեռնիմ . . . Այո՛ . . . բայց, գո՞հ . . . պիտի մեռնիմ . . . որովհետեւ . . . իմն ես տակաւին . . . սիրադ է իմ . . . մահարձանը . . . մնաս բարեաւ . . . պաշտելի նշանա՞ծս . . . մնաս բարեա՞ւ յաւէտ . . . վերստին . . . զիրար . . . պիտի գտնենք . . . աւա՛ղ . . . մահուան ծոցին մէջ . . . Սիրէ՛ հօրը . . . հ'էք հօրս . . . սիրէ՛ եղրօրս . . . ինամէ՛ զանոնք . . . ես միշտ . . . Աստուծոյ դահին առաջ ձեռնամած . . . պիտի օրհնեմ . . . անդադար օրհնեմ . . . քեզ, Ներսէս ջան

Պէյը հիւանդի մօտ վերադարձաւ :

— Հա՛յր . . . իմ . . . ահա՛ . . . ահա՛ . . . Ներսէսը, թո՞ղ . . . քեզ որդի լինի

Մի քանի ըոսէ լուսթիւն տիրեց :

— 80 —

— Եթէ առողջանաս գու՝ Մարի՛, մենք երջանիկ կը լինինք :

Մի տխուր ժպիտ՝ խառն մահուան հետ՝ սահեցաւ հիւանդի այտերէն . . .

— Այսպիսի ժամանակ, Մարի՛, աղջի՛կս, գու պէտք է ինծի յոլս տաս, լնդհակառակը սառն յուսահատութեամբ կը լեցնես հոգիս :

Աւտո ժպտելով ներս մտաւ :

— Ո՞վ էր, Աւտօ՛, — հարցուց պէյը . . .

— Մըր օրիորդի բարեկամներաց մէկն ի, հըյրան իմ քի . . .

— Ո՞վ է, — հարցուց և Մարի :

— Աֆարիմ կէսիմ թըհ գտնիս . . .

Պէյը հարցական ակնարկով ժառախին նայեց, նա ժպտելով ինդրեց լը-ռել : Պէյը չը համբերելով գուրս ելաւ :

— Ըսկերուհիներէն է եկողը, — հարցուց Մարի՛,

— Զէ . . . չը գտար . . .

— Ապա՝ ո՞վ է ուրեմն . . .

— Ծովերուց ընցուկ, քի համայ ի եկուկ . . .

— Հայրիկիս բարեկամ է . . .

— Խըլիս :

— Ինծի ծանօթ է . . .

— Խըլիս :

— Ո՞վ է . . . ուրեմն . . . նա՞ է, Ներսէսն է . . .

Աւտո ժպտեցաւ :

— Նա՞ է, Աւտօ՛, — կոչեց Մարի անմիջապէս անկողնի մէջ նստելով :

Մառան վերստին ժպտեցաւ :

— Ծօ՛, կատակի ատեն չէ, վայրենի՛, Ներսէ՞սն է եկողը :

— Ին ուր էղնի, ծի մուժտայ ը զի՞նչ տի՛ տաս :

— Ինչ որ ուղե՞ս, խե՞նթ, բան կը ինայե՞մ . . .

— Լաւ, լնծիք խօսք տո՛ւ . . .

— Խօսք խօսք է, մի ձեռք լաւ հանդերձ քեզ ու Շուշանին :

— Հա՛, հըյրան, զէնի Ներսօնի . . .

— Ուրեմն . . . Ներս բե՛ր, ինչո՞ւ չի գտար . . .

— Հրամանիդ էի սպասում, սիրելի՛ Մարի, — ըսաց Ներսէս դռնէն ներս մտնելով, — հիւանդ լինելու գիտէի, քեզ յուղում չը պատճառելու համար Աւտոյին պատուիրեցի մի ձեռով քեզ իմացնել :

«Է՛, ինչպէ՞ս, լա՞ւ ես :

— Այո՛ . . . շա՞տ լաւ եմ, ինչո՞ւ լաւ չը լինիմ . . . երբ քս սիրականիդ կը գրես իսպանականը, բնազդ մամբ զգաց իւր այն տեղ մնալու աւելորդութիւնը, մի պատրուակաւ գուրս ելաւ : Միայն Շուշան մնաց սիրահարներու մօտ :

— Ներսէ՛ս . . . — յանկարծ աչքը բանալով մրմնից հոգեվարը ; — Ներ-
սէ՛ս, քեզ . . . կը . . . կտակեմ . . . իմ նման . . . իս . . . հետ ամուսնու-
նալ . . . իմ նմանս պիտի . . . սիրէ՛ զքեզ . . . բայց . . . Ներսէ՛ս,
սիրակա՛ն ներ . . . սէս . . . միշտ, լիշէ . . . Մարին . . .

— Աղի՞կս, — ըսաց պէլը, — նորէ՞ն լինքինքդ կորուցիր.

— Ոչ . . . հայր : . . . կը տեսնես . . .

Եթապատողները ակնապիշ հիւանդին կը նայէին . նա ծանր ծանր կը
նշէր : Յանկարծ գլուխը ջղային ցնցմամբ վեր վերուց, աչերը Ներսէսին
սեւեռեց ու նորա ծնկին վրայ ընկաւ . . . մարդ, մարդ, մարդ . . .
Մեռած էր նա :

ԳԼՈՒԽ ՃԳ.

Աշուն էր :

Արեգական վերջին ճառագայթները կը բեկրեկուէին Կ. Պոլսոյ մինա-
րէներու, բարձր տանեաց, աշտարակներու, նաւերու և շողենաւերու-
կայմերու անտառին մէջ :

Գերմանական մի մեծ շողենաւ կանդնած էր այդ օր Գալաթայի ա-
ռաջ :

Վոսփորը հիանալի էր :

Խաղաղ էր նա : Հրէշային հայելու պէս կը ծաւալէր նեղուցի խորքն
ու դէպի Միջերկարական . . .

Նորա մէջ կանդրագառնար Բիւզանդիոն իւր հիմնաւուց արուարձան-
ներով : Մի կողմէն Սկիւտար, մի կողմէն Գալաթա, մի կողմէն Պէշիկթաշ
հոյակերտ ապարաններով, պալատներով . մի կողմէն հինՊ օլիսը . իւր ըն-
դարձակ թաղերով կը ներկայանալին շողենաւէն դիսոլիներուն :

Անցորդները պիտի թողնէին նորան և նաւարկէին դէպի Օտէսսա:

Շոգենաւը լցուած էր խառնիճաղանճ բազմութեամբ : Մարդկային ա-
մէն մի խաւ իւր ներկայացուցիչն ունէր այն տեղ :

Որոշեալ ժամը հնչեց : Վերառան ահագին խարիսխները ծովի յար-
գանդէն, կապեցին ելարանները նորա կողերուն :

Նաւաստին իւր որոշեալ տեղը կանդնած կսպասէր հրամանի :

Եւ ահա՛ կը լսուի ջրի հոսանաց խուլ ձայնը, կը ժաւալին գու-
նատ, փրփրակոծ ալիք, մեղմիւ կը դառնայ շոդենաւը բաց-կանաչագոյն
ջրերու վրայ, կը սուրայ ընդ առաջ :

Կարծես կը խուսափի Վոսփորը, կը հեռանայ Կ. Պոլիսը, Հետզիետէ
մշուշի, ծխիամպեր կը ժամկեն նորան . . . շոգենաւը ծովի բացն է . . .

Առաջնակարգ օթեակներէն միոյն մէջն է ներսէս :

Տխուր է նորա սիրուն գէմքը և գունատ :

Ներսէսի օթեակին կից է և մի եւրոպացու բնակարան : Այս պարոն
միջահասակ, գեղադէմ երիտասարդ մէ՛, ներսէս մտերմօրէն կը խօսի
նորա հետ, Անշուշտ վրիպած չէին ներսէսի սրամես աչքէն Կոնստանտ-Պիւ-
զանիի կեղծ մօրուքը, կարմիր ներկուած այտերն ու ճակատը, կապոյտ,
գոգաւոր ակնոցներու տակ ծածկուած աչերը . . . որքիրեն ծանօթ կե-
րեւէին, բայց կզգուշանար ո՛ւ և է ակնարկութենէ և ճարտարական տեսակ-
ցութիւնն լրտեսութիւն էր կարծեմ :

Այն գիշեր՝ որու առաւօտուն պիտի ժամանէին Օտէսա, օդը փոխ-
ուեցաւ յանկարծ : Երկինք ոզողուեցաւ սեւ ամպերու հեղեղներով : Ծո-
վը հեծեց իւր խորքի մէջ . սկսեցին լեռնանալ անդնդահոծ ալիք, և շո-
գենաւը խուի պէս օրօրի կշաէ և կուշտ . . .

Նաւորդներու մեծամասնութիւնը հիւանդացած էր :

Միայն ներսէս և Պ. Տը Պիւզանի կանգնած էին տակաւին :

Ներսէս վստահ կերպով մոռւ իւր օթեակը ննջելու :

կէս գիշերին զարթեցաւ նա :

Կը լսուէր ալեաց մռնչիւնը : Շոգենաւը կօրօրուէր ուժդին ցնցմամբ :
Ներսէս ընդուստ վեր ցաթքեց, գուրս թուաւ :

Սեւ խաւար էր չորս կողմը : Երկինք և ծով խառնուած էին իրար :
Միայն նաւապետի հրամայող ձայնը կը հնչէր ալեաց ձայնին հետ : Նա-
ւորդներ լալադին կաղօթէին :

Ներսէս ուրախ, զուարթ և անտարբեր անցաւ շոգենաւի մի ծայրէն
միւսը, քաջ նաւաստիի անվախ սրտով :

— Պ. Սահառունի, — ըսաց մըանացի կոնդին կերկեր ձայնը : — ինչո՞ւ
չէս աղօթեր քո Աստուծուն . . .

— Ես սովորութիւն ունիմ, Պ. առ Պիւզանի՛, վտանգ չեղած ժամանակ
աղօթելու : Ծաղրելի բան է, ապահով ատեն շաղօթել, իսկ այսպէս ժա-
մերու մէջ Աստուծոյ քղանցքէն կախուիլ . . .

— Հարկա՛ւ, միշտ . . . չաղօթողներու աղօթքը Աստուծած ալժմ չի լսեր :
Կըսէ քթիս կը ինդան այս ապուշները . . .

— Ես այդպէս չեմ ենթագրեր :

— Անտարակոյս . . . իրը քրիստոնեայ՝ աղատ չէք . . .

— Իսկ գուշ, Պ. կոնդ, գուշ ինչու չէք աղօթեր . . .

— Ում աղօթեմ . . .

— Աստուծոյ . . .

— Ե՞ս, քահ քահ ինդալով, — Ես Աստուած չունիմ
Ներսէս չը պատասխանեց : Երկու ծանօթները միասին սպասեցին ա-
ռաւոտուն :

Տակաւ տակաւ թանձր խաւարն սկսեց անօսրանալ և տեղի տալ վը-
տիտ լուսին : Տակաւ անօսրանալ վըտիտ լուսին : Տակաւ առժանի էր զայրացած ծովը :
Մայրատուած սեւ ալիք փրփրալով՝ բորենիներու երաժներու պէս,
կարդ կարդ կը սուրային առաջ՝ մոնղելով : Ջրեղէն ահագին բլուրներ
կը նղարէին շրգենաւին ու կանցնէին նորա տակէն :
Կը բարձրանար վիթխարին նոցա գագաթը, յանկարծ շառաչմաք
կընկնէր իւր առաջը բացուած ձորին մէջ

Կերեւէր Օտէսայի նաւահանդիստը ամպերու սեւ ծալքերէն :
Նաւորդներ յուսահատ էին, կը շարունակէին աղօթք, աղօթք՝ որ կե-
րակուրն է մահուան դիմաւորողին :

Միայն Ներսէս և Պ. կոնդը մտնելով իրենց օթեակները՝ կը պատրա-
սէին գոյքերը՝ որպէս զի նաւահանդիստ ժամանելուն պէս դուրս ելնեն .
Նոցա ձեռնարկութիւնը թերի մնաց :

Մի ահագին որոտում արսավիեցաւց նորանց :
Դուրս վազեցին . . . շոգենաւը գնտակահար թոշունի պէս ճախր
կառնէր :

— Ի՞նչ եղաւ, — սարսափով դոչեց Ֆրանսացին :
— Բնկղմեցա՞նք . . . կընկղմի՞նք, — աղաղակները մարան վտանգի թըն-
դանօթի գուոցին տակ՝ իրը պատասխան ահարեկ Պ. աը Գիւղանիի հար-
ցին :

Երբ՝ Ներսէս և Պ. կոնդը իրենց օթեակները գնացել էին, մի քանի
խոշոր ալիք սողացին վիշապներու պէս դէպի շոգենաւը : Նոյնպէս սողա-
ցին հակառակ կողմէն : Իրար զարնուած ժամանակ, շոգենաւը բարձրա-
ցաւ նոցա գագաթը, Բարձր բլուրը խուսափեցաւ յանկարծ, ծովի յար-
գանդը բերանարաց վիի նման երեւեցաւ, ուր՝ խօլականի պէս, ցցուած
էր մի ահագին խութ : Նա թուաւ ձորին մէջ, զարնուեցաւ աղէտաբեր
ժայռին ահագին որոտմամբ :

Պէտք այս էր պատահածը :
— Արի՞ք, արի՞ք, Պ. կո՞նդ, — ըսաց Ներսէս նաւաստիներու մօտ վա-
ղելով, — արի՞ք, կընկղմի՞նք

Արագ երագ կիջեցնէին նաւակներն ի ծով :
Այս միջոցին մի մատաղատի օրիսրդ փարեցաւ Ներսէսի ոտքին,
— Ո՛հ, պարո՞ն, — կոչելով, — ինձ օղնի՞ր, ինձ փրկի՞ր, ես էլ քեզ պէս
հայ իմ . . . ո՛հ, փրկի՞ր . . . պաղատում եմ քեզ

— Ես՛ւտ . . . արի՞ . . . ծեռդ ինձ տո՛ւր, — պատասխանեց Ներսէս ա-
ռանց իւր պաշտպանեալի երեսը նայելու : Ես գույզ մաքաւուայ ոց
Նաւակը արդէն իջած էր վար, շոգենաւը կիսովին ջրով լցուած՝ կամաց
կամաց կընկղմէր : Ներսէս՝ մանկուհին գրկած, թռաւ նաւակին մէջ,
այնպէս՝ որ քիչ մնաց ընկղմէր :

Շոգենաւը վերստին ճախրեց : Ուսած ծովը պայթեցաւ, նա իջաւ ձը-
կանց աշխարհը, իւր հետ տանելով մի քանի գրադդներ :

Յուսահատ նաւաստիք սկսեցին ուժգին թիավարութեամբ նաւակնե-
րը ընդ առաջ թոցնել, ալեաց փրփրակոծ կատարներէն սուրալով :

Մի ժամ յետոյ, Ներսէսի նաւակը նաւահանդստի առաջն էր, կը տես-
նէին ցանկալի ցամաքը . մօտ էր նա . բայց՝ կատաղած ալիք չէին թողնել
մօտենալու :

Նոքա կարծես ծովու հարազատ ավերը կրծել կուզէին և արշաւել
գէպի ցամաք

Անվեհեր նաւաստին սկսեց մօտենալ . . . բայց ծովը յաղթեց նորանց :
Մի խոշոր ալիք յափշտակեց նաւակը : Զայրագին ապառաժուտ ափին
զարնելով՝ նորա բեկորներն ու մարդիկ վերստին իւր հետ տարաւ դէպի
ծով :

— Ներսէս երբ աչքը բացեց, ինքինք փափուկ անկողնի մէջ պառկած
գտաւ : Չորս կողմը նայեց . մի աղքատիկ, անշուք քնակարան էր այն :
Կանթեղի վտիտ լուսով նշմարեց մի անկիւն զետեղուած Տիրամօր Էնձը՝
(պատկեր) մանուկ Յիսուսը գիրին առած :

— Ուուսի տուն է, — ըսաց իւրովի

Մտածեց : Յիշեց աղէտալի նաւաբեկութիւնը, զգաց իւր հրաշքով ա-
ղատուիլը : Շարժեցաւ անկողնի մէջ, նատիւ ուզեց, անկարող էր :

Այս միջոցին ներս մտաւ մի ալեւոր, պատկառելի ծերունի :

— Ծերունի հայր, — ըսաց Ներսէս տկար ձախով, — մօտս արի :

Ուուսը ժապելով մօտեցաւ նորան :

— Ենորհիւն Աստուծոյ, Երիտասարդ, աղատեցար, — պատասխանեց
միուսը ժապելով, — իմ սիրական մէտօորս աղատեց ձեզի

— Ենորհակալ ե՞մ, ծերունի :

— Ահաւասիկ, — մատով երկու մահիճներ ցոյց տալով, — ահաւասիկ են
քո սիրած աղջիկը և մի ուրիշ մարդ

— Իմ սիրծ ուշեց, — բացագանչեց Ներսէս այլայլած :

— Այս, այն՝ որ գրկած էիր մի ձեռով և միւսով կը լողայիր :

— Զեմ յիշեր

կոսից մի մաս՝ ամէն տարի, պիտի ուղարկուի Հիւանդանոցի Հոգաբարը ձութեան. կ. Պօլսից, օրիո՞րդ, այս վատին հետ շոգենաւ նստայ, չը ճանաչել կեղծեցի, որպէս զի իմ ձեռօք լուծեմ Մարիի վրէժը. Սորա հետ միասին մահու ծոցն իջայ. . . Մարին այն տեղից կորդեցի. . . այսինքն՝ ձեզ ազատեցի՝ որի մասին ուզում ես ինձ երախտագէտ լինել.

— Այո՛, պատասխանեց Մարի կարմրելով, — ես էլ վափաբուիմ վրէժ լուծել, — յօնքը պաստելով, — նորա դատը իմ դատն է. . . Վատերը պէտք է պատժուին. . .

— Պատրաստ եմ, — մըմուաց Քաւալեան, — պատրաստ եմ՝ պարոն սուսերամարտիկ, քաջ մենամարտիկ. . .

— Եւ ե՛ս, Պ. Քաւալեան, թո՞ղ օրիորդը վկայ լինի. . .

— Ամենայն ուրախութեամբ, — ըսաց Մարի.

— Բայց, սրով չը պիտի զարնեմ քեզ, — աւելցուց ներսէս, — այլ շան պէս սատակեցնեմ, լսո՞ւմ ես.

Քաւալեան միւս կշտին դարձաւ.

ԳԼՈՒԽ ԺԴ.

Կէս օրին՝ հիւրընկալը առատ բուշչ (չօրպա) հիւրասիրեց նաւարեկեալները. կէս ժամ հանդիսատ առնելէ յետոյ՝ երեքն էլ դուրս ելան ճեմուու.

Մարի Պէկեան՝ ներսէսի թեւը մտաւ, Քաւալեան տրտում, մտախոհ քիչ հեռուէն կը քալէր.

Նոցա առաջին զբօսավալը եղաւ ծովեղը՝ ուր ընկլմած էր նոցա նաւը. Տակաւին ծովս ալեկոծ էր. Փշրուած թիակներ, նաւի բեկորներ կը լողալին ալեաց մէջ.

Տեսարանը վեր արտադրեց իրենց մէջ այն իրողութիւնը՝ որին պիտի զոհուէին նոքա.

— Ա՛հ. . . ի՛նչ սոսկալի ժամ էրայն. — ըսած Մարի ժմտագին՝ ներսէսին նայելով, — ես անծանօթ էի ձեզ. . . հեռուէց նայելով համակրում էի ձեզ. . . չէի կարծում թէ երբէք ծանօթանալու բաղդը պիտի ունենայի.

— Այն ժամանակ. . . օրիո՞րդ, — պատասխանեց ներսէս հառաչելով, — ոչ մի բան չէր երեւում իմ աչքին. Ես ուխտել էի, խօսք էի տուել Մարիին. . . ձեզ. . . սպաննել այս վատիկն, այս Պ. Քաւալեանը. Սա Պ.

կոնդ տը Պիւզանի անունով, ծպտեալ ընկերանում էր ինձ, Ես բոլոր ուշադրութեամբ հսկում էի սորան. . . Աւատի՝ շատ դժուար էր ինձ և չորս կողմերս ուշադիր նայելու. Եթէ ձեզ տեսած լինէի. . .

— Պարո՞ն, — միջամտեց Քաւալեան, — կան վայրկեաններ, յորում մարդը փոխանակ բորբոքելու, սառն արեան Խոլանտացի կը դառնայ, փոխանակ սոսիի ձեռքէն, արդարութիւն ըսուած բանէն ճողովրելու, անվեճեր կիտորսի պէս մահուան դիմադրաւ կանդնիլ կուխտէ. Զեր ըրած անիրաւ անարդ անաց կը լուեմ՝ սպասելով յարմար վայրկեանին.

— Ասացէ՞ք ինդ-բեմ. . . ձեզ արհամարհնելու իրաւունք չունի՞մ.

— Ամենեւի՞ն.

— Ունիշեանեւ՝ դառնացուցիք հօրս մահը, ինձ նորա միջոցով հեռացրիք սիրոյ էր էւլիւ, կործանեցիք Դասպարեան ընտանիքը. . . Սպաննեցիք նոցա պատիւը և նշանածն. . .

— Եթէ հեռացուցած լինէի ձեզ, ձեր սիրոյ էր էւլիւ. . . այժմ այս տեղ չը պիտի լինէիք.

— Սխալում էք, պարոն. . . իմ հօրս կամքը, մահուան առաջ արտասանած խօսքը՝ ինձ համար նուիրական էին. Այո՛, ես Մարիի հետ չը պիտի ամուսնանայի. . . բայց պիտի փրկէի նորա կեանքը. . . պիտի ջանալի յեղաշրջել սիրտը, միօք իրողութիւնը իմացնելով պսակել ուրիշիք հետ.

— Երբ այդպէս է, աւելի ծառայած եմ ձեզ. . .

— Այո՛, սրտիս լարերը կորեցիք, Մարի ն սպաննեցիք.

— Սպաննեցի անպատիւը՝ պատուաւորը ձեզ տալով. . .

Մարի զգաց ինչ ասել կամելը, կարմրեցաւ.

— Են ընկալալ չէ՞ք այսպիսի սիրական ստանալէ.

— Չափաւորի խօսքդ, վատիկ.

— Պարզ բան է, պարո՞ն, դուք նորա կեանքը ազատեցիք. . . պիտի զլանայ ուրեմն ձեզ. հետ ամուսնանալը.

— Այդ ձեզ չէ վերաբերվում, — դոչեց Մարի:

ներսէս շուրջ նայեց. հեռացած էին քաղաքէն, ո՛չ մի մարդ չէր երեւեր, ժամանակը հասած կարծելով ըսաց.

— Պարո՞ն, մեր վէճը պիտի վերջանայ. . .

— Ունի՞ք գէնք. . .

— Ո՛չ. . . չեմ ուզում ձեզ զէնքով սպաննել: Պատրաստուիք.

— Պատրաստ եմ. . .

ներսէս արծուի արագութեամբ սլացաւ դէպի վատը.

Պաքով երկու ուժգին հարուած տուեց սրունդներուն և կռուփով զարկեց կրծքին: Քաւալեան դողդողաց, բայց դիմադրեց ցաւին՝ պատրաստուելով հարուածելու, մինչդեռ ներսէս եկրողդ կռուփին կիշեցընէր աչքին:

Այս հարուածը տապալեց նորան, Քաւալեան ընկաւ ունալով, սոսիը մի քար խլեց և ուժգնապէս զարկեց գանկին, փոքր ուզեղին. Քաւալեան յերերաց՝ մրմռալով.

— Վա՛տ. . . վա՛տ. . .

— Ձեզ պէս վատին հետ վատ լինելու է, — սրոտաց ներսէս մի ուրիշ քար եւս զարնելով, — քեզ պէտք է շան պէս սատակեցնել. ոչ թէ մենա-

մարտի փառքին արժանացնել:

—Մեռա՛ւ, —սոսկումով աղաղակեց Մարի:

—Պէտք է մեռնիր, —պատասխանեց Ներսէս:

Արդարեւ մեռած էր Քաւալեան, Գլուխը ջախջախուած, ուղեղը ծըթ-
րած իւղի պէս ժայթքել էր քարերուն վրաւ. Ներսէս նորա ծոցերը դը-
պաները խուզարկեց. Ըստիր պահարաններով պատսպարուած և ծրաբներ
դուրս ելան, որոց մէջ չէր կարող ջուր մտնել և արդէն թրջուած չէին իւր
ծովս ընկած ժամանակ:

Ներսէս սպաննելոյն դին քաշելով տուեց ծովին. Զայրացած ալիք յա-
փշտակելով տարան...

Նոքա վերադառան դէպի քաղաք. Մարի կը դողար տարբեր զդա-
ցումներով յուղուած:

Բացին ծրաբները. Մին՝ կեղծ նամակներու դէղ էր. Մին՝ իւր և Տ.
Գասպարեանի նամակն էր. Երրորդը՝ 2,125,000 ըուպ. Հարստութիւն
էր. Իսկ վերջինը իւր լիշտակարանն էր.

Ներսէս սոսկումով կարդաց նորա լիշտակարանի էջերը, մթին կէտե-
րը լուսաբանուեցան. Գտաւ միլիոնաւոր հարստութեան աղբիւրը. Բա-
գուկի հրդեհին բուն հեղինակը, ո՞ր նոյն ինքն Քաւալեանն էր:

—Հրեշ էր սա. . . —մրմռաց Ներսէս.

—Այո՛, հրեշ էր, —պատասխանեց Մարի, —ես ցաւում էի դորա ըս-
պաննուելուն, բայց . . . այժմ գովում եմ քեզ.

—Ա'հ . . . այս ի՞նչ է, օրիո՞րդ:

—Ի՞նչ կալ . . .

—Իւր լիշտակարանի մէջ ձեր մասին եւս դրած է:

—Ի՞նչ էք ասում . . . իմ մասի՞ն:

—Ահաւասի՛կ, տեսէ՛ք . . . —Ներսէս հետեւեալը կարդաց.

«Այսօր օրերս մեռաւ ի կ. Պոլիս նոր-Նախիճեւանցի հարուստ վա-

ճառական և Ասպետ Պ. Գալուստ Պէկեան, իւր միակ դստեր թողեց փա-

ռաւոր գումար մը:

«Նատ ջանացի տեսնել զՄարի, այս է նորա անունը, բայց չը յաջողե-

ցալ. . . Որոշեցի բուռն զօրութեամբ հետամուտ ըլլալ և ամուսնանալ

նորա հետ . . . »

—Ահաւասիկ այս վատի ճանապարհորդութեան բուն շարժառիթը, —

ըսաց Ներսէս ընթերցումը աւարտելով, —ինչպէս երեւում է, Մարի,

ձեղ համար էր գալիս . . .

—Երեւի թէ . . . բայց ես նորան չէի ճանաչում:

—Ձեր բարեկամներից լսած կը լինի.

—Կարելի է:

Մի քանի ըոպէ լւին երթալէ յետոյ,

—Օրիո՞րդ, —ըսաց Ներսէս, —այս դէպքը պէտք է միայն դուք դի-
նաք, մինչեւ ի մահ ուրիշի չը պատմէք:

—Երդնում եմ լուութիւն պահել . . .

—Նոյն իսկ ամուսինիդ մօտ . . . երբ որ ամուսնանաս . . .

—Այո՛, այդ մասին խօսք կըտամ . . .

—Վատահ եմ ձեր խօքին . . . անոր դժուակ առ և այս ամսանամա բանի
վերստին լուութիւն տիրեց և մինչեւ հիւրընկալի տունը լուին գնա-
ցին:

Ներսէս բոլոր սրտով յարեցաւ Մարիին. Որովհետեւ նոր մէկը չէր ի-
րեն համար: Ոչ մի բանով չէր տարբերեր դժբաղդ Մարի Գասպարեանէն: Եթէ նոյն իսկ պէլ տեսնէր, պիտի կարծէր թէ իւր Մարին էր . . . յա-
րութիւն առած: Ուստի ոչինչ աարբերութիւն չունենալով օրիորդ Պէկ-
եան, վարատել էր Ներսէսի ցաւը, և տիրել նորա սրտին. բայց Ներսէս
շգիսէր՝ թէ Մարի եւս կը սիրէ՞ր իրեն:

Երեկոյեան ընթրիքէն յետոյ, Ներսէս խօրհրդաւոր ժպիտով:

—Ուրեմն, —հարցուց, —վաղը նախիեւա՞ն պիտի երթաք . . .

—Այո՛ . . . հարստութիւնս յանձնեցի սեղանաւորին, կերթամ նախի-
ցեւան այն տեղի դործերը եւս վերջացնելու:

—Ով է ձեր ինամակալը . . .

—Ե՞ս ինքս, ինամակալ չունիմ . . .

—Ուրեմն . . . բոլորովին աղատ էք . . .

—Այո՛ . . . ես եմ իմ ուրիշ . . . իսկ դուք . . .

—Ես էլ ձեղ պէս ազատ եմ, հայր չունիմ . . . աղգական չունիմ, հա-
րուստ եմ . . . թշուառ եմ.

—Մարիի պատճառաւ:

—Այո՛ . . . Մինչեւ հիմայ շատ տխուր էի, բայց այժմ՝ ոչ այնքան:
Դուք մի վարկեան վարատեցիք իմ վիշտերը . . . նորան էք նմանում. ոչ
մի բանով կարելի չէ ձեղ և նոր ան միմիանցից տարբերել:

Մարի կարմրեցաւ:

—Այո՛, միեւնոյն պատկերը, բնաւորութիւնը ունիք . . .

—Գուցէ . . . —մրմնից Մարի, —նա երջանիկ պիտի լինէր.

—Դժբաղդաբար մահը շուտ հասաւ . . . Մեռած ըոպէին ասաց ինձ:
«Ներսէս . . . ինձ նմանողը սիրէ՛» և իս չէի յուսալ նորա նմանը տեսնել
և գտնել . . . ձեղ գտայ այժմ, օրիո՞րդ . . .

—Ըմբռնում եմ միտքդ՝ սիրելի՛ բարեկամ, դուք իմ կեանքը փըր-
կեցիք մահուանից . . . մահի աւարը ուզում էք իւրացնել.

—Գիտէ՞ք, օրիո՞րդ, չեմ կարող այժմ ես ինձ հաւատացնել՝ թէ իմ
սիրած Մարին մեռած է . . . թէ դուք մի ուրիշ Մարի էք . . .

—Ուրեմն . . . պարո՞ն . . .

—Ուրեմն ի՞նչ, օրիորդ, գուցէ միտքս ձեղ պարզեցի կիսովին:

—Խնդրեմ, պարզ խօսեցէք, ես յարդում եմ ձեղ, և . . . դուք իմ
կեանքը փրկեցիք երկու անգամ . . . նախ ծովից, ապա այն վատից . . .
ես երախտապարտ եմ ձեղ՝ պարո՞ն և աւելի . . .

—Ո՞չ . . . Մարի, դու նոյն Մարին ես:

—Այո՛, սիրելի Ներսէս, ես նոյն Մարին եմ. . . Սիրտս ազատ էր,
ոչ ոքի չէր պատկանում . . . նոգենաւի մէջ հեռաւից նայում էի քեզ . . .

խօստավանիմ ուզիդը . . . նայում էի . . . չէի տեսած քեզ պէս վայելուչ,
ազնիւ տղամարդ. Երբ մահը մօտեցաւ, իւր բերանը բացեց ոտներուս
տակ, քո ծնկերին պլլուեցայ, դու աղատեցիք ինձ. Այս օրերը քեզ հետ

ի մօտոյ տեսնուելով եւս աւելի բազմապատկեցաւ համակրութիւնս. . .
Երախտագիտութիւնը իմ մէջ ծնում է ուրիշ. աւելի բարձր գդացում-
ներ . . . ,

Ներսէս անհօւն ուրախութեամբ ապշած կը լսէր.

Մարի վերին աստիճանի հրապուրով կը խօսէր. Երիտասարդը յա-
փշտակուած կոչեց.

— Գոնէ՛ ասա, պատմէ՛, թէ ինչպէ՞ս ելար գերեզմանից . . .

— Եատ պարզ միջոցով, մահուան ծոցը իջար, ինձ կորզեցիր.

— Ուրեմն՝ ինչ ո՞ր Մարին էր ինձի համար՝ պիտի լինի՞ս և դու:

— Բոլորովի՛ն . . . ում կարող եմ վսահիլ ու տալ ցաւած սիրոս.

— Պաշտելի՛ աղջիկ . . . լրացաւ ճակարտագրիս չարաբաստ էջը. լրացաւ
ըրազդիս խաղը

Երկու ամիս յետոյ Պ. և Տ. Սահառունի, այսինքն Մարի Պէկեան և
Ներսէս, կը մտնէին Ա. Փրկչի Հիւանդանոցի որբանոցի բաժինը.

Ստեփանիկ կը խաղար մանուկների հետ. Երբ զ'յդ ամոները ներս
մտան մանուկը թողեց իւր խաղը.

— Մայի՛, մայի՛, — աղաղակելով տիկնո՞ց վիզը պլուեցաւ:

— Սիրելի՛ Ստեփանիկո, — մըմնջեց տիկինը լուղումէն վղձկելով.

Այր ու կին իրար ձեռքէ խլելով որբիկը գդուեցին և իրենց հեռա-
ռած գուրս ելան.

Յիմարանոցի բակը կը ճեմէին մի քանի խենթեր, որը ամպերուն հեռ
խօսելով, որը երեւակայական անձանց հետ կոռուելով.

Մի անկիւն շարուած էին ատանի չափ ապուչներ, թիապարտի պէ-
միատեսակ սպիտակ համազգեստով, գլուխները, բբեխները, մօրուքները
ածիլուած կապիկ կը նմանէին խեղճերը. նոցա մէջն էր և պէյը.

Նա ոչնչով չէր տարբերուիլ չքաւոր ապուշէն.

Երբ հեռուեն նշարեց ներսէ՞ոը, Մարին և Ստեփանիկը, ցնցուեցաւ . . .

շուրջ նայեց ու վաղեց.

— Հայր ի՛մ, — կոչեց տիկինը դէպի նա յառաջանալով:

— Պա պա՛, — աղաղակեց Ստեփանիկ.

Ներսէս ժպտելով մի կողմ կանգնեցաւ. Պէյը իւր կարծած աղջիկայ
գիրկն ընկաւ, ի զարմանս շըջապատողաց . . .

— Մարի՛ . . . ո՞հ . . . օրէնեալ ե՞ս, Աստուած, — այս եղաւ յիմարի ա-
ռաջին խօսքը, առաջին հեծեծագին աղաղակը.

— Այո՛, հայր ի՛մ, օրէնեալ է Աստուած, կենդանի եմ ես . . .

Մի քանի վարդկեան Մարին, Ստեփանիկը գդուելէ յետոյ, պէյը լըր-
ջօրէն չորս կողմը նայեց և զարմանալով հարցուց ներսէսին.

— Հո՞ ի՞նչ կընենք . . . ի՞նչ զործ ունինք . . . ո՞ւր ե՞նք . . .

— Երթա՞նք, — ըսաց ներսէս թմն առնելով պէյը:

— Երթա՞նք . . .

Միասին գուրս ելան.

17372

2013

